ԱԶԴԱԿ
ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE أزتاك جريدة يومية سياسية وأدبية - الدورة المسؤولة - إيثا درويشيان

1500 Լ.Ո. 72ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 206 (20072) ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 9 ՆՈՅԵՄԲԵՐ 1998 10 ԷՋ

ՌՈՒՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ 81ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

ԵԼՑԻՆ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐԸ

Նախագահ Պորիս Ելցին, որ երէկ Սոչիէն Մոսկուա վերադարձաւ, Շաբաթ օր իր ժողովրդավարական բարեկարգումները պաշպանեց ռուսական յեղափոխութեան 81րդ տարեդարձին առիթով յայտարարելով, որ նոյնիսկ իր համայնավար ընդդիմադիրները վերջ տուած են իրենց վայրագ անցեալին:

Մինչ այդ, քանի մը հազար հոգի միայն խմբուեցան կարմիր դրօշակին ներքեւ նշելու համար յեղափոխութեան տարեդարձը:

Համայնավար ղեկավար Կենատի Զիուկանով իր հետեւորդներուն յայտնեց, թէ խորհրդարանին մէջ արագ քայլերու պիտի դիմէ նախագահը պաշտօնէն հեռացնելու համար:

Ռուսիա կը շարունակէ ուտեստեղէնի տագնապի մղձաւանջը ապրիլ: Անիկա կ'ըսէ, թէ իր անդանիւթի պաշարը հազիւ երկու շաբթուան բաւարար է:

(ՌՈՅԹԵՐՋ)

ՆԱԽԱԳԱՀ ՀԸԲԱՈՒԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀՐԱՒԷՐՈՎ ԴԱՄԱՍԿՈՍ ԱՅՑԵԼԵՑ

Սուրիոյ նախագահ Հաֆէզ Ասատի հրաւէրին ընդառաջելով, նախագահ Էլիաս Հրբաուի եւ իր կինը երէկ այցելեցին Դամասկոս, ուր եղան նախագահ Հաֆէզ Ասատի տուած ճաշկերոյթին պատուոյ հիւրերը:

Սուրիոյ նախագահութեան բանբեր Ժրպրան Քուրիէ յայտարարեց, որ նախագահները ունեցած են հանդիպում մը, որուն ընթացքին քննարկուած են երկու երկիրները հետաքրքրող հարցեր: Նախագահ Ասատ դրրուատեց Հրբաուիի ապգային դերը, կոր ան ունեցաւ անցեալ ինը տարիներուն եւ բարձր գնահատեց այդ դերը, ինչպէս նաեւ՝ Լիբանանի եւ անոր միութեան ու անկախութեան համար անոր տուած արի որոշումներն ու կեցուածքները:

Քուրիէ նաեւ ըսաւ, որ նախագահները գոհունակութիւն յայտնած են անցեալ ինը տարիներուն ընթացքին կատարուած իրագործումներուն եւ արաբական ու միջապգային ընտանիքէն ներս Լիբանանի դերակատարութեան աշխուժացման համար:

Հրբաուի իր կարգին գնահատեց Լիբանանի գերիշխանութեան եւ հողային ամբողջականութեան համար նախագահ Հաֆէզ Ասատի ճիգերը՝ ընդգծելով, որ պէտք է շարունակուի երկու երկիրներու գործակցութիւնը՝ ի շահ երկուքին:

ՆԵԹԱՆԻԱՀՈՒ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԿԻՐԱՐԿԵԼ ԺԱՄԱՆԱԿ ՇԱՀԵԼՈՒ ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԱՒ ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԺԻՀԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Իսրայէլի պաշտպանութեան նախարար Իցհաք Մորտեխայ երէկ նախատեսեց, որ կառավարութիւնը այս շաբթուան մէջ վաւերացնէ պաղեստինցիներուն հետ ստորագրուած խաղաղութեան համաձայնագիրը:

Վարչապետ Պենիամին Նեթանիահու չորս անգամ առկախեց կառավարութեան նիստը, որ պիտի վաւերացնէր համաձայնագիրը: Վերջին առկախումը տեղի ունեցաւ Ուրբաթ օր, Երուսաղէմի մէջ կատարուած անձնասպանական գործողութեան մը լոյսին տակ: Մորտեխայ հաւատաց, որ այս շաբթուան մէջ կարելի պիտի ըլլայ ապահովել պահանջուած մեծամասնութիւնը՝ վաւերացնելու համար Ուայ Փլէնթէյշընի համաձայնագիրը:

Միացեալ Նահանգներ, որոնք հովանաւորած էին Ուայ Փլէնթէյշընի գերաստիճանն ու պնդր իբրեւ արդիւնք ստորագրուած համաձայնագիրը, ճնշում կը բանեցնեն Նեթանիահուի վրայ, որ վաւերացնէ զայն: Արտաքին գործոց նախարար Մատլէյն Օլպրայթ դիտել տուաւ, որ անհրաժեշտ է արագօրէն վաւերացնել եւ գործադրութեան դնել համաձայնագիրը:

Քաղաքական կարգ մը աղբիւրներ դիտել տուին, որ Իսրայէլի կառավարութիւնը առկախուած նիստը կը վերսկսի Չորեքշաբթի օր շարունակել, եթէ Եասէր Արաֆաթի իշխանութիւնը արշաւի մը ձեռնարկէ իսլամական վինեալներուն դէմ եւ Պաղեստինի Ապգային Խորհուրդի 700 անդամները պէսկի Ուիսթի կարգ մը յօդուածները ջնջեն:

Նեթանիահու Շաբաթ գիշեր յայտարարեց, որ Իսրայէլ պիտի պահանջէ համաձայնագիրին մէջ նշուած պայմաններուն գործադրութիւնը պաղեստինեան իշխանութեան կողմէ: Նեթանիահու շեշտեց, որ Իսրայէլ ստորագրուած համաձայնագիրէն

Շար.բ՝ էջ 10

ՔԼԻՆԹՈՆԸ ԿԸ ԳՏՆՈՒԻ ՈՐՊԵՍԶԻ ՏԱԼՈՒ ԴԺՈՒԱՐՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ

ՈՒԱՇԻՆԿԹՈՆԸ ԿԸ ՔՆՆԱՐԿԷ ԻՐԱՔ - *ՄԱԿ* ՏԱԳՆԱՊԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՏԱՐԲԵՐ ԸՆՏՐԱՆՔՆԵՐ

Բրիտանացի եւ իրլանտացի խումբ մը երեսփոխաններ երէկ Պաղտատի մէջ տեսակցութիւն ունեցան փոխ վարչապետ Թարեք Ազիզի հետ, արժեւորելու համար ՄԱԿի պատժամիջոցներուն ապդեցութիւնը երկրին վրայ:

ԻՆԱ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Ազիզ ողջունած է երեսփոխաններուն այցելութիւնը եւ դրուատած ի նպաստ Իրաքի որդեգրած անոնց կեցուածքը: ԻՆԱ հաղորդեց նաեւ, որ Ազիզ պատուիրակութեան կեկուցած է Իրաք - ՄԱԿ կապերուն մասին:

Շար.բ՝ էջ 10

ԱԼԲԵՐԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ԵՒ ՅՈՒՅՍԱՐԱՐՆԵՐ ՕԵՕԻ Կ'ԵՆԹԱՐԿՈՒԻՆ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՄԷՋ

Ագրպէյճանի մէջ ընդդիմադիր երկու կուսակցութիւններու ղեկավարներ երէկ ոստիկանութեան ներկայութեան ծեծի ենթարկուած են անծանօթ մարդոց կողմէ՝ արտօնուած հաւաքի մը ընթացքին՝ նախագահ Հայտար Ալիեւի ընտրական վերջին յաղթանակին դէմ բողոքելու համար:

Երկու օրուան մէջ երկրորդ անգամ բլայով կր, որ վայրագ բախումներ կր յաջորդէին Ալիեւի Հոկտեմբեր 11ի վերընտրութեան դէմ բողոքի ցոյցերու:

«Ռոյթըրզ»ի մէկ թղթակիցը ըսած է, թէ քաղաքային տարագով շուրջ 30 ուժեղ մարդիկ, որոնց մօտ գէնք տեսանելի չէր, ծեծած եւ ուժգին հարուածած են ընդդիմադիր քաղաքական անձնաւորութիւնները, մինչ Պարտէի մէջ հաւաքը իր աւարտին կր հասնէր: Զինեալ ոստիկանները ականատես եղած են դէպքին, սակայն չեն միջամտած:

Շար.բ՝ էջ 10

ՄՈՆՔ ՊԱՐՋԱՆԻ ԵՒ ԹԱԼԱՊԱՆԻ ՀՂՈՒԱՐՅԻ ՄԷՋ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ Կ'ՈՒՆԵՆԱՆ

ԹՈՒՐՔԻԱ ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԸ ԿԸ ՁԵՌՆԱՐԿԷ *ՔԱԿԻ ԴԷՄ*

Մինչ Իրաքի քիւրտերու ղեկավարներ Մասուտ Պարզանի եւ Ժալալ Թալապանի երէկ բանակցութիւններու համար Անգարա կը գտնուէին, Թուրքիա կը յայտարարէր, թէ հիւսիսային Իրաք ուժեր ղրկած է Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան զինեալները հետապնդելով:

«Հիւսիսային Իրաքի մէջ գործողութեան նպատակը Սուրիայէն իոյս տուած անջատողական կազմակերպութեան անդամները քանդել է», ըսաւ պաշտպանութեան նախարար Համէթ Սեզկին Պուլկարիա այցելութեան մը ընթացքին:

Անցեալ ամիս Սուրիա յայտնապէս ենթարկուելով թրքական ճնշումներուն որոշած էր չարտօնել ՔԱԿի, որ Սուրիան իբրեւ կեդրոն գործածէ իր զինեալ պայքարին:

Թրքական օրաթերթերը երէկ հաղորդած էին, թէ թրքական ուժերը օդուժի եւ տեղւոյն զինեալներու օժանդակութեամբ կը հետապնդեն ՔԱԿի անդամները:

Թրքական ուժերը կիսամեայուն ներկայութիւն ունին հիւսիսային Իրաքի լեռներուն մէջ: Շրջանը 1991էն ի վեր Պաղտատինակակշիռնիներթակայէ:

Մինչ այդ, Պարզանի եւ Թալապանի Անգարայի մէջ կը քննարկեին անցեալ ամիս Ուաշինկթընի մէջ կնքուած խաղաղութեան համաձայնագիրը, որուն նպատակն էր վերջ տալ իրենց ուժերուն միջեւ տարիներու բախումներուն:

Երկու դեկավարները խոստացած են, թէ պիտի արգիլեն ՔԱԿին իր զինեալ պայքարին իբրեւ կեդրոն գործածելու հիւսիսային Իրաքը:

Անոնք շեշտած են կարեւորութիւնը միասնաբար գործելու հիւսիսային Իրաքի մէջ խաղաղութիւն եւ կայունութիւն հաստատելու համար:

(ՌՈՅԹԵՐՋ)

ԹՈՒՐՔԻԱ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՕՃԱԼԱՆԸ ՅՈՒՆԱՍՏԱՆ ՀՐԱՒԻՐԵԼՈՒ ԿՈՂՁԸ

Թուրքիա Ուրբաթ օր դատապարտեց յոյն երեսփոխաններու կողմէ քիւրտ դեկավար Ապտիւլլա Օճալանի ուղղուած հրաւէրը՝ Յունաստան այցելելու համար, եւ կոչ ուղղեց Աթէնքի կառավարութեան, որ գօրավիգ չկանգնի այդ քայլին:

Հինգշաբթի օր, 109 երեսփոխաններ՝ խորհրդարանի անդամներուն աւելի քան մէկ-երրորդը, հրաւէր մը ուղղած էին Օճալանի, գայն «աշխարհի ամէնէն ճնշուած ժողովուրդին դեկավար» կոչելով:

«Յունաստանի կառավարութիւնը յստակ պէտք է դարձնէ, թէ կ'ընդդիմանայ նման հրաւէրի մը համաձայն միջազգային օրէնքներու անոր պարտադրած քայլերուն», ըսաւ արտաքին գործոց նախարարութեան մէկ հաղորդագրութիւնը:

Թուրքիա կ'ըսէ, թէ Օճալան Սուրիայէն Ռուսիա ապաստանած է: Մոսկուա կր յայտնէ, թէ իր հողամասերուն վրայ անոր հետքը չէ գտած:

Պետական Տուման անցեալ չարաթ ջախջախիչ մեծամասնութեամբ գօրակցութիւն արտայայտած կր Օճալանի Ռուսիոյ կողմէ ընդունման: Երկրին կարդ պատասխան չէ տուած այս գծով:

(ՌՈՅԹԵՐՋ)

126 ՊԱՏԱՆԻՆԵՐ ԿԱՏԱՐԵՑԻՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԻ ԻՐԵՆՑ ԵՐԴՈՒՄԸ

Կիրակի, 8 Նոյեմբեր 1998, կէսօրէ ետք ժամը 3:30ին, Սարգարապատ ակումբին մէջ, դաշնակցական 126 պատանիներ կատարեցին դաշնակցականի իրենց ուսիրական խոստումը եւ կոչուեցան «Ակնախութեան Սերունդ»:

Հանդիսութիւնը սկսաւ *«Մշակ Բանուոր»* քայլերգով, որմէ ետք օրուան պատգամախօս Նազելի Խաչերեան իր խօսքով նշեց դաշնակցական պատանիի յատկանիշները եւ անոր ստանձնած առաքելութիւնն ու յաւելեալ յանձնառութիւնը:

Նազելի Խաչերեանի խօսքէն ետք, բեմ հրաւիրուեցան օրուան կնքահայրը՝ Յովիկ Պերթիզլեան եւ 126 պատանիներ:

Կնքահայրը իր խօսքով շեշտեց Հայաստանի անկախութեան գաղափարին արժէքը, որուն երազով ապրեցան սերունդներ. այդ երազը իրականացած է այսօր: Ապա թուեց դաշնակցական պատանիին իր գործին հանդէպ ցուցաբերած հաւատքն ու ըմկերասիրութիւնը՝ յուսալով, որ նոյն ազնիւ ոգին պագայիի իր դաշնակցականի երդումը կատարէ, ինչու չէ հայկական բռնագրաւեալ հողերուն վրայ:

Հանդիսութենէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ՅԱՐԴԱՐԵՑԷՔ ԶԵՐ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆՏՐԵԼՈՎ ԼԱՒԱԳՈՅՆ ԳՈՐԳԵՐԸ ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ԳԻՆԵՐՈՎ

Պարսկական ձեռագործ գորգեր ՊԱԼԼՈՒՇ, 135,000 Լ. ՈՍԿԻԷՆ սկսեալ, ՂՈՒՇԱՆ, 265,000 լ.ոսկիէն սկսեալ:

ՉԻՆԱԿԱՆ գորգեր, 100% բուրդ, քառ. մեթրը՝ 60,000 Լ. ՈՍԿԻԷՆ սկսեալ:

Գործարանային արտադրութիւն քառ. մեթրը 19,000 Լ. ՈՍԿԻԷՆ սկսեալ:

ՄՈՔԷԹ, քառ. մեթրը 4,500 Լ. ՈՍԿԻԷՆ սկսեալ, ՏԵՂԱԴՐՈՒՄԸ ՁՐԻ:

Վաճառատունը բաց է Կիրակի ամբողջ օրը:

tapirama

10 ԱՄՍՈՒԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐ ԱՌԱՆՑ ՏՈԿՈՍԻ

Պատարօ 01-382772, Պուրճ Համուտ 01-265625, Անթիլիաս 04-403173, Սարպա 09-636920, Թրիփոլի 06-441248:

PLAN MedNet

- Յարմարագոյն գիներ
- Լաւագոյն պայմաններ
- Վճարման դիւրութիւններ

EXPRESS INSURANCE COMPANY

Մանրամասնութեանց համար դիմել 01-250999 թիւին, Տորա, Սանթըր Տտրեեան, 2րդ յարկ

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐՒՐԻ ՖՐԱՆՍԱՅԷՆ ԱՆՑԱՒ ԵԳԻՊՏՈՍ

Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաք Շարաթ օր ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի այցելութիւնը եւ անոր հետ քննարկեց միջազգային եւ շրջանային զարգացումներն ու յատկապէս Ուայ Փլէնթէյշըրնի համաձայնագիրը եւ երկկողմանի յարաբերութիւնները։


Շիրաք յայտարարեց, որ հանդիպումին ընթացքին արծարծուած են երկու կողմերը հետաքրքրող բոլոր հարցերը եւ յոյս յայտնեց, որ պաղեստինեւիսրայէլեան վերջին համաձայնագիրը կը յաջողի եւ կը հանդիսանայ ճիշդ ուղղութեամբ քայլ մը։ Ան նաեւ հաստատեց, որ լիբանանեան ու սուրիական առանցքներուն վիճակը կը մնայ անփոփոխ։

Ֆրանսայի նախագահը նաեւ ընդգծեց Լիբանանի եւ Ֆրանսայի միջեւ հին ու խորունկ արմատներ ունեցող գործակցութիւնը։

Շիրաքի մօտիկ աղբիւրներ այս առիթով յայտնեցին, որ «գօր. Էմիլ Լահուտի նախագահ ընտրութիւնը Ֆրանսայի համար ուրախանակնկալ մրն էր», եւ Շիրաք պնդած է, որ նորընտիր նախագահը իր պաշտօնը ստանձնելէ եւ նոր կառավարութիւնը կազմելէ ետք, Ֆրանսա պիտի այցելէ։

Վարչապետ Հարիրի յայտարարեց, որ Ֆրանսա գօրավիգ կը կանգնի պաղեստինեւիսրայէլեան համաձայնագիրին, բայց Լիբանան ունի տարբեր կեցուածք մը։ «Մենք միջամուխ չենք ըլլար պաղեստինեան հարցերուն, բայց կը կարծենք որ առանձնակի լուծումները չեն տարբաղձալի արդիւնքը, այնուհանդերձ պաղեստինցիներուն մասին խօսելով ես միշտ կրճտոթեմ, որ Աստուած անոնց օգնէ»։

Հարիրի նաեւ հաստատեց, որ լիբանանեան ու սուրիական առանցքներուն վրայ բանակցութիւններ վերակենդանացնելու նախանշաններ չկան տակաւին։



Վարչապետ Հարիրի դուրս կու գայ Էլիզէի պալատէն

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Վարչապետ Հարիրի նախագահ Շիրաքի հետ տեսակցելէ ետք, երէկ հասաւ Գահիրէ, ուր Ջորեքշարթի օր պիտի տեսակցի նախագահ Հիւսնի Մուպարաքի եւ բարձրաստիճան պաշտօնատարներու հետ։ Հանդիպումներուն ընթացքին պիտի քննարկուին Ուայ Փլէնթէյշըրնի ստորագրութեան յոյսին տակ միջարաբական գործակցութեան, լիբանանեան ու սուրիական ճակատներու վրայ բանակցութիւններու սառած վիճակը, ինչպէս նաեւ հարաւային Լիբանանի վրայ իսրայէլեան կառավարութեան կեցուածքին մասին։

Նախապէս Լիբանանի վարչապետը յայտնած էր, որ իսրայէլեան զօրքերու նահանջային մասնահիւղերը երէկ գուռարեցինն ներկայացուցչական ընդհանուր ժողովներ, որոնց ընթացքին որդեգրեցին երկրորդականի ուսուցիչներու լիկայի եւ նախակրթարանի ուսուցիչներու կեդրոնական ներկայացուցիչներու խորհուրդի գործադուլին ու նատացոյցին վերաբերող առաջարկները։

Պետական ուսուցիչները կը պահանջեն վերատեսութեան ենթարկել պետական պաշտօնեաներու աւագականներու եւ աստիճաններու ցուցակը այնպէս ալ, որ վկայեալ ուսուցիչները ստանան համապատասխան աստիճան եւ յաւելում, իսկ բարձր վկայականներու տէր կամ դպրոցի տնօրէն նշանակուած ուսուցիչները ստանան հատուցումներ եւ ստեղծուի ուսուցիչներու վօրակցութեան անստուկ մը։

Միւս կողմէ, կրթութեան նախարար Ժան Օպէյտ շաբաթավերջին Թըրպոլի իր բնակարանին մէջ բազմաթիւ տեսակցութիւններ ունեցաւ կրթական պատասխանատուներուն հետ։

ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ԱՅՍՕՐ ԿԸ ԴԻՄԵՆ ԲԱՑ ԳՈՐԾԱԴՈՒԼԻ

Պետական վարժարաններու ուսուցիչները այսօր կը ակսին բաց գործադուլ մը եւ խորհրդարանի յաջորդ նիստէն ակեալ նատացոյցեր պիտի կատարեն անոր շէնքին առջեւ, մինչեւ որ վաւերացուին իրենց պահանջներուն վերաբերող օրինագիծերը։

Պետական ուսուցիչներու նահանգային մասնաճիւղերը երէկ գումարեցին ներկայացուցչական ընդհանուր ժողովներ, որոնց ընթացքին որդեգրեցին երկրորդականի ուսուցիչներու լիկայի եւ նախակրթարանի ուսուցիչներու կեդրոնական ներկայացուցիչներու խորհուրդի գործադուլին ու նատացոյցին վերաբերող առաջարկները։

Պետական ուսուցիչները կը պահանջեն վերատեսութեան ենթարկել պետական պաշտօնեաներու աւագականներու եւ աստիճաններու ցուցակը

ԲԱԽՏԱԻՈՐՈՒԱԾ

Տէր եւ տիկին
Արա եւ Ժանէթ
Հէյպէլեան

բախտաւորուած են
աղջիկ զաւակով մը՝

ՔՐԻՍԹԻՆԱ

2 Նոյեմբեր 1998։

ԾԱԽՈՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ (ԽԼՈՒՅՈՎ)

• Պուրճ Համուտ. Մարաշ թաղի սկիզբը։ Հեռ. 01-560980 եւ 03337514։

ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆՆ ՆՊԱՍՏԱԿՈՎ. ՄԵԿ ՈՒ ԿԷՍ ԱՄՈՒՍԱՆ ՀԱՄԱՐ

ՏՈՐԱՅԷՆ Պ. ՀԱՄՈՒՏ ՄԱՅՐՈՒՂԻԻՆ ՄԷԿ ՄԱՍԸ ՊԻՏԻ ՓԱԿՈՒԻ ԱՅՍՕՐ

Ներքին գործոց նախարարութեան երթեւեկի հարցերու յանձնախումբը երէկ հաղորդագրութեամբ մը քաղաքացիներուն ուշադրութեան յանձնեց, որ Երկուշաբթի, 9/11/1998ին, կէսօրէ առաջ ժամը 11էն սկսեալ պիտի փակուի Տորայի մայրուղիին մէկ մասը։

Հաղորդագրութիւնը բացատրեց, որ կոյուղիներու ցանցի զետեղման համար պիտի փակուի արեւմտեան ճամբուն մէկ մասը՝ Զուկի շուկայի փողոցին մուտքէն մինչեւ Սաւթր Տեմիրճեանի փողոցը, մէկ ու կէս ամսուան համար։ Երթեւեկին մէկ մասը Տորայի կամուրջին մերձակայ պենզինի կայարանի փողոցով պիտի անցնի ծովային ճամբայ, մայրուղի վերադառնալու Սաւթըր Տեմիրճեանի փողոցով։

Հաղորդագրութիւնը քաղաքացիներէն խնդրեց յարգել հոն զետեղուած ուղեցոյցներն ու ներքին ապահովութեան ուժերու ցուցմունքները։

ՊԷՏՔ ՉԷ ԱՆԱՐԴԱՐ ԸԼԼԱԼ ՆԱԽԱԳԱՀ ՀԷԼԻՈՒԻԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐՈՒՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ՅՈՂՈՎՐԴԱՐԵՐԸ ՆԱԽԿԻՆԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԵԼԻՄ ՀՐՈՍ

Նախկին վարչապետ Սելիմ Հրոս հաստատեց, որ նորընտիր նախագահ Էմիլ Լահուտ իսկական բարեփոխութիւն իրագործելու յատկանիշները ունեցող անձ մրն է, սակայն պէտք չէ անարդար ըլլալ եւ անկէ հրաշքներ ակնկալել։ Հրոս յիշեցուց, որ Լահուտ իր առաջին հաղորդագրութեան մէջ խոստացաւ տիպար եւ օրինակ ըլլալ, եւ անոր բարոյականն ու ընթացքը կ'ապացուցեն, որ իսկապէս ունի այս յատկութիւնները եւ կրնայ դեկավարել պետութեան բարենորոգման երթը։ «Աւնրւագն անոր օրով պիտի ջնջուի եւեակի դրութիւնը, որովհետեւ ինք իր մերժէ բաժնեկցութեան մտեցուցմը», րսաւ Հրոս։

Նախկին վարչապետը նաեւ րսաւ, որ պէտք չէ անարդար ըլլալ նախագահ Էլիաս Հրրաուիի հանգրուանին նկատմամբ, որովհետեւ այդ չրջանի մեծ իրագործումներէն են Աւնրի ապստամբութեան վերջ տալը, երկրին վերամիացումը, թալֆի սահմանադրական բարեփոխումներու գործադրութիւնը, միլիսներու լուծարքը, երեսփոխանական ընտրութեանց կայացումն ու վերաշինութեան երթը։

Միւս կողմէ, սակայն, այս հանգրուանը կ'աւարտի յուսեգոյն ձեւով, երբ պաշտօնատարները կիրարկ'ամբաստանեն խօսելով մսխումի, կաշառակերութեան, բաժնեկցութեան եւ սիւտճէական բացին մասին՝ հաստատելով ընդդիմադիրներուն բոլոր բսածները, աւելցուց Հրոս։

Ապօրինի հարստացման օրինագիծը քննարկելով, Հրոս հարց տուաւ, թէ այսքան ուշացած այս օրինագիծը ինչու այսքան ամպարտանքով կը փորձեն վաւերացնել իշխանութեան վերջին օրերուն։

Հրոս մերժեց պատասխանել յաջորդ կառավարութիւնը կազմելու իր պայմաններուն մասին հարցումի մը, որովհետեւ անոնք ենթադրութիւններ են։

STUDIO Lantern

•Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ

Հեռ. 01-266866 եւ 03-268852

ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ ՄԵԼԳՈՆ ԷՊԼԻՊԱԹԵԱՆԻ ...

Շարունակուած Ա. էջէն

Թիւրքեան. Ա. Փաստրմեան. Ե. Փամպուքեան. Ն. Գարագաշեան. Ա. Երեւանեան. Ռ. Արզումանեան, կեդրոնական դրամատան Հրդ կառավարիչ Յ. Սամուէլեան. Արտաւազդ արք. Թրթռեան, տոքթ. Կ. Հարպոյեան, Սուրիոյ խորհրդարանի նախկին անդամ Գրիգոր Էպլիղաթեան, «Ազդակ»ի տնօրէն Վ. Փափազեան, ինչպէս նաեւ պարգեւատրեալներուն հարազատները։

Հանրապետութեան նախագահը իր իօսքին ընթացքին ներկայացուց պարգեւատրեալները եւ անոնց տասնամեակներու Լիբանանի ինպատ գործունէութիւնը, շեշտելով այն սերտ եւ բարեկամական կապերը, որոնք դինք կը կապեն Խ. Պապիկեանի եւ Մ. Էպլիղաթեանի, ինչպէս նաեւ հայ համայնքին։

Ապա, երեսփոխան Խ. Պապիկեան իր եւ տոքթ. Մ. Էպլիղաթեանի անունով շնորհակալութիւն յայտնեց հանրապետութեան նախագահին այս պարգեւատրումին համար, նշելով Լիբանանի վերականգնումին եւ վերամիացումին մէջ նախագահին ունեցած գերագոյն դերը։

Ան ըսաւ, որ այս պարգեւատրումը անհատներու արժեւորումէն աւելի սիրոյ եւ գնահատանքի արտայայտութիւնն է հայ համայնքին նկատմամբ։

ՄԱՀԱԶԴ

Հ. Յ. Դ. Իշխան կոմիտէն կը գուժէ իր հաւատաւոր ընկերներէն

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՖԱԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 7 Նոյեմբերին, յետ կարճատեւ հիւանդութեան։

ՄԱՀԱԶԴ

Տիկին Լուիզա Գաֆալեան եւ զուստրը՝ Ատին
Տէր եւ տիկին Սիմոն Գաֆալեան եւ գաւակունք
Տիար Հրաչ Գաֆալեան
Տէր եւ տիկին Յակոբ Քէօսէեան եւ գաւակունք
Օրդ. Անի Գաֆալեան
Տիկին Արչօ Գաֆալեան
Տէր եւ տիկին Ֆուատ Տէչրր եւ գաւակը
Տէր եւ տիկին Արամ Կէօքճեան եւ գաւակունք
Տէր եւ տիկին Սարգիս Կէօքճեան եւ գաւակունք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր, հօրեղբօր, մօրեղբօր եւ հարազատին՝

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՖԱԼԵԱՆԻ

(Ծնեալ՝ 1937ին)

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 7 Նոյեմբեր 1998, երեկոյեան ժամը 5ին, յետ կարճատեւ հիւանդութեան։

Թաղման արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 8 Նոյեմբերը, կէսօրէ ետք ժամը 2ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը։

• Ներկայս ընդունիլ իբրեւ մահագդ։

• Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Նոր Ատանա թաղ։

ՄԱՐԶԱՊԱՆԿ ՀՄԸՄ

ԽԱՉԲԱԻԻ ՄՐՑԱՆԱԿ

Հրապարակի վրայ է արդէն Հ. Մ. Ը. Մ.ի պաշտօնաթերթ «Մարզիկ» ամսագիրի վերջին թիւը (195), որ կ'ընդգրկէ մարզական խաչբառի մրցանք։ Մրցանքին կրնան մասնակցիլ «Մարզիկ»ի բոլոր ընթերցողները, անխտիր։

Խաչբառը լուծողները հարկ է, որ ամէնէն ուշը Շաբաթ, 14 Նոյեմբեր 1998ին իրենց պատասխանները, փակ պահարանի մը մէջ զետեղած, յանձնեն Համազգայինի գրախանութ (Շաղզոյեան կեդրոն) կամ «Մարզիկ»ի խմբագրատուն (Պուրճ Համուտ, Ձիւնիշեանի թաղ)։

Ճիշդ լուծողներու անուանացանկէն վիճակաքգութեամբ պիտի որոշուին անուանները երեք մրցանակաւորներու, որոնք պիտի ստանան իրենց նուէրները։

Ա. մրցանակ՝ Կիպրոս երթ ու դարձի տոմս մը, տրամադրուած՝ ARA TRAVELի կողմէ։

Բ. մրցանակ՝ ROVINA թանկարժէք ժամացոյց մը, տրամադրուած՝ ընկերութեան Լիբանանի ներկայացուցիչներուն կողմէ։


Գ. մրցանակ՝ կանացի արժէքաւոր պայուսակ մը, տրամադրուած՝ SOULIERS GERARD հաստատութեան կողմէ։

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ՎԱՆԱՅ ՉԱՅՆԻ

ՀԱՅՐԵՆԻ ՍԻՐՈՒԱԾ ԵՐԳՉՈՒՀԻ ՆՈՒՆԷ ԵՍԱՅԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 25 ՆՈՅԵՄԲԵՐ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 26 ՆՈՅԵՄԲԵՐ



ԼԱ ՍԱԺԷՍ սրահին մէջ, ժըտէյտէ։

•ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ՝ ՇԱԲԱԹ, 28 ՆՈՅԵՄԲԵՐԻՆ, ՔԱԶԻՆՕ ՖԱՈՒԱՐ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ։

«Նուէր Եսայեանին յաջողուեց կանգնել ազգային երգը փրոփականտողներու առաջին շարքում։ Նա արուեստագէտների ուշադրութիւնը սեւեռեց իր երգեցողութեան վրայ՝ ասելով, որ կարելի է եւ այսպէս երգել։ Ան այսօր լսելի է, որովհետեւ Նուէր Եսայեանը ժողովրդական երգը ներկայացնում է թարմ, նոր ու վառ գոյներով՝ անշուշտ հարազատ մնալով այն աւանդութիւններին, որ մեզ թողել են մեր քեմի մեծերը, հայ արուեստի նուիրեալները»։

ՌՈՒԲԻԿ ՄԱՔԵՒՈՍԵԱՆ

ԹԵՀՐԱՆԻ ՄԵՋ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԿԱՍՊԵԱՆ ՔԱՐԻՒՂԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔԱՐԻՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸԸՐԸ Կ'ԸՍԷՆ, ՈՐ ԿԱՍՊԵԱՆ ՔԱՐԻՒՂԻ ՓՈԽԱԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՄԷՆԷՆ ԴԻՒՐԻՆ ՄԻՋՈՑԸ ԻՐԱՆԻ ՁԱՄԲՈՎ Է

Իրան չարաթավերջին գգուշացուցած է Միացեալ Նահանգները՝ ըսելով, որ անոնք պէտք չէ անտեսեն Թեհրանի փորձերը՝ կասպից ծովու ուժանիւթի պահեստներէն բաժին ունենալու համար: Անիկա նաեւ Ուաշինկթընը ամբաստանեց չրջանին րարգաւաճումը խոչընդոտելու յանցանքով:

Քարիւղի նախարար Պիժան Զանգանէ Շարաթ օր ամսոյ ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ եթէ Իրան կասպից ծովէն արտածման ձամբայ մը չկարենայ ապահովել, ատիկա ուղղակի արդիւնք պիտի բլլայ կայն կասպեան հարստութիւններէն հեռու պահելու Ուաշինկթընի ճիգերուն:

Ան աւելցուց, որ իրանցիք «այս հարցը պիտի չմոռնան»:

Զանգանէ կը խօսէր կասպեան քարիւղի եւ կազի խորհրդաժողովի մը, որուն կը մասնակցէին միջազգային չուրջ 40 ընկերութիւններ, ներառեալ 15 ամերիկեան ընկերութիւն:

Ուաշինկթըն կ'արգիլէ ամերիկեան ընկերութիւններու, որ Իրանի մէջ գործառնութիւններու ձեռնարկեն՝ իրրեւ Իրանը մեկուսացնելու իր արշաւին մէկ քայլը:

Մ. Նահանգներ, այն մտահոգութեամբ, թէ Իրան հակակչիռ կրնայ ապահովել քարիւղի արտածման գլխաւոր ճամբու պերուն:

Ան ըսաւ, որ ամերիկացիք քաղաքականութիւնը չրջանին տնտեսական չահերէն վեր կը դասեն:

«Կասպեան ուժանիւթը առեւտրականօրէն պիտի չգարգանայ եւ արտածուի մինչեւ այն ատեն, որ ամերիկեան պատժամիջոցները ի գործու կը մնան: Աւելի'ն. պատժամիջոցները միշտ

Շար.՝ էջ 10

ՊԱՔՈՒ - ՃԷՅՀԱՆԸ ՊԱՐՏԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԹՈՒՐՔԻԱ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ՀՆԳԱՊԱՏԿԵԼ ՆԵՂՈՒՑՆԵՐԸՆ ՏԱՐԱՆՑՈՒՄԻ ՏՈՒՐՔԵՐԸ

Թուրքիոյ պետական նախարար Պուրհան Քարա չարաթավերջին մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարած է, թէ անոնք, որոնք Վոսփորը եւ Տարտանէլը «քարիւղի ճամբայ կ'ուզեն դարձնել, պէտք է գիտնան, որ տարանցումի տուրքը կրնանք որեւէ ատեն հինգ անգամով բարձրացնել»:

«Անոնք այն ատեն պիտի տեսնեն, թէ իրենց ածան քարիւղի երագներուն ի՛նչ պիտի պատահի, չեչտած է ան: Տուրքերը կրնանք հնգապատկել, եթէ քարիւղի ընկերութիւնները մերժեն պաքու - ճէյհան քարիւղատար խողովակին կառուցումը եւ կասպեան քարիւղը Սեւ ծովու ճամբով արտածելու չուրջ համաձայնութիւն մը կոյացնեն»:

Թուրքիա կը փորձէ խրատացնել տարանցումի պայմանները. Պաքու - ճէյհան ընտրանքը պարտադրելու համար Ակրպէյճանի մէկ քարիւղ արտադրող օտար ընկերութիւններուն:

Մովերու հարցերով կրաղող պետական նախարար Քարա յայտարարած է, թէ Թուրքիա Նոյեմբեր 6ին սկսեալ նաւագնացութեան նոր կանոնագրութիւն հաստատած է Վոսփորի եւ Տարտանէլի նեղուցներէն անցման համար: Այդ կանոնագրութեան համաձայն, նեղուցները «թրքական» պիտի կոչուին:

Նախարարը ըսած է, թէ կանոնագրութիւնը կը նպատակադրէ նեղուցներուն մէջ կենսոլորտային եւ թեքնիք հարցերու վտանգները նուազեցնել:

Պաքուի մէջ դիւանագէտներ եւ ուժանիւթի մարգի պաշտօնատարներ կը յայտնեն, թէ կասպեան քարիւղի գլխաւոր քարիւղատարին որոշումը յետաձգելը քայլ հետեւանք է Ակրպէյճանի կառավարութեան եւ օտար ընկերութիւններուն միջեւ տարակարծութիւններուն:

Անոնք կ'ըսեն, թէ ընկերութիւնները չատ նուրբ կացութեան մէջ կը գտնուին, որովհետեւ անոնք կը փորձեն համոզել Ակրպէյճանի, Թուրքիոյ եւ Միացեալ Նահանգներու կառավարութիւնները, թէ Պաքու - ճէյհան ընտրանքը չահաբեր չէ, առանց վիրաւորելու անոնց վարկը:

Մինչ այդ, նախագահ Պիլ Քլինթընի կասպեան ուժանիւթի հարցերու խորհրդական Ռիչըրտ Մորնինկսթար կը չարունակէ պնդել, որ կասպեան աւազանին մէջ արեւելք - արեւմուտք ուժանիւթի տարանցումի անցքի մը հաստատման ծրագիրը «հաստատօրէն յառաջդիմութիւն» կ'արձանագրէ:

Ան անցեալ չարաթ բացատրած է Ուաշինկթընի քաղաքականութիւնը՝ կասպեան ուժանիւթի հարստութեանց մչակութին մէջ՝ ըսելով, որ անիկա չորս թիրախ կը հետապնդէ:

- Կասպեան ծովու չրջանի նորանկախ պետութիւններուն գերիշխանութիւնը, անկախութիւնը եւ բարգաւաճումը ամրապնդել:

- Ամերիկեան եւ այլ ընկերութիւններու համար առեւտրական աւելթներու գարկ տալ:

- Միացեալ Նահանգներու եւ անոնց դաչնակիցներուն ուժանիւթային ապահովութիւնը ամրապնդել եւ ապահովել կասպեան չրջանէն միջազգային չուկաներ ուժանիւթի ազատ հոսքը:

- Չրջանային տագնապները մեղմացնել չրջանին նորանկախ պետութիւններուն միջեւ տնտեսական կապեր հաստատելով:

(ՌՈՅԹԵՐ-Ք. Ց.Ն.)

ԹՐՔԱԿԱՆ ԹԻՒԱԽՆԵՐՈՒ ԴԷՄ
ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ ԳՈՐԾԱԾ ԸԼԼԱԼՈՒ ՅԱՆՁԱՆԴՈՎ

ԹՐՔԱԿԱՆ ԱՏԵԱՆ ՄԸ ԿԸ ՀՐԱՀԱՆԳԷ ՋԵՐԲԱԿԱԼԵԼ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԵԹԻՆ ՔԱՓԼԱՆԸ

Թրքական ատեան մը հրահանգած է թուրք իսլամական ղեկավար Մեթին Քափլանը ձերբակալել կայն ամբաստանելով Թուրքիոյ մէջ կարեւոր թիրախներու դէմ յարձակումներ սարքած բլլալու յանցանքով, հաղորդեցին թրքական թերթեր չարաթավերջին:

Քափլան, որ Գերմանիա կը բնակի, ամբաստանուած է իր հետեւորդներուն հրահանգած բլլալով, որ անցեալ չարաթ ապգային օրուան առիթով քեմալ Աթաթուրքի պամբարանին դէմ փոքր օպանաւով անձնասպանական գործողութեան մը դիմեն:

Հետեւորդները նաեւ պէտք է Պոսթոյ կարեւոր մէկ մզկիթը գրաւէին:

Ոստիկանութեան համաձայն, յարձակումները մետասաներորդ վայրկեանին չեշտակուռած են, որովհետեւ օդի վատ պայմաններ խոչընդոտած են օդանաւային չարժումը:

ԱՊԱՀՈՎԱԳՈՒԹԵԱՆ ԽԻՍՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Թրքական ոստիկանութիւնը եւ բանակը, իսլամական ծայրայեղականներու կողմէ գործողութիւններու մտավախութեամբ, ապահովական չատ խիստ միջոցառումներու պիտի դիմեն վաղը Աթաթուրքի մահուան 60ամեակին առիթով:

Ոստիկանութիւնը մտավախութիւններ ունի նաեւ քիւրտ անջատողական կիներայներէ, որոնք կրնան խափանարարական գործողութիւններու դիմել:

(ՌՈՅԹԵՐՔ)

ԻՐԱՔԻ ՄԷՋ

ԱՐԱՖԱԹԻ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ Կ'ՈՒՆԵՆԱՅ ՄՈՒՃԱՀԻՏԻՆ ԽԱԼՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՀԵՏ

ՊԱՂՏԱՏ, 8 (ՌՈՅԹԵՐՔ).- Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթի մէկ պատուիրակը Շարաթ օր տեսակցութիւն ունեցաւ իրանեան րնդդիմադիր Մուճահիտին Խալք կազմակերպութեան ղեկավար Մասուտ Ռաժաւիի հետ, Իրաքի մէջ:

Մուճահիտին Խալք, որ Իրաք հաստատուած է, յայտարարեց, որ Արաֆաթի պատուիրակը՝ Ազգամ Ահմէտ տեսակցութիւն ունեցած է Ռաժաւիի հետ, որուն ընկերացած է Պաղեստինի քաղաքական վերջին իրադարձութիւններուն մասին: Ահմէտ ըսած է, որ Իրանի իշխանութիւնները կը չարունակեն միջամուխ դառնալ պաղեստինեան եւ արաբական ներքին հարցերուն:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏԱՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԸ Կը ՓՆՏՌԵՆ ԿԻՆԿՐԻՉԻ ՅԱՋՈՐԴԸ

ՈՒԱՇԻՆԿԹՐԸՆ, 8 (ՌՈՅԹԵՐՔ).- Միացեալ Նահանգներու Հանրապետական կուսակցութիւնը չարաթավերջին համագումար մը կայացուց ընտրելու համար Ներկայացուցիչներու Տան նոր նախագահը, որ պիտի փոխարինէ Նիւթ Կինկրիչը, որ հրաժարեցաւ վերջին րնտրութիւններուն արդիւնքներուն լոյսին տակ:

Կինկրիչի պաշտօնը գրաւելու համար ընտրապայքար կը մղեն քանի մը հանրապետականներ, որոնցմէ հաւանական թեկնածուն կրնայ բլլալ Լուիզիանա նահանգի ներկայացուցիչ Պոպ Լիւինկսթըն, որ չորս տարիէ իվեր կը նախագահէ Քոնկրէսի Ծատկացումներու յանձնախումբին: Լիւինկսթընի գլխաւոր մրցակիցն է Քրիսթըֆըր Քոքս:

«Ուաշինկթըն Փոսթ»ի համաձայն, Լիւինկսթըն կր վայելէ գօրակցութիւններ աւելի քան հարիւր ներկայացուցիչներու: Ներկայացուցիչներու Տան նախագահի պաշտօնին տիրանալու համար, ան կարիքը ունի հանրապետական համագումարին 223 քուէներուն 112ին:

Կինկրիչ Շարաթ օր յայտարարած էր, որ եթէ իր պաշտօնը պահելու համար պայքար տանի, վտանգած պիտի բլլայ Հանրապետական կուսակցութեան Ներկայացուցիչներու Տունը հակակչիռի տակ պահելու կարողութիւնը:

Հանրապետական կուսակցութեան չրջանակներուն մէջ կր տիրէ այն կարծիքը, թէ Կինկրիչի որդեգրած քաղաքականութեան (Քլինթըն - Լուինսքի գայթակղութիւն) պատճառով է, որ Հանրապետական կուսակցութիւնը րնտրութիւններուն կորսնցուցած է իր կարգ մը աթոռները Ներկայացուցիչներու Տան մէջ:

ԿԻՊՐՈՍԻ ԹՈՒՐՔԵՐԸ Կը ՔՆՆԱԴԱՏԵՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷԿ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ՆԻԿՈՍԻԱ, 8 (ՌՈՅԹԵՐՔ).- Թրքական Կիպրոսը կիրակի օր խստիւ քննադատեց Կիպրոսի անդամակցութեան գծով Եւրոպական Միութեան մէկ տեղեկագիրը՝ ըսելով, որ անիկա բաժնուած կղզիին յոյն կիպրական կողմը միայն կը ներկայացնէ:

Թրքական Կիպրոսը մերժած է գործակցիլ Եւրոպական Միութեան անդամակցութեան դիմումնագիրին, որ ներկայացուած է Կիպրոսի կառավարութեան կողմէ, այն պատճառաբանութեամբ, թէ յունական Կիպրոսի վարչակարգը չի կրնար հիւսիսային Կիպրոսի անունով խօսիլ:

Եւրոպական յանձնաժողովը անցեալ չարաթ հրապարակած էր տեղեկագիրներ՝ թեկնածու երկիրներու կողմէ անդամակցութեան յառաջդիմութեան մասին:

Հիւսիսային Կիպրոսի բարձրաստիճան պաշտօնատար Թանէր Ճէթքին թղթակիցներու ըսաւ, թէ տեղեկագիրին ներկայացուցած տեղեկութիւնները տուեալներու վրայ չեն հիմնուած եւ Կիպրոսի կառավարութիւնը սխալ տեղեկութիւններ հայթայթած է ինչ կը վերաբերի հիւսիսային Կիպրոսի:

ԿԻՊՐՈՍ

ՌՈՒՍԱԿԱՆ ՀՐԹԻՌՆԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՋԷ ՅԵՏԱՁԳՈՒԱԾ

ՀԱՍՏԱՏԵՑ ՆԱԽԱԳԱՀ ԵԼԵՐԻՏԵՍ

ՆԻԿՈՍԻԱ, 8 (ՌՈՅԹԵՐՔ).- Կիպրոսի նախագահ Կլաֆքոս Քլերիտէս հերքեց այն լուրերը, որոնց համաձայն իր կառավարութիւնը որոշած է ուշացնել ռուսական հրթիռներուն հաստատումը կղզիին վրայ:

Նախագահական գրասենեակին կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը անդիման որակեց շրջան ընող լուրերը:

Եւրոպական Յանձնաժողովին կողմէ անցեալ շաբաթ հրապարակուած տեղեկագիր մը հաւաստած էր, որ Նիկոսիա որոշած է մինչեւ 1999ի գարուն յետաձգել հակօդային հրթիռներուն կղզի մուտքը: Ռուսական հրթիռները Կիպրոս պիտի հասնէին 1998ի աշնան: Կիպրացի պաշտօնատարներ հիմա կ'ըսեն, որ հրթիռները հաւանաբար տարեվերջին հասնին եւ հաստատուին իրենց կեդրոններուն մէջ: Անոնք կը շեշտեն, սակայն որ յաւելեալ յետաձգումի որեւէ ծրագիր չկայ:

ՆԻԿՈՍԻՈՅ ՄԷՋ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ԻՍՐԱՅԵԼԱՑԻՆԵՐԸ ԼՐՏԵՍՆԵՐ ՉԵՆ

Կ'ԸՍԷ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՆԻԿՈՍԻԱ, 8 (ՌՈՅԹԵՐՔ).- Կիպրոսի մէջ լրտեսութեան յանցանքի համար ձերբակալուած երկու իսրայէլացիները Իսրայէլի կառավարութեան հաշուոյն չեն գործեր, յայտնեց Կիպրոսի ապահովութեան պաշրիւր մը Կիրակի օր:

Վերոյիշեալ պաշրիւրը դիտել տուաւ, որ հարցաքննութիւնները ցոյց տուած են, որ երկու իսրայէլացիները լրտեսներ չեն:

Ուտի Հարկով եւ Իկալ Տամարի ոստիկանութեան կողմէ ձերբակալուած էին Շարաթ առտու: Ոստիկանութիւնը արդիական կապմածներ գտած է երկու իսրայէլացիներուն բնակարանին մէջ: Կապմածներէն մէկը ռատիօ մրն էր՝ կապուած ոստիկանութեան գործածած ալիքին: Ամբաստանեալները հերքած են, որ այդ գոյքերը իրենց կը պատկանին:

Ոստիկանութիւնը նկատած էր նաեւ, որ Ուրբաթ օր Հարկով գինուորական կեդրոնի մը չուրջ կը դառնար: Կիպրացիք բնդհանրապէս կասկածով կը դիտեն այն օտարահպատակները, որոնք կր հետաքրքրուին իրենց գինուորական գործունէութեամբ:

Նիկոսիոյ իսրայէլեան դեսպանատունէն պաշտօնատար մը Շարաթ գիշեր այցելեց ձերբակալուածներուն:

ՓԻՆՈՇԷ ԻՐ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ Կը ՆԿԱՏԷ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԿՈՂՄԷ

Չիլիի նախկին բռնատէր Աուկուսթօ Փինոշէ յայտնած է, թէ անցեալ ամիս Լոնտոնի մէջ իր ձերբակալութիւնը դաւաճանութիւն կը նկատէ Բրիտանիոյ կողմէ:

Հաղորդագրութեան մը մէջ ան ըսած է, թէ չէր կրնար հաւատալ, որ օտար դատախազներու կողմէ «չփաստուած ամբաստանութիւններով» հետապնդումներու պիտի ենթարկուի:

Խօսելով մտավախութիւններու մասին, թէ իր ձերբակալութիւնը կրնայ Չիլիի մէջ նուրբ կացութիւնը անկայուն դարձնել, ան ըսած է, թէ հաշտութիւնը դէպի խաղաղութիւն լաւագոյն ճամբան է:

Բրիտանիոյ Լորտերու Տան բարձրաստիճան մէկ յանձնախումբը Գերագոյն Ատեանին որոշումը վերատեսութեան ենթարկող նիստ մը կը կայացնէ ներկայիս: Գերագոյն Ատեանը յայտարարած էր, թէ Փինոշէ անձեռնմխելիութիւն կը վայելէ եւ չի կրնար դատական հետապնդումի ենթարկուիլ, որովհետեւ իրեն դէմ ուղղուած ամբաստանութիւնները տեղի ունեցած են երբ ան երկրի մը դեկավարն էր:

Մինչ այդ, Սպանիոյ արտաքին գործոց նախարար Ապել Մաթութէս երեկ յայտնեց, որ իր երկիրը որեւէ նպատակ չունի աշխարհի դատական փրկարարը դառնալու:

Սպանիոյ կառավարութիւնը Ուրբաթ օր հաւանութիւն արտայայտած էր Փինոշեն Սպանիոյ յանձնելու հրամանագիրի մը արձակման գծով, որպէսզի ան ցեղասպանութեան յանցանքով դատուի:

(ՌՈՅԹԵՐՔ)

ԼՈՒՔԸՐՊԻ ՀԱՐՑՈՎ

ԼԻՊԻԱ - ՄԱԿ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կը ՎԵՐՍԿՍԻՆ

ՄԱԿ, 8 (ՌՈՅԹԵՐՔ).- Լիպիացի փաստաբաններու խմբակ մը Երկուշաբթի օր (այսօր) կր վերսկսի ՄԱԿի հետ բանակցութիւններուն, որոնք կրնան վերջին առիթը բլլալ Լոքըրպիի ամբաստանեալները Հոլանտայի մէջ դատավարութեան ենթարկելու համար:

ՄԱԿի պաշտօնատարներու համաձայն, Լիպիա Նիւ Եորք պիտի ուղարկէ նոյն պատուիրակութիւնը, որ անցեալ ամիս հանդիպումներ ունեցած էր ՄԱԿի գլխաւոր փաստարան Հանս Քորէլի հետ: Քորէլ եւ իր անձնակազմը հանդիպումներուն մասին կր գեկուցեն Միացեալ Նահանգներուն եւ Բրիտանիոյ ու կր ստանան անոնց պատասխանները:

Մինչեւ հիմա Լիպիա կ'առարկէ Բրիտանիոյ եւ Միացեալ Նահանգներուն կողմէ ներկայացուած առաջարկին մասին, որովհետեւ եթէ երկու լիպիացիներուն դէմ բանտարկութեան վճիռ արձակուի, անոնք Սկովտիոյ մէջ պիտի բանտարկուին: Լիպիա սկզբնական համաձայնութիւն տուած էր ամբաստանեալները Հոլանտայի մէջ դատավարութեան ենթարկելու ծրագիրին, բայց եւ այնպէս կր մերժէ Սկովտիոյ մէջ բանտարկուելու պարագան: Լուսաբանութիւններ եւ բացատրութիւններ ստանալու համար Լիպիա անցեալ ամիս Նիւ Եորք առաքած էր խումբ մր փաստաբաններ, որոնք սակայն երկու չարաթ բանակցութիւններ կատարելէ ետք, չկրցան անհրաժեշտ արդիւնքով վերադառնալ:

Միւս կողմէ, Լոնտոն եւ Ուաշինկթըն կր սպառնան հրաժարիլ իրենց առաջարկէն, եթէ Լիպիա դրական մօտեցում չցուցաբերէ եւ մինչեւ Դեկտեմբեր 21 յառաջխաղացք մր չարձանագրուի: Այդ պարագային, Ուաշինկթըն կր սպառնայ աւելի խիստ պատժամիջոցներ հաստատել Լիպիոյ դէմ: ՄԱԿի մէջ ամերիկացի դեսպան Ուրբաթ օր յայտարարած էր, որ ցարդ որեւէ յառաջխաղացք չկայ եւ Լիպիա տակաւին իր յստակ պատասխանը չէ տուած:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

ՏԵՂԱՏԱՐԱՓ ԱՆԶՐԵՒՆԵՐԸ Կ'ԱՐԳԵԼԱԿԵՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տեղատարափ անձրեւներու նոր ալիքը շաբաթավերջին արգելակեց դէպի Կեդրոնական Ամերիկա օժանդակութիւններու առաքումը. ինչպէս նաեւ փրկարար աշխատանքները:

Բրիտանական մարտանաւեր Շաբաթ օր չկրցան փրկել 900 նիքարակուացիներ, որոնք վեց օրէ ի վեր առանց ջուրի եւ ուտեստեղէնի կը մնային:

Տեղատարափ անձրեւներուն պատճառով գետերը վերատին յորդեցան եւ ողողեցին շրջանները, ուր արդէն իսկ աւելի քան 11 հազար զոհեր արձանագրուած են «Միչ» փոթորիկին պատճառով: 13 հազար ուրիշներ տակաւին կորսուած կը նկատուին:

Միջազգային կազմակերպութիւններ եւ պետութիւններ օժանդակութիւններ կ'առաքեն աղէտահար շրջանները, սակայն նոր անձրեւները կ'արգելակեն այդ քայլերը:

Միւս կողմէ, Հոնտուրասի, Նիքարակուայի, Էլ Սալվատորի եւ Կուատեմալայի նախագահները այսօր հանդիպում մը պիտի ունենան Սալվատորի մէջ, վերակառուցման միացեալ ռազմավարութիւն մը մշակելու աղէտեալ գօտիներուն համար, որոնք ըստ վաճառագէտներու, քանի տարուան նահանջ արձանագրեցին:

Կեդրոնական Ամերիկայի մէջ գտնուող բրիտանական, ամերիկեան, ֆրանսական եւ մեքսիքական ուժերը միացուցած են իրենց ձիգերը փրկելու համար աղէտեալ գօտիներու բնակիչները:

(ՌՈՅԹԵՐՔ)

«ՄԵԾ» ՊԱՅՄԱՆԱԳԻՐԻ ՎԱՒԵՐԱՑՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼԸ

Նոյեմբեր 5ին Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան չէնքին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի եւ Ռուսիոյ միջեւ 1997 թուականին ստորագրուած «Բարեկամութեան, համագործակցութեան եւ փոխօգնութեան պայմանագիրի» վաւերագիրներու փոխանակման արձանագրութեան ստորագրման արարողութիւնը:

Անիկա ստորագրուեցաւ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի եւ Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Վասիլի Սրետկինի կողմէ: Արարողութենէն ետք տեղի ունեցած գրոյցին ընթացքին թէ՛ Օսկանեանը եւ թէ Սրետկինը բարձր գնահատեցին երկու երկիրներու համագործակցութեան ներկայ վիճակը, որուն վկայութիւնն այ այն է, թէ նոր նշանակուած արտաքին գործոց փոխնախարարը իր առաջին պաշտօնական այցելութիւնը րրաւ Հայաստան, Ռուսիոյ նախագահ Պորիս Ելցինի եւ վարչապետ Եւգենի Փրիմաքովի յանձնարարութեամբ:

«Հայաստան - Ռուսիա յարաբերութիւններու հիմնաքարերը բաւական ամուր են, եւ այդ իրողութիւնը աւելի պաշտօնական բնոյթ ստացան վաւերագիրներու փոխանակումով», նշեց Վարդան Օսկանեան: Իսկ Վասիլի Սրետկինը ըսաւ. «Մենք Մոսկուայի մէջ կը գնահատենք Հայաստանի հետ մեր ունեցած յարաբերականաց, գործընկերային յարաբերութիւններու կարգապահումը: Հայաստանի եւ Ռուսիոյ միջեւ կնքուած այս պայմանագիրը կը վերաբերի ծեր համագործակցութեան, որոր որոշներուն մէջ՝ անվտանգութեան, համաշխարհային քաղաքականութեան, տնտեսութեան եւ այլն»: Փոխնախարարը նաեւ աւելցուց, թէ հակառակ անոր, որ յարաբերութիւններու քաղաքական կողմը աւելի կարգապահ է քան տնտեսականը, սակայն Ռուսիոյ իշխանութիւնները իրենց առջեւ ունին նաեւ Հայաստանի հետ տնտեսական համարկումի խնդիրը, եւ այս ուղղութեամբ յառաջիկայի ճկուրիտ ծրագիրներ պիտի գործադրուին:

ԸՍՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆԵՐ ՃՇԴԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԼԻԱԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ Է

Հոկտեմբեր 31ին լրագրողներու հետ զրոյցի մը ընթացքին Հայաստանի Հանրապետութեան նախագահը Քաղաքական Խորհուրդի (ՔԽ) կողմէ ելեկտրական սակագիներ ճշդելու մասին ըսաւ. «Այդ մեկը ոլորտ մըն է, ուր քաղաքական որեւէ կազմակերպութիւն չի՛ տեւի»: Սակայն Քաղաքական Խորհուրդը սակագիներուն անդրադառնալը իր լիազօրութենէն դուրս չի համարեր:

Հինգշաբթի 5 Նոյեմբերին, մամլոյ ասուլիսի մը ընթացքին, Քաղաքական Խորհուրդի գործադիր քարտուղար Հրանդ Խաչատրեան ըսաւ, որ ըստ կանոնադրութեան, (որ Հայաստանի Հանրապետութեան նախագահին կողմէ ընդունուած փաստաթուղթ մըն է), Քաղաքական Խորհուրդը ստեղծուած է տարբեր կազմակերպութիւններու, պետական եւ տեղական իշխանութեան մարմիններու եւ առանձին անհատներու կողմէ եղած հարցերու վերաբերող հարցերու քննարկման, վերլուծման եւ անոնց վերաբերեալ եզրակացութիւններու յանգելու եւ զանոնք Հայաստանի Հանրապետութեան նախագահին ներկայացնելու համար: Հրանդ Խաչատրեան յայտարարեց, թէ «Քաղաքական Խորհուրդը սակագիներու հարցը կը նկատէ հասարակութեան վերաբերող հարց», եւ աւելցուց, թէ Քաղաքական Խորհուրդը «գնահատական-եզրակացութիւն» ըսելով միայն սակագիները նկատի չ՛ունեցար, այլ նաեւ այն բոլոր հարցադրումները, որոնք կը վերաբերին ելեկտրականութեան եւ անոպատասխան մնալով կուտակուած են, մասնաւորապէս 1992ին 1993 թուականներու ուժգնութեան տագնապի արուեստական ըլլալու պարագային, ինչպէս նաեւ նոյն թուականի ելեկտրականութեան մատակարարման հետ կապուած հանրական չարաշահումները: Ասոր բոլորը, ըստ Հրանդ Խաչատրեանի, կ՛ազդեն սակագիներու ձեւաւորման վրայ:

«Աստեղ նաւանաբար թիւրիմացութիւն կայ», ըսաւ Հրանդ Խաչատրեան, Հայաստանի Հանրապետութեան նախագահի վերոյիշեալ արտայայտութեան համար, եւ տեղեկացուց, թէ Քաղաքական Խորհուրդի անդամ կուսակցութիւններու ներկայացուցիչները անհրաժեշտ կը նամարեն, որ ինք փորձէ նախագահին հետ հշդել այս հարցը:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՔԳԱՅԻՆ «ՔՆԱՐ» ՊԱՐԱԽՈՒՄԲԸ ԿԸ ՄԵԿՆԻ ԱՊՈՒ ՏԱՊԻ ԵՒ ՇԱՐԺԱ

Արաբական Միացեալ Էմիրութիւններու Ազգային Վարչութեան հրաւէրով Լիբանանի Համազգայինի «Քնար» պարախումբը վաղը, Երեքշաբթի, 10 Նոյեմբեր 1998ին պիտի մեկնի Ապու Տապի եւ Շարժա՝ ելոյթներ ունենալու համար:

35 հոգինոց պարախումբին կ՛ընկերակցին պարուսոյց Ֆելիքս Յարութիւնեան եւ վարչական պատասխանատուներ: Յայտագիրը կ՛ընդգրկէ հայկական եւ օտար պարեր:

Ծրագիրի յաջողութեան մէջ իր դերակատարութիւնը ունեցաւ նաեւ Լիբանանի մօտ Արաբական Միացեալ Էմիրութիւններու դեսպանատունը:

ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆՏԻ 102ՐԴ ԹՈՒՉՔԸ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Միացեալ Հայկական Ֆոնտի 102րդ թուչքը Երեւան հասաւ Նոյեմբեր 1ին, փոխադրելով 1,2 միլիոն ամ. տոլար արժողութեամբ մարդասիրական օգնութիւն: Այս թուչքին համար Միացեալ Հայկական Ֆոնտի ջանքերով հանգանակուեցան 192 հազար ամ. տոլար արժողութեամբ դեղորայք եւ բժշկական պիտոյքներ, որոնք առողջապահական նախարարութեան կողմէ պիտի բաշխուին Հայաստանի հիւանդանոցներուն:

Այս թուչքին մասնակցեցան հետեւեալ կազմակերպութիւնները. Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը 195 հազար ամ. տոլար արժողութեամբ, Քալիֆորնիոյ Հայ Բժիշկներու Միութիւնը 147 հազար ամ. տոլար, Պոսթընի Համալսարանի Բժշկական Կեդրոնը 89 հազար ամ. տոլար, Հայաստանի Երեխաներու Վերելքի Կազմակերպութիւնը 74 հազար ամ. տոլար. Սան Ֆրանսիսքոյի Հայաստանի Բարեկամները 62 հազար ամ. տոլար. Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը 52 հազար ամ. տոլար, Հայկական Օգնութեան Ֆոնտը 48 հազար ամ. տոլար. Հայաստանի Սանուկներու Սրտաբանական Կեդրոնը 45 հազար ամ. տոլար եւ Հայաստանի Ակնաբուժական Օրագիրը 41 հազար ամ. տոլար:

Իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Հայաստանի Ամերիկեան Համալսարանը 39 հազար ամ. տոլար, Հայաստանի դեսպանատունը 30 հազար ամ. տոլար. Լոս Անճելըսի Քալիֆորնիա Համալսարանի Բժշկական Կեդրոնը 24 հազար ամ. տոլար, Հայ Օգնութեան Միութիւնը 21 հազար ամ. տոլար, Ամերիկեան Կարմիր Խաչը 16 հազար ամ. տոլար, Լինվաթէք Ընկերութիւնը 14 հազար ամ. տոլար. Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) մօտ Հայաստանի ներկայացուցչութիւնը 14 հազար ամ. տոլար. Ամերիկահայ Միութիւնը 13 հազար ամ. տոլար, Ամերիկահայ Մշակութային Ընկերակցութիւնը 11 հազար ամ. տոլար, եւ Պըրնզ եւ Ռօ Ընկերութիւնը 10 հազար ամ. տոլար:

Իր հիմնադրութենէն ի վեր (1989), Միացեալ Հայկական Ֆոնտը 102 թուչքերով եւ 408 ծովային արկղներով աւելի քան 236 միլիոն ամ. տոլար արժողութեամբ մարդասիրական նպաստ ուղարկած է Հայաստան:

Միացեալ Հայկական Ֆոնտը համատեղ աշխատանքն է Ամերիկայի Հայկական Համագումարին, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, Հայ Օգնութեան Միութեան, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ամերիկայի թեմին եւ Լինսի Հիմնարկին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ՎՐԱՅ ՃՆՇՈՒՄՆԵՐԸՆ ԵՏՔ՝

ՅՈՒՆԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ԹՐՔԱԿԱՆ ՃՆՇՈՒՄՆԵՐՈՒ ԹԻՐԱԽ

Երեքշաբթի, 3 Նոյեմբերին հրապարակուած հաղորդագրութեամբ մը, Ամերիկայի Յոյն Ուղղափառ առաջնորդարանը կը տեղեկացնէ, թէ Թուրքիոյ իշխանութիւնները վերջերս կամայականօրէն լուծած են Հալքիի Պատրիարքական Աստուածաբանական Դպրոցի հոգարարձութիւնը, այն միջոցին, երբ դպրոցը վերաբանալու աշխատանքներ կը կատարէին:

Դպրոցը 1971ին փակուած կը Թուրքիոյ կառավարութեան մէկ որոշումով, որմէ ետքգայն վերաբանալու աշխատանքները հանդիպած են թրքական իշխանութեանց կողմէ դրուած խոչընդոտներու: Ներկայիս դպրոցի չէնքը կը գործածուի միջագպային համագումարներու համար:

Առաջնորդ Մփիրիտոն այս կապակցութեամբ հեռագիր մը յղեց Պարթոլոմիոս պատրիարքին, չեշտելով, որ ինք եւ Ամերիկայի յոյները նեցուկ կը կանգնին դպրոցին հոգարարձութեան եւ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որ «խստօրէն կը բողոքէ» Թուրքիոյ կառավարութեան այս որոշումին դէմ: Ան նաեւ կոչ կ՛ընէ Թուրքիոյ եւ Ամերիկայի իշխանութիւններուն, որ սրբագրեն այս սխալը: «Կոչ կ՛ընեմ Թուրքիոյ կառավարութեան, որ յարգէ ազատ արտայայտուելու իրաւունքը», նշուած է հաղորդագրութեան մէջ:

Թուրքիոյ իշխանութիւններուն համաձայն, որոշումը առնուած էր, որովհետեւ հոգարարձութիւնը Թուրքիոյ դէմ քարոզչութիւն կը կատարէր:

Յայտնենք, թէ անցեալ Քոնկրէսը վերջերս կոչ րրած էր Թուրքիոյ իշխանութիւններուն, որ յարգէ ազատօրէն դասաւանդելու դպրոցին իրաւունքը:

ԱՐՄԷՆ ԱՆԱՍԵԱՆ՝ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՍԵՄՖՈՆԻՔ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԻ ԽՄԲԱՎԱՐ

Քալիֆորնիոյ սեմֆոնիք նուագախումբի գեղարուեստական դիակալար Վիճրար Վեներ իրեն օգնական խմբավար նշանակեց երիտասարդ չուրթական եւ բեմադրիչ Արմէն Անասեանը: Անասեան ծնած է Երեւան, ուր ծանօթ երաժիշտ Հենրիկ Անասեանի զաւակն է, որ բնաւնիօք խաղացուած են Միացեալ Նահանգներ:

Արմէն Անասեան իր երաժշտական կրթութիւնը ստացած է Հայաստանի, Գերմանիոյ եւ Միացեալ Նահանգներու մէջ: Ան վերջին շրջանին կ՛աշխատակը նաեւնիի նուագախումբին հետ՝ որպէս բեմադրիչ եւ մենակատար, եւ որուն հետ ան մասնակցած է համբերգային շրջագայութիւններ:

ՇՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերնելի գիրով (նախատուութեանց պարագային նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

ԼՕ.ԽԱՉԻ ՍԵՄԻՆԱՐԸ

«ԿՆՈՋ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀՐՋԱՊԱՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Իր տեսակին մէջ եզակի սեմինար-դասախօսութիւն մը տեղի ունեցաւ Ուրբաթ, 6 Նոյեմբեր 1998ի ամբողջ օրը. ԼՕԽի «Արաքսի Պուլղուրճեան» Ընկերաբժշկական կեդրոնի «Թիճուկեան» սրահին մէջ: Սեմինարը կազմակերպած էր «Ֆրետերիք Էպըրթ» հաստատութիւնը (կենսոլորտի եւ շրջապատի պաշտպանութեան գերմանական հաստատութիւն), գործակցութեամբ «Լիբանանցի Կանանց Ազգային Վարչութեան»: Նշենք, որ յիշեալ գոյց հիմնարկները Լիբանանի մէջ նախաձեռնեցին սեմինարներու արշաւի մը, անցնող ամրան Յուլիս ամիսէն մինչեւ Նոյեմբեր 1998. Լիբանանի ժողովուրդին ներկայացնելու առողջապահական յոյժ կենսական հարցեր, որոնք կը վերաբերին առաւել քան Լիբանանի կենսոլորտի եւ շրջապատի պաշտպանութեան:

Անցնող հինգ ամիսներու ընթացքին նմանօրինակ սեմինարներ կազմակերպուեցան Լիբանանի զանազան շրջաններուն մէջ. հիւսիսէն հարաւ: «Լիբանանցի Կանանց Ազգային Վարչութիւն»ը նկատի առած է Պուրճ Համուտը, իբրեւ վտանգուած կենսոլորտ կամ ապականած շրջապատ. անհրաժեշտ նկատած է սեմինար մը կայացնել այս շրջանին մէջ. ժողովուրդը հրաւիրելու մասնակցելու եւ իր ապրած շրջանը մաքուր պահելու: Լաւագոյն հաստէն նկատուած է Լիբանանահայ Օգնութեան Խաչը. որուն Շրջանային վարչութիւնը եւ «Արաքսի Պուլղուրճեան» Ընկերա-բժշկական կեդրոնի տնօրէնութիւնը համագործակցաբար ընդառաջ գացին շինիչ եւ շատ կենսական այս առաջարկին. գումարելով միօրեայ սեմինար մը. որուն մասնակցեցան ԼՕԽի մասնաճիւղերու եւ Շրջանային վարչութեան յանձնախումբերու անդամուհիները: Ներկայ եղան նոյնպէս պետական երեսփոխան տոքթ. Սեպուհ Յովնանեան. Պուրճ Համուտի քաղաքապետ Յոլակ Թիւթլեան. նախկին քաղաքապետ տոքթ. Չաքար Մկրեան:

* * *

Սեմինարին բացումը կատարուեցաւ առաւօտեան ժամը 10ին. Լիբանանի եւ ԼՕԽի քայլերգներու յոտնկայս ունկնդրութեամբ:

ԼՕԽի Շրջանային վարչութեան կողմէ բացման խօսքը ներկայացուց Նորա Պայրագտարեան. պարզելով սեմինարին նպատակը. կազմակերպիչներուն մտահոգութիւնը. ներկայացուց դասախօսները. օրուան յայտագիրը. ապա շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչներուն նման նախաձեռնութիւն մը Պուրճ Համուտի մէջ կայացնելու առիթով:

ԼՕԽի Շրջանային վարչութեան անունով բարի գալուստ եւ շնորհակալութեան իր խօսքը ներկայացուց Սեդա Չէօրէքճեան. մատնանշելով գետափին եւ ծովափին մօտիկ Պուրճ Համուտի կենսոլորտին ու շրջապատին պահպանումը. կենսոլորտ մը. որ հետզհետէ կ՛ապականի. կ՛աղտոտի. անշնչելի կը դառնայ ծանօթ պատճառներով:

«Լիբանանցի Կանանց Ազգային Վարչութեան անդամուհի Սեդա Խտըշեան ամփոփ կերպով ներկայացուց Լիբանանի կենսոլորտի ապականումը ընդհանրապէս. եւ Պուրճ Համուտի շրջապատին ապականումը մասնաւորապէս. որ ծայր տուած էր լեռնացած աղբակոյտին վտանգաւոր գոյութեամբ: Ան կոչ ուղղեց Լիբանանի բոլոր պատասխանատուներուն. հոգածու ըլլալ Լիբանանի տարածքին. կենսոլորտի եւ շրջապատի մաքրութեան. անտառային շրջաններու պահպանման. ոչ միայն մեր ներկայ բնակչութեան առողջութեան. այլեւ ու մանաւանդ ապագայի մեր զաւակներուն առողջութեան ի խնդիր:

Օրը բաժնուած էր երկու մասի. կէսօրէ առաջ երկու դասախօսութիւն. կէսօրէ ետք աշխատանքային լսարան նախապատրաստութեան ուղղութեան եւ ցուցմունքի վերաբերեալ:

Առաջին դասախօսն էր դոկտ. Մեշէտ Մանսուր. համալսարանի դասախօս. կենսոլորտի հարցերու մասնագէտ: Ան հարցը ներկայացուց իր բազմակողմանի տեսներով. Լիբանանի անտառներու փճացում. որ կը նշանակէ դալար տարածութիւններու կորուստ. չքացում. որոնց տեղը կը գրաւեն պեթոնապատ շինութիւններ. առանց ծրագիրի ու նախատեսութիւններու:

Լիբանան մեծ ճարտարարուեստ չունի. որուն ենթակայ թունաւոր թափօններ. բայց արեւմտեան աշխարհէն թունաւոր թափօններ կը բերեն մեր երկիրը եւ կը թունաւորեն մեր կենսոլորտը. ջուրը. ցանքային տարածութիւնները: Աղբերու հաւաքման եւ փճացման հարցը տակաւին չէ լուծուած: Երկրին պատասխանատուները ծեռնտու միջոցառումներու չեն դիմած. տուներէն. աշխատանոցներէն. փոքր գործարաններէն թափուած աղբերը հարկ է բաժանումներ ունենան. անջատաբար թափել թուղթը. երկաթը կամ այլ մետաղները. ապակիները. կերպընկալ նիւթերը եւ այլն. այդպէսով իւրաքանչիւր նիւթ կամ տարր կ՛երթայ իրեն յատուկ վերափոխութեան վայրը. ըսաւ պարոն Մանսուր եւ վերյիշեց այս նոյն թեմային շուրջ իր ներկայացուցած դասախօսութիւնը. ուր ցոյց տրուած են աշխատանքի կերպերը. բայց մնացած են անգործադրելի. որովհետեւ կարեւորութիւն չէ տրուած անոնց: Որոշումները եթէ գործադրուին. հարցերը կը պարզանան. նոյնիսկ կը չքանան. յօգուտ բնակչութեան ու երկրին վերելքին. եզրափակեց ան:

Երկրորդ դասախօսը տոքթորա Ֆատիա Քիուան իր կարգին շեշտը դրաւ շրջապատի մաքրութեան գործընթացին կնոջ մասնակցութեան վրայ: Ան ըսաւ. «Չի բաւեր խօսիլ կնոջ իրաւունքներուն մասին. այլ նաեւ անոր պարտականութիւններուն մասին»: Կինը ընելիք ունի իբրեւ քաղաքացի. որովհետեւ կինը ամէնէն աւելի գործունի ընկերութեան մէջ իբրեւ մասնակից. ընկերային. քաղաքական եւ կամ կազմակերպչական հրապարակներէն: Ան կարեւորութեամբ շեշտեց իրողութիւն մը. թէ դասակարգային հարցեր պէտք չէ ստեղծուին. վերի կամ վարի խաւի կիներ պէտք է մասնակցին հայրենիքի բարելաւման կերտումին: «Ինծի չի վերաբերիր այդ հարցը» պէտք չէ ըսել. այլ պէտք է մասնակցիլ իբրեւ անյետաձգելի պարտականութիւն: Կինը դեր ունի. հարկ է ան ըլլայ դերակատար լիբանանեան կեանքի բոլոր մարգերուն մէջ. առողջապահականէն մինչեւ քաղաքականը:

* * *

Կէսօրուան դադարէն ետք «Ուըրք Շօփ»ով վերսկսաւ սեմինարը: Երկու մասնագէտ դասախօսներ մասնակցութիւն բերին ներկայ հայուհիներուն բացատրելով կնոջ պարտականութիւնը:

Առաջին դասախօսուհին էր տոքթորա Աննա Մանսուր (Լիբանանի մօտ կնոջական եւ մանուկներու հարցերու ՄԱԿի ներկայացուցիչ): Իր նիւթին տիրապետած դասախօսուհի մը. որ ծանրացաւ կնոջ դերակատարութեան իբրեւ իրաւատէր քաղաքացի պետական թէ այլ բարձրագոյն ատեաններու մէջ իր ծայնը կարենալ լսելի դարձնելու իմաստով: Իբրեւ օրինակ. ան նկատի առաւ Պուրճ Համուտի աղբակոյտի արծարծած հարցերը. բողոքը. գանգատները. ու հարց տուաւ. թէ ի՞նչպէս սկսաւ բողոքը. որո՞ւն դիմեցիք. ի՞նչ մակարդակով»: Իսկ երբ ստացաւ ներկաներուն պատասխանները. իր կողմէ թելադրանքներ եւ ուղղումներ կատարեց:

Յիշենք որ բոլոր դասախօսութիւնները կատարուեցան միայն արաբերէն լեզուով: Ներկաները իրենց կարգին պատասխանեցին արաբերէնով:

Ժամը չորսին դասախօսելու հերթն էր դոկտ. Ռահտ Մոհսէնի: Լիբանանեան համալսարանի երիտասարդ դասախօս. որ հագիւ սրտի մտած ժանօթացաւ ներկաներուն ինքնութեան. հաղորդական ու սիրալիր անմիջականութեամբ: Ներկայ տիկինները ունկնդրեցին հոգեբանական մարգը ընդգրկող անոր հարցումները եւ գրաւոր պատասխանեցին հարցումներու իբրեւ վիճակագրական տախտակ: Շահեկան եղաւ նոյնպէս պարոն Մոհսէնի «Ուարշէթ ամալ»ը: Իր տեսակին մէջ գրեթէ առաջինը այս կեդրոնին մէջ:

Դասախօսութեանց աւարտին օրդ. Ջէյնա Սըզգէր կատարեց սեմինարին եզրափակումը. հարցումներ ուղղելով ներկաներուն. թէ ի՞նչ գանգատներ ունին. կամ ի՞նչ թելադրանքներ «Լիբանանցի Կանանց Ազգային Վարչութեան», որպէսզի անոնք ընդհանուր գաղափար մը ունենան Պուրճ Համուտի շրջապատի բարելաւման առնչուող կարիքներուն եւ պահանջներուն մասին: Ան արձանագրեց վիճակագրական երկար էջ մը. հուսկ հրաւիրեց ներկաները վերջին հանդիպումի մը արշաւի փակման. որ տեղի պիտի ունենայ 16 Նոյեմբերին, Հազմիէի «Քրոնիկ Սենթըր»ին մէջ. կէսօրէ ետք ժամը չորսին. նախագահութեամբ տիկին Սուզա Հըրաւիի:

ԹՂԹԱԿԻՑ

ԿԱՏԱՐԵԼ ԹԷ ՈՂՔԵՐ ԳՈՒԹԻՒՆ

Ստորեւ կու տանք 6 Նոյեմբերին «Արմէնփրէս»ի հաղորդած մէկ լուրը, առանց մեկնաբանութեան:

Երեւանէն 35 քմ. հեռու գտնուող Լեռնամերձ գիւղին մէջ (Արմաւիրի մարզ) Նոյեմբեր 6ին, Հոկտեմբերեան յեղաշրջումին տարեդարձին նախօրեակին, կանգնեցուեցաւ Վլատիմիր Իլյիչ Լենինի պրոնզաձոյլ կիսանդրին:

1924ին հիմնուած այդ գիւղը, ուր այսօր 500 բնակիչ կայ, դարձաւ նախկին Խորհրդային Միութեան այն հազուագիւտ գիւղերէն մէկը, որ «Լենինեան արձաններու համատարած սպանդ»էն ետք, գիւղական համայնքին մեծամասնութեան պահանջով, գերադասեց գիւղին հրապարակին վրայ ունենալ կարմիր յեղափոխականին քանդակը:

Լեռնամերձի մէջ տեղադրուած կիսանդրին նախապէս կը գրաւէր Էջմիածինի մշակոյթի պալատի բակին պատուանդանը: Չորս տարի առաջ խումբ մը «բարբարոսներ» (ձեռնարկին մասնակիցները այսպէս բնորոշեցին գանոնք) որոշեցին արձանը հանել եւ թաղել: Սակայն Էջմիածնաբնակ Վ. Մինասեան «բանտորներու առաջնորդը խոշտանգումէ փըրկեց», եւ չորս տարի պահելէ ետք զայն նուիրեց Լեռնամերձ գիւղին:

Գիւղին բնակիչները, որոնք Հայաստանի մէջ այսօր գործող կուսակցութիւններէն կ՛ընդունին եւ կ՛աջակցին միայն Համայնավար կուսակցութեան, աղ ու հացով դիմաւորեցին երեւանէն եւ Էջմիածինէն ժամանած համայնավար հիւրերը, առաջնորդութեամբ Հայաստանի Համայնավար կուսակցութեան կեդրոնական կոմիտէի առաջին քարտուղար Սերգէյ Պատալեանի:

Կարմիր պաստառի վրայ գրուած «Լենինի գործն անմահ է. համայնավարութիւնը պիտի յաղթէ» կարգախօսին հաւատալով, ելոյթ ունեցողներ Լենինի քանդակի տեղադրումը բնորոշեցին իբրեւ «Հայաստանի մէջ համայնավարութեան վերածնունդի, անոր գաղափարներու թարմութեան ու յաղթանակի առաջին նշաններ», ինչպէս նաեւ՝ իբրեւ «Ռուսիա-Պիելոռուսիա միութեան անդամակցելու առաջին անկիւնաքար...»: Յոյս յայտնուեցաւ, որ մարդիկ ժամանակաւորապէս միայն մոռցած են «Լենին պապուկ»ին գործերը. Լեռնամերձի մէջ անոր գաղափարներուն վերածնունդը նմանցուեցաւ «ձիւնագունդի մը, որ թաւալելով պիտի մեծնայ եւ տարածուի ամբողջ աշխարհի մէջ»:

«Լենինը պատուէրով չի գար, այլ՝ սրտի թելադրանքով», ըսաւ Ս. Պատալեան, ողջունելով գիւղի նախաձեռնութիւնը:

Հայաստանի համայնավար երիտասարդական միաւորներու առաջնորդ Սանատրուկ Սահակեան միութեան շարքերը ընդունեց այն 17 լեռնամերձցիները, որոնք գտած են «կեանքի ճիշդ ուղին»:

Համայնավար կուսակցութեան նախաձեռնութեամբ Ազգային օփերայի եւ պալէի թատրոնին մէջ 6 Նոյեմբերին տեղի ունեցաւ նաեւ Հոկտեմբերեան յեղափոխութեան տարեդարձին նուիրուած հանդիսութիւն մը:

ՉԵՆ ՊԱՐՏԻՈՒՄ ՀԱՅ ՉԻՆՈՒՈՐԸ ԵՒ ԹՈՒՐՔ ԴԻՒԱՆԱԳԷՏԸ... ՄԻՆՉԵՒ Ե՞ՐԲ

ԱՐԻՒՆ ԹԱՓԵԼ ԳԻՏԵՆՔ: ԻՍԿ ԹԱՆԱ՞Ք

Օրերս արցախեան մամուլը գուժեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տեղեկատուութեան եւ մամուլի վարչութեան լուծարման մասին: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կառավարութիւնը ի դէմս վարչապետ Ժիրայր Պօղոսեանի, «ելնելով պետական կառավարման հանրապետական մարմինների կառուցուածքային բարեփոխումների եւ դրանց գործունէութեան արդիւնաւէտութեան բարձրացման անհրաժեշտութիւնից» որոշել է ձերբազատուել մեռելածին կառոյցից:

Այսօր ոչ Ղարաբաղում, ոչ Հայաստանում չկայ պետական որեւէ կառոյց, որը զբաղուէր արցախեան ազատագրական պայքարի գաղափարների քարոզչութեամբ: Չճանաչուած պետութիւնը դարձեալ մնաց առանց պետական քարոզչական մարմնի:

Կարելի է. ի հարկէ, համաձայնուել կառավարական այն դիրքորոշման հետ. որ վարչութեան ղեկավար Ժաննա Կրիկորովային այդպէս էլ չյաջողուեց ստեղծել արդիւնաւէտօրէն գործող գաղափարակիցների խմբակ, որը պէտք է ուժեղացներ եւ կենտրոնացներ ղարաբաղանպաստ քարոզչութիւնը: Բայց երբ գործարանի տնօրէնը վատ է աշխատում. դա ամենեւին էլ չի նշանակում, որ գործարանը պէտք է փակել: Ջրի հետ երեխային էլ նետելուց առաջ պէտք է գոնէ մտահոգուել «երեխայի» ճակատագրով:

Բազմիցս խօսուել ու գրուել է այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ռազմական յաջողութիւնները պէտք է ամրապնդուեն քարոզչադիւանագիտական աշխուժութեամբ. եւ առանց արտաքին քարոզչութեան նպատակներին հասնելը գրեթէ անհնար է: Միջազգային մի շարք կառոյցների աջակցութիւնը վայելող Ազգերպէյճանն. այնուամենայնիւ, հսկայական գումարներ է ծախսում այս կամ այն երկրում իր դիրքորոշումը բացատրելու, տարածելու, արմատաւորելու ուղղութեամբ: Իսկ մենք չճանաչուածներս ու մեկուսացուածներս, կատարելագործելու փոխարէն ոչնչացնում ենք թող որ նախնական ձեւով գործող, բայց միակ քարոզչական մարմինը:

Արդէն որերորդ տարին է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութիւններին ոչ մի կերպ չի յաջողուում կազմակերպել արցախամէտ քարոզչութիւնը աշխարհում, թեեւ տարբեր երկրների հայկական գաղութները վաղուց արդէն ձանձրացել են նշելուց. որ պատրաստ են ամենայն աշխուժութեամբ աջակցել այս խնդրում: Թէպէտ ոչ, իրաւացի չեմ: «Չի յաջողւում» բառակապակցութիւնը ենթադրում է գոնէ քոյլ, գոնէ ինչ-որ միջոցների ձեռնարկում այս ուղղութում: Ճիշդ կը լինէր գրել, որ արտաքին գործոց նախարարութիւնը, ինչպէս եւ Լ. Տէր Պետրոսեանի օրօք, չի ցանկանում նպաստել քարոզչական մարմնի ձեւաւորմանը: Եթէ արտաքին գործոց նախարարութեան նախկին ղեկավար Արկադի Ղուկասեանը տարին գոնէ 2-3 անգամ բարեհաճում էր կէսբերան շշնջալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութեան մասին, ապա ներկայիս նախարարը խոր քնից արթնանալու մտադրութիւն. ըստ երեւոյթին. չունի:

«Արթնացում» մէկ անգամ այս տարուան ամրանը. հաւաքեց արտաշխարհի վրայ աշխատող արցախցի մի բուռ լրագրողների. երջանկացրեց «Այսուհետ ես եմ որոշելու. թէ ինչ պէտք է գրէք» յայտարարութեամբ ու նորից քուն մտաւ: Այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնում վերացուում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութիւնը փոքրիշատէ քարոզող միակ կառոյցը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան երեւի չի վերաբերում: Դժգոհութեան ծըպտուն էլ չկայ: Հարց է ծագում. ինչի՞ համար է ստեղծուած Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութիւն կոչուող գերատեսչութիւնը. եթէ ոչ արցախեան գոյամարտի գաղափարների ամէնեն աշխուժ քարոզչութեան: Չեւական դռնփակ բանակցութիւնների՞, թէ՞ 6 հոգանոց «փորձագիտական» խմբակի իշխանութիւնն ամրապնդելու համար: Կարիք կա՞յ, արդեօք, բացատրելու, որ դիւանագիտութեան 50, եթէ ոչ 70 առ հարիւրը իրականացուում է քարոզչական կառոյցների միջոցով. եւ չի կարելի հանդուրժել այդ կառոյցների վերացումը: Թէեւ այստեղ զարմանալու ոչինչ չկայ: Ի՞նչ սպասել 10ամեայ արցախեան գոյամարտի ընթացքում Արցախում գոնէ մէկ շաբաթ չապրած Հայաստանի Հանրապետութեան յատուկ ծրագրերի կոմիտէում Լիպարիտեան Ժիրիկի ածեցրած *քատր*երից:

Աւելի քան ակներեւ է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնում արտաքին քարոզչութեան նկատմամբ, մեղմ ասած, անտարբերութիւնը Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնների անտարբերութեան տրամաբանական շարունակութիւնն է: Ղարաբաղից գոչելով Քոչարեանը խոստանում էր, որ Հայաստանի Հանրապետութիւնում պաշտօն ստանձնելով ինքը աւելի արդիւնաւէտօրէն կ՚օգնի Արցախին կարգաւորելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան առջեւ ծառացած բազմաթիւ խնդիրները: Չգիտեմ որքանո՞վ կ՚իրականանայ այդ խոստումը տնտեսութեան բնագաւառում, դա ցոյց կը տայ 1999ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետական պիւտճէի չափը. որի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան իշխանութիւնների որոշ ներկայացուցիչներ ժամանակին իսկական պատերազմ էին մղում Լ. Տէր Պետրոսեանի դէմ: Բայց այն. որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութեան գաղափարախօսութեան քարոզչութիւնը աշխուժացնելու ուղղութեամբ ոչինչ չի ձեռնարկուում դիւանագիտական ոլորտում. ակընյայտ է: Հայաստանի Հանրապետութիւնում նման մի կառոյց ստեղծելու փոխարէն ոչնչացնում ենք վերջին օղակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնում:

Ողբերգականն այն է, որ այս հարցի լուծումը մեծ ծախսեր չի պահանջում: Յատկապէս, որ կառոյցի ստեղծմանը պատրաստ են նպաստել աւելի քան 70 սփիւռքեան լրատուամիջոցներ, որոնք իրենց հերթին ի վիճակի են օգտագործելու իրենց բաւականին լայն կապերը այս կամ այն երկրի ոչ հայկական Զանգուածային Լրատուական Միջոցների հետ: Եթէ ստեղծուի այս զուտ *քեքնիք* կապը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան հետ, եւ սկսուի կենտրոնացուած հասարակական քարոզչական աշխատանքը, ազգպէյճանական դեսպանատները չեն էլ հասցնի դիմագրաւել այդ ճնշմանը: Թէկուզեւ այն պատճառով, որ Աւստրալիայից մինչեւ Միացեալ Նահանգներ Սփիւռք չունեն:

Ժամանակին տողերիս հեղինակը մի խումբ նախածեռնողների հետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախկին նախագահ Ռ. Քոչարեանին է ներկայացրել Սփիւռքի 7-8 լրատուական միջոցների ղեկավարների լրջագոյն մի շարք առաջարկութիւններ այս ուղղութեամբ: Ի պատասխան եգիպտական սֆինքսի լռութիւն: Զարմացած նախածեռնողները փոխեցին ծրագրի շեշտադրումը առաջարկելով ստեղծուելիք կառոյցի ղեկավար նշանակել նախագահի օգնականներից մէկին, եթէ նախագահը չի վստահում ազատ մամուլի ներկայացուցիչներին: Դարձեալ լռութիւն: Օրագրի վերջնականապէս վհատեցուած հեղինակները երրորդ անգամ փորձեցին համախմբող ուժի դերը առաջարկել մէկ այլ կառոյցի, ասենք արտաքին գործոց նախարարութեան (միամիտ սփիւռքահայեր): Եւ նորից լռութիւն: Նրանք դիմեցին վարչապետին, արտաքին գործոց նախարարին, այլ պաշտօնեաների: Ապարդիւն ջանքեր: Դեռ աւելին. որոշ ժամանակ անց Քոչարեանի հրամանագրով լուծարուեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մամուլի եւ տեղեկատուութեան բաժանմունքը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախկին նախագահի կարծիքով պատերազմն աւարտուած է. եւ նման կառոյցի կարիք այլեւս չկայ: Մենք փորձեցինք ապացուցել չճանաչուած պետութեան ղեկավարին, որ եթէ նոյնիսկ պատերազմն աւարտուած է. ինչը խիստ կասկածելի է. ապա չճանաչուած Արցախը պէտք է շարունակի քարոզչութիւնը. եթէ. ի հարկէ. ձգտում է ճանաչման: Ոչ մի արդիւնք: Յատկանշական է. որ մեր սփիւռքահայ հայրենակիցներին պէտք չէին ոչ գումարներ, ոչ պաշտօններ, ոչ էլ այլ արտօնութիւններ: Միայն ուղղութիւն. ի նչ անել այս կամ այն պահին, այս կամ այն երկրում:

Արտաքին քարոզչութեան նկատմամբ առ այսօր շարունակուող նման կեցուածքը կարելի է բացատրել երկու պատճառով: Կամ իշխանութիւնների որոշ օղակների ներկայացուցիչներ քուլամիտ են, կամ նրանք վաղուց արդէն հրաժարել են արցախեան գոյամարտի նպատակներից: Գուցէ ոմանք, շարունակելով Լեւոն Տէր Պետրոսեանի պարտուողական գիծը. հրաժարուել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութեան գաղափարից, ինչի մասին, հասկանալի պատճառներով, չեն կարող բացէ ի բաց խօսել, բայց ամէն ինչ անում են այդ գաղափարի ակացահարման համար, ընդհուպ մինչեւ աշխարհասփիւռ հայութեանը համախմբող քարոզչութեան ոչնչացումը: Բազմաթիւ սփիւռքահայեր խոստովանում են, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնից ստացուած իւրաքանչիւր լուրը ոգեւորում, աշխուժացնում է համայնքին այստեղից բխող հայանպաստ բոլոր հետեւանքներով: Ըստ երեւոյթին. այդ աշխուժութիւնն այլեւս պէտք չէ:

Երեւի. ճիշդ է դարերի խորքից եկող այն միտքը, որ երբեք չեն պարտւում հայ զինուորը եւ թուրք դիւանագէտը: Բարի նախանձով ես հետեւում Ազգպէյճանի նախագահի հմուտ գործելակերպին եւ քարոզչական աշխուժութեանը. համեմատում այն առաջժ յաղթանակած կողմի ապաշնորհ ներկայացուցիչների հազուադէպ, շատ յաճախ անդիւրըմբռնելի մրմնջոցի հետ ու ակամայ մտածում. ողորմած Տէր. մի թէ մեր ժողովուրդը այդպէս էլ մի Ալիեւ չի ծնելու: Գուցէ հրաւիրենք Չեչենիայի փոխ վարչապետ Մովլադի Ուտուկովի՞ն կամ Ազգպէյճանի արտաքին գործոց նախարարութեան մի քանի դիւանագէտի՞. որպէսզի քարոզչութեան դասընթացներ կազմակերպեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւններում: Թող սովորեցնեն. թէ ի նչպէս պէտք է յաղթանակը վերածել... վերջնական յաղթանակի: Պարտուած թուրք-ազերի զինուորների ղեկավարները դարեր շարունակ գիտեն այդ գաղտնիքը: Չգիտեն միայն մարտի դաշտում յաղթանակած հայ զինուորների առաջնորդները:

Իսկ ինչ տղաներ կան Ղարաբաղի խրամատներում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն ժամանած ՕԹԱՆի պատուիրակութեան ղեկավար շուէտացի հրամանատար Պերկը քարացել էր զարմանքից իմանալով. որ ղարաբաղցի զինուորները դաշտային պայմաններում 40 րոպէում փոխում են խփուած քանկի աշտարակը, նորից մարտ մտնում ու յաղթում: Ապշած հրամանատարի խոստովանութեամբ ՕԹԱՆի լաւագոյն ցուցանիշը 2 ժամ է: Ի՞նչ տղաներ ունենք առաջին գծում: Առիւծի ձագեր. որոնք 10-15 հոգով շաբաթներ շարունակ ոչ միայն ետ էին մղում 300-400 ազերիների կատաղի գրոհները, այլեւ նոյնիսկ փախուստի մատնում նրանց: Հերոսներ. որոնց հարուածներին չէին դիմանում ոչ ՕԹԱՆական հրահանգիչների վարժեցրած ազերիները, ոչ փորձառու աֆղան վարձկանները, ոչ Բասաեւի չեչէն գրոհայինները, ոչ ռուս եւ ուքրանիացի վարձկանները, ոչ թուրքական «Գորշ գայլեր»ի անդամները, ոչ փաքիստանցի օդաչուները... Սա չափազանցութիւն, լրագրողական հնարք չէ: Ով եղել է այն օրերին Ղարաբաղում. կը հաստատի այս դաժան. բայց հպարտալի իրողութիւնը: Մարտակերտի մերձակայքում 93ին մղուած թէժ մարտերում կարճատեւ ընդմիջման ժամանակ. երբ կողմերը շունչ էին քաշում գրոհը վերսկսելուց առաջ, ազգերպէյճանական խրամատներից յանկարծ վեր խոյացաւ սպիտակ դրօշը: Առաւել ծանր հատուածը պաշտպանող «Գորշ գայլեր» ջոկատի թուրք հրամանատարը ինչ-որ փաթեթ ձեռքին, երկու զինուորի ուղեկցութեամբ, դուրս եկաւ բանակցութիւնների չէզոք գօտում: «Ի՞նչ էք ուզում»,- բարկացած հարցրեց մեր պատուիրակը: Թուրքը չպատասխանեց. նստեց քարին ու ծխեց ձեռքով հրաւիրելով մերոնց միանալ իրեն: Մերոնք էլ նստեցին մերժելով թուրքի մեկնած «*Մարլպորո*»ի տուփը, չնայած 4 օր ծխախոտ չունէին: «Ի՞նչ էք ուզում».- կրկնեց հարցը մեր զինուորը: «Ոչինչ,- թոյլ ժպտաց թուրքը:- Պարզապէս շատ երկրներում եմ կռուել Աֆղանստան, Պաղեստին, Իրան-Իրաք. Չեչենիա, բայց ձեզ նման գժերի չեմ հանդիպել: Ուզում էի տեսնել...»: Մի քանի րոպէ անց «հիւրը» դէն գցեց ծխախոտը, վեր կացաւ տեղից, սեղմեց մերոնցից մէկի ձեռքը ու «*հալալ օլսուն*» բառերով հեռացաւ մեր զինուորների զարմացած հայեացքների տակ: Յետոյ միայն մերոնք նկատեցին քարին թողած փաթեթը, որը բացեցին մեծ զգուշութեամբ: Դա թուրքի նուէրն էր. 3 տուփ «*Մարլպորո*»:

Ականատեսները կը հաստատեն. որ նման դէպքեր շատ են եղել ճակատում, երբ անվերջ գրոհներից յոգնած ու արդիւնքի չհասած թշնամին զուտ մարդկայնօրէն ցանկանում էր ծանօթանալ այդ փոքրաթիւ «*էրմենի շայթաննների*» հետ: Թըշնամին նենգ է, խարդախ, ոչնչից չխորշող: Բայց անգամ նա է արժանին մատուցում հայ զինուորների խիզախութեանը. զինուորներ, որոնց քիկունքում ոչ ոք կանգնած չէ, բացի ձեզանից. պարոնայք դիւանագէտներ, ձեր չորացած գրիչներով: Օգնէք նրանց: Օգնէք այդ փոշու մէջ կորած, ամիսներով տուն չտեսած. վարձկանների ընտրանի զօրամիաւորումներին ջախջախած, զօր ու գիշեր սահմանը հսկող տղաներին: Մի քիչ քանաք քափէք: Ինչպէս նրանք են արիւն թափել: Բոլորիս համար:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆԵԱՆ

«ԻՐԱՒՈՒՆՔ»

ԱՐՄԷՆ ՌՈՒՍՏԱՄԵԱՆ. «ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է ԹԵՔՆԻՔ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՆԱԽՈՐԴ ՎԱՐՉԱԿԱՐԳԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ՏԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՉՄԱՍՆԱԿՑԵԼԸ»

Հոկտեմբերի 30ին կայացած բազմամարդ հանրահաւաքին ընթացքին Հ. Յ. Դ. Գերագոյն Մարմինի անդամ Գ. Մանուկեան հրապարակեց շարք մը քաղաքական գործիչներու անուններ՝ զանոնք որակելով տնտեսական յանցագործներ: Սակայն հայաստանեան օրաթերթերը անդրադարձան այն իրողութեան, թէ նշուածները երկրորդական մակարդակի պատասխանատուներ էին, հակառակ աւելի բարձրաստիճան պատասխանատուներու անունները լսելու ժողովուրդի ակնկալութեան: Այս հարցումով սկսելով եւ այլ հարցեր քննարկելով «Իրաւունք» օրաթերթի թղթակիցը զրոյց մը ունեցած է Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի փոխ ներկայացուցիչ Արմէն Ռուստամեանին հետ:

ԱՐՄԷՆ ՌՈՒՍՏԱՄԵԱՆ - Նախ՝ հանրահաւաքում ասուեց, որ ցուցակն ամբողջական չէ եւ չարունակուիլն է ունենալու: Երկրորդը նրչուած անձանց վերաբերեալ ներկայացուածը առնչուում էր հիմնականում հովանաւորչութեան, սեփական պաշտօնական դիրքը չարաշահելու, իրենց համար արտօնեալ պայմաններ ստեղծելու միջոցով կատարածին եւ ձեռք բերածին: Իսկ Հ. Տէր Պետրոսեանի եւ նրա ամենամերձաւոր շրջապատի (որոնք նրա ապագայի գաղափարների կրողներն ու պաշտպաններն են եղել) արարքները յատուկ գնահատականի կարիք ունեն: Դա առանձին խնդիր է, եւ պարզեցուած ձեւով հարցի ներկայացումը կր նշանակէր դրա խորութեան անտեսում:

ՀԱՐՑՈՒՄ.- Քաղաքական Խորհրդում դրուած է նախորդ իշխանութիւնների գործունէութեան քաղաքական գնահատականի հարցը: Ինչպիսի՞ն է Հ. Յ. Դ.ի դիրքորոշումը այդ հարցում. եւ ի՞նչպէս է վերաբերում Հ. Յ. Դ.ն նոր կոմիտէ այս պահին յարդրպակաութեան հարցի շահարկմանը եւ երկրապահների՝ նիւաները *պոյմ*ին ներարկելու միտումին:

Ա. Ռ.- Քաղաքական Խորհրդում պէտք է գնահատուի նախորդ իշխանութիւնների քաղաքական ուղեգիծը: Գնահատականը հիմնականում պէտք է վերաբերուի այն ուղղութեանը, որով երկիրն ընթացել է նախորդ վարչակարգի օրօք: Այս առումով Հ. Յ. Դ.ի տեսակէտը շատ յստակ է՝ մենք Քաղաքական Խորհրդում ներկայացրել ենք սկզբունքներ, որոնց հիման վրայ միանշանակ եզրակացութեան ենք գալիս նախորդ իշխանութիւնների ուղեգիծը եղել է ապազգային: Ի հարկէ, ամէն մի կուսակցութիւն իր կոնկրէտ րանաձեւումները կր տայ, բայց Քաղաքական Խորհուրդր արդէն մօտ է համաձայնեցուած փաստաթուղթ ընդունելուն, եւ դա կր ներկայացուի նախագահին:

Ինչ վերաբերում է ԻՄ՝ վերջին նիստերին դրսեւորած դիրքորոշմանը, ապա դա բաւականին մտահոգիչ է: ԻՄ գործադիր քարտուղարի յաջորդականութեան սկզբունքը վերածում է կերխնդրի, որը կարող է անգամ պատճառ հանդիսանալ բարձրացնելու ԻՄի մասնակցութեան հարցը Քաղաքական Խորհրդում: Մենք շատ աւելի մեծ խնդիրների շուրջ ենք հաւաքուել Քաղաքական Խորհրդում, մեր նպատակը ազգային համաձայնութիւնն է, եւ կարծում ենք, որ կազմակերպչական ինչ-ինչ խնդիրների պատճառով հիմնական նպատակից հեռանալն անթոյլատրելի է: Յոյսով եմ, որ ԻՄ կը վերանայի իր դիրքորոշումը, մանաւանդ, որ Քաղաքական Խորհրդում քննարկւում են մի շարք կոնկրէտ հարցեր, այդ թւում՝ նախորդ վարչակարգի քաղաքական ուղեգծին գնահատական տալը, ինչը չափազանց կարեւոր է: Զմասնակցել այդ գործընթացին կազմակերպչական ոչ հակառակ խնդիրների պատճառով, կարծում եմ, անընդունելի է:

Իսկ երկրապահների կողմից պոյմորի որեւէ միտում չեմ տեսնում: Կարծում եմ, որ 1-2 նիստերին նրանց բացակայութիւնը գուտ տեխնիկ պատճառներ ունի, մանաւանդ որ երկրապահները մասնակցել են ամենակարեւոր նիստին եւ կողմ քուէարկեցին քաղաքական գնահատական տալու անհրաժեշտութեան սկզբունքին:

Հ.- Ապզպային ժողովում ընդունուած է բնութագրական օրէնսգիրքը: Ի՞նչ դիրքորոշում ունի Հ. Յ. Դ.ն այդ հարցում. եւ ինչո՞ւ Հ. Յ. Դ.ի միակ պատգամաւոր Ռ. Յակոբեանի արտայայտած տեսակէտները համապատասխանում են Հ. Յ. Դ.ի դիրքորոշմանը:

Ա. Ռ.- Հ. Յ. Դ.ն աւելի մօտ է կանգնած կուսակցութիւնների միասնական տարրերակի սկզբունքներին, եւ այդ հարցերում մեր պատգամաւոր Ռուբէն Յակոբեանի տեսակէտները լիովին համընկնում են կուսակցութեան դիրքորոշման հետ:

Հ.- Վերջին շրջանում մի շարք յայտնի եղած քաղաքական դէմքեր ներարկուելով կուսակցական խմբատուժերի: Ի՞նչ է պատճառը, եւ ի՞նչ ներկուսակցական գործընթաց է դա արտայայտում:

Ա. Ռ.- Հ. Յ. Դ.ի ներսում որեւէ առանձնայատուկ գործընթաց գոյութիւն չունի: Տեղի են ունեցել կանոնադրային կարգապահական լուրջ խախտումներ, եւ խախտումների արդիւնքով են կայացուել տուժերի մասին որոշումները: Այդ խոհութեան հետապնդման՝ մամուլում յիշատակուած երեւոյթներ չկան, եւ հարցը գուտ կանոնադրային հարթութիւնում է:

Հ.- Վերջերս ակնարկ է խոյլ մրցակցութիւն Հ. Յ. Դ.ի եւ երկրապահների միջեւ: Ի՞նչ գործակցական հարթութիւններում է ակնկալում Հ. Յ. Դ.- «երկրապահ» յարթարութիւնները:

Ա. Ռ.- Որեւէ մրցակցութեան խնդիր չկայ, աւելին՝ իւրաքանչիւր երկրապահ, որն իր կոչմանը համապատասխան՝ իր ողջ կութեամբ նուիրուած է հայրենիքի պաշտպանութեանն ու ապատութեանը, Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարական գինակիցն է՝ անկախ այն հանգամանքից, նա Հ. Յ. Դ.ի անդամ է, թէ ոչ: Աւելին՝ լուրջ հեռանկարներ կան Հ. Յ. Դ.ի եւ երկրապահների համագործակցութեան դաշտում:

Հ.- Պոմ ո՞ւմ նկատի ունիք երկրապան Կամաւորականների միութիւնը, թէ՞ համամասնուն պատգամաւորական խմբին:

Ա. Ռ.- Խօսքը վերաբերում է Երկրապահ Կամաւորականների միութեան հետ համագործակցութեանը: Անշուշտ, «Երկրապահ» պատգամաւորական խմբում կան մեր կողմից շատ յարգուած մարդիկ, ովքեր յուրջ ներդրում ունեն մեր պատմամարտում: Այդպիսի մարդկանց մենք միշտ համարում ենք գաղափարակից:

Հ.- Հ. Յ. Դ.ն հիմից առաջին փուլից սկսած պաշտպանել է Ռ. Քոչարեանին: Հ. Յ. Դ.ն իրնչպէս է գնահատում Ռ. Քոչարեանին եւ նրա ձեւաւորած կառավարութեան գործունէութիւնը:

Ա. Ռ.- Մենք պաշտպանել եւ պաշտպանում ենք նախագահի նախընտրական ծրագիրը եւ տեսնում ենք, որ առկայ են մի շարք դրական տեղաշարժեր, մասնաւորապէս արտաքին քաղաքականութեան, Արցախի, Հայաստան - Սփիւռք յարաբերութիւնների ոլորտներում եւ այլուր: Սակայն մենք յուրջ մտահոգութիւն ունենք ծրագրի իրագործման կշռոյթի առումով: Այն առաջմ բաւականին դանդաղ է ընթանում, եւ անհրաժեշտ է առաւել վճռականութիւն գուցաբերել հական փոփոխութիւններ կատարելու ուղղութեամբ, կտրուկ արագացնել բարեփոխումների ընթացքը: Խնդիրն այն է, որ բարեփոխումները պէտք է իրագործուեն դրանցում չհագրգռուած Ճատրերի միջոցով, սակայն, գուտ, կառավարման միջին եւ ստորին օղակներում ըստ էութեան գերակայում են հին Ճատրերը: Այդ հանգամանքը լրջօրէն խոչընդոտում է ծրագրերի իրագործմանը:

Հ.- Խոչընդոտներից մէկը դուք նշեցիք. իսկ որո՞նք են միւսները:

Ա. Ռ.- Հիմնական խոչընդոտներից մէկը նաեւ պետական համակարգի հական թերութիւններն են: Սահմանադրութիւնն այսօր նախագահին տալիս է գերլիազօրութիւններ, եւ, ըստ էութեան, չկայ իշխանութեան ճիւղերի տարանջատում եւ հակակշիռների համակարգ:

Հ.- Սահմանադրական փոփոխութիւնների յանձնաժողովում որդեգրուած է Յուլիս հինգերորդ սահմանադրութիւնը» կարգաւորելու մօտեցումը: Արդեօ՞ք դա բաւարարում է Հ. Յ. Դ.ին:

Ա. Ռ.- Մենք կողմնակից ենք արմատական փոփոխութիւնների: Հին սահմանադրութեան մէջ եղած դրական պահերը կարելի է օգտագործել, եւ յոյս կայ, որ փոփոխութիւնների ծաւալն ու որակը այնպիսին լինի, որ կառավարման գերկենտրոնացուած նախագահական նմուշից անցնենք առնուազն կիսանախագահական նմուշին: Անշուշտ, Հ. Յ. Դ.ն միշտ եղել է խորհրդարանական հանրապետութեան կողմնակից, սակայն այդ փոփոխութիւնները կարող են լինել չշօշափելի քայլ դէպի խորհրդարանական հանրապետութեան նմուշ:

Հ.- Արդեօ՞ք արդիւնաւէտ չի՞ սառցուի, որ կառավարութեան աւելի շատ կր լինեն, քան հիմա:

Ա. Ռ.- Դրանից պէտք է ձգտենք խուսափել, որպէսզի արդիւնքում չունենանք բազում բնական թերութիւններ եւ թիւրիմացութիւններ:

Հ.- Արցախի հարցում վահան Յովհաննիսեանը *ամբողջ*ապէս կորցրել է ճոյն տեսակէտը: Ինչ վերաբերում է Ռոբերտ Քոչարեանին: Ի՞նչ է պատճառը, որ Հ. Յ. Դ.ն այդ հարցում չի բարձրացնում նշածդ:

Ա. Ռ.- Չէի ասի, որ նոյնութեամբ համընկնում են նախագահի եւ Վահան Յովհաննիսեանի տեսակէտները, մանաւանդ եթէ հաշուի առնենք ընկեր Յովհաննիսեանի վերջին յայտարարութիւններն այդ հարցի կապակցութեամբ: Իսկ ինչ վերաբերում է Հ. Յ. Դ.ին, ապա կուսակցութիւնը միշտ ունեցել է դիրքորոշման բարձր նշաձող եւ դրանից երբեք չի նահանջել ու չի նահանջի: Մեզ համար Արցախի հարցը Հայ Դատի բաղկացուցիչ մասն է, եւ դա ամրագրուած է մեր ծրագրում: Իսկ ինչ վերաբերում է այսօրուայ գործընթացներին, ապա մենք յստակ արտայայտել ենք մեր դիրքորոշումը՝ պէտք է բացառուի որեւէ ձեւով Արցախի կարգավիճակը Ազրպէյճանի կազմում, բանակցութիւններում Արցախը պէտք է դիտուի որպէս հաւասարազօր կողմ: Միեւնոյն ժամանակ Արցախը պէտք է ունենայ երաշխաւորուած եւ անվտանգ ցամաքային սահման Հայաստանի հետ եւ ելք ունենայ դէպի Արաքս գետ: Բանակցութիւնների ընթացքում պէտք է անպայման հաշուի առնուեն պատերազմի արդիւնքները եւ արցախահայութեան կամքի արդիւնքները եւ արցախցուած է 1991ին Դեկտեմբերի 10ի հանրաքուէով: Այս դիրքորոշումից Հ. Յ. Դ.ն երբեք չի նահանջելու:

«ԻՐԱՒՈՒՆՔ»

գրականութիւն եւ մշակոյթ

ՄԵԾԱՐԱՆՔ՝ «ՄԵՐԿՈՒՀԻՆԵՐՈՒՆ»

Մերկուհիներ պատկերող եւ կամ քանդակող կերպարուեստագէտներ մերկապաշտներ չեն: Անոնք կնոջ մարմինը կ՚ընդունին իբրեւ գեղեցիկ ձեւոյթ եւ ըստ այնմ կը պատկերեն զայն: Այս մեկը չի նշանակեր սակայն, որ բնորդուհիները պէտք է որ ըլլան երիտասարդ. սիրուն նիւները պէտք է որ ըլլան երիտասարդ. սիրուն պուպրիկներ: Արուեստի պատմութիւնը ցոյց տուած է, որ պատկերուած եւ կամ քանդակուած են նոյնիսկ տարեց եւ «տգեղ» բնորդուհիներ, որոնք կերպարուեստագէտի շունչին տակ դարձած են գեղեցիկ եւ կամ նոյնիսկ կոթողային արուեստի գործեր: Ռուպենզի եւ կամ Ռոտենի օրինակները իսօսուն են այս պարագային: Անոնք այլակերպուած մարմիններու միջոցով իսկ կրցած են կերտել նոգիով հարուստ ու գեղեցիկ կին կերպարներ, որոնք ոչ միայն իսօսուն են ու արտայայտիչ, այլեւ իրենց դրսեւորած ներքին գեղեցկութեամբ կը հմայեն ու կը հիացնեն ականդիրը:



«Յաղթանակ», գործ՝ Կիւլէն Տէր Պօղոսեանի

Սակայն, եթէ կերպարուեստագէտը կնոջ մերկ մարմինը կը դիտէ զուտ իբրեւ արտաքին ձեւոյթ, ապա ան ակամայ կը մոլորի եւ լաւագոյն պարագային կը դառնայ պոռնկագէտ...:

Բոլոր պարագաներուն սակայն կնոջ մերկութիւնը հիներէն ի վեր ներշնչած է ու կը շարունակէ ներշնչել արուեստագէտները:

Հինգշաբթի, 5 Նոյեմբերի երեկոյեան ժամ 6ին Զալքայի «*Նոա՚զ Արք*» ցուցասրահին մէջ տեղի ունեցաւ բացումը խմբային ցուցահանդէսի մը՝ «*Մերկուհիներ*» ընդհանուր խորագիրին տակ:

Ցուցադրութեան դրուած շուրջ երեսուն կերպարուեստագէտներու 150է աւելի ստեղծագործութիւնները իրագործուած են գրեթէ ամէն տեսակի գեղանկարչական հմտութիւններով: Ինչպէս իւղանկար, ջրանկար. կաւճաներկ (*փաստել*). *կուաշ*, չինական մելան, մատիտ, *աքրիլիք. կրավիւր. լիթոկրաֆի* եւ այլն: Ցուցադրուած են հետեւեալ գեղանկարիչներուն գործերը. Հասպիկ Սրուր, Սմար Սնսի, Սեզար Ժըմայէլ, Փօլ Կիրակոսեան, Միշէլ Պասպուս, Վահրամ, Յ. Թորոսեան, Ռ. Պետրոսեան, Ի. Պետրոսեան, Մ. Մազմանեան, Հելեն Խալ. Հալիմ Ժուրտաք. Հրայր. Մարթա Հըրաուի. Էմ. Կիրակոսեան, Կիւլէն Տէր Պօղոսեան, Գառզու. Ա. Պապիկեան, Լ. Աղասեան, Ժ. Գազանճեան, Ս. Երեցեան, Արեֆ Ռէյիս. Ռուբեն Աբովեան եւ ուրիշներ:

Տարբեր տարիքի եւ տարբեր խառնուածքի տէր կերպարուեստագէտները կերտած են տարբեր բնոյթի մերկուհիներու կերպարներ, որոնք կատարողական եւ արտայայտչաձեւի առումներով տարբեր դպրոցներու կը պատկանին: Բոլոր պարագաներուն սակայն, ստեղծագործութիւններու առանցքը կնոջ մերկ մարմինն ու անոր ձգած տպաւորութիւնն են:

Այս ցուցահանդէսը գեղագիտականօրէն կ՚արժեւորէ եւ կը մեծարէ կնոջ մերկութիւնը:



«Գարուն», գործ՝ Արկօ Պաղտասարեանի

Այս տարի ծննդեան 85ամեակն է հայրենի գեղանկարչութեան երէց սերունդի կարկառուն դէմքերէն Արա Բեքարեանի: Այս առիթով, ստորեւ եւ քաղուածաբար կու տանք ակնարկ մը, որ որոշ գաղափար կու տայ անոր ստեղծագործական կեանքին մասին:

Մկկ ուրիշ Գարահիսար չկայ: Ափիոն-Գարահիսարը, Անատոլիայում: Երբեմնի՝ հայերով բնակեցուած այդ աւանից է սկսուել արդի հայ կերպարուեստի ականաւոր դէմքերից մէկի՝ Հայաստանի ժողովրդական նկարիչ փրոֆեսօր Արա Բեքարեանի ողիսականը:

Նրա ծննդեան թուականին իսկ՝ 1913ին, կարծես գգալով մօտակայ սրհասը, Նրա ընտանիքը տեղափոխւում է Երեւսաղէմ, այստեղից՝ Եգիպտոս, ապա՝ Փարիզ եւ, ի վերջոյ, 1925ին՝ Հայաստան: 1932ին Երեւանում նախնական գեղարուեստական կրթութիւն ստանալուց յետոյ, պատանի Արան ուսանում է Լենինկրատի գեղարուեստից ակադեմիայում: Ուսումը հագիւ աւարտած, սկսւում է Հայրենական մեծ պատերազմը, եւ գոյների հետ դեռ չմաքառած նկարիչը, վրձնի փոխարէն հրացան բռնած, մեկնում է ռազմաճակատ, ուրկից անդնում կովկասեան լեռներից մինչեւ Վիեննա:

Մեծ յաղթանակը Բեքարեանին տուն է բերում եւ հնարաւորութիւն տալիս, որ նա այս անգամ անդնի ստեղծագործական բերկրանքով պայմանաւորուած հարուստի մի ուղի՝ նշանակալից ոչ միայն հեղինակի, այլեւ՝ արդի հայ արուեստի համար:

Պատերազմի տարիներին Բեքարեանի սրտում այնքան էր ահագնացել ստեղծագործելու ծարաւը, որ նա տիւ ու գիշեր կտաւակալի առջեւ տքնելով ընդամէնը մէկ տարուայ ընթացքում վրձնում է երփնագիր պատկերների մի ստուար շարք եւ 1947ին երեւանեան արուեստասէրների առաջ կանդնում անհատական ցուցահանդէսով: Ցուցահանդէսը ջերմ ընդունելութիւն է գտնում՝ թէ՛ իրեն, հեղինակին, թէ՛ արուեստասէր հասարակայնութեանը համոզելով, որ Բեքարեանն արուեստում ոչ թէ պատահականօրէն յայտնուած այցելու է, այլ տուն կառուցող, սեփական տուն՝ մի նոր ու գունեղ անհատականութեամբ հայկական կեպարուեստը հարստացնող:

Շուտով Բեքարեանի գործերը դուրս են գալիս միութենական ասպարէզ, ապացուցադրւում են արտասահմանեան տասնեակ երկրներում: Մոսկուայում եւ Խորհրդային Միութեան մշակութային այլ կենտրոններում կազմակերպւում են նրան անհատական ցուցահանդէսներ, որոնք Հայաստանի արեւային բոյրերն ու թոյրերն են պարգեւում դիտողներին, իսկ տուն բերում հայ նկարչի, ուրեմն եւ հայ արուեստի ճանաչման նորանոր առհաւատչեաններ:



«Լոգանք», գործ՝ Արա Բեքարեանի

Բազմաժանր նկարիչ է Արա Բեքարեանը: Նա հաւասար յաջողութեամբ աշխատում է ինչպէս թեմատիկ պատկերի, այնպէս էլ դիմապատկերի ու բնապատկերի ընագաւառներում, մերթ-մերթ էլ վրձնում նկարներ:

Ունի թեմաների յայնոյորտ բնդգրկում, որտեղ կարելի է տեսնել պատմական նիւթեր, քաղաքային չինարարութեան, կեանքի ու կենցաղի դրուագներ, մտաւորականների կերպարներ... Բայց նկարչի սէրերի սէրը հայ գիւղն է, յատկապէս Արարատեան դաշտավայրի գիւղը՝ իր գունեղ դաշտերով ու այգիներով, մրգերով ու, ի հարկէ, մարդկանցով: Եւ այնքա՛ն են նրա հոգին ու գեղարուեստական պատկերացումները նոյնացել հայ գիւղի հետ, որ նրբանկատ աչքը նկարչի նոյնիսկ քաղաքային տեսարաններում կարող է հետապնդել գիւղի երգչի ներկայութիւնը, նրա գիւղարոյր տոգորումը: «Երգիչ» բառն այստեղ սոսկ պատկերաւոր արտայայտութեան համար չի բերուած: Բանն այն է, որ Բեքարեանը ոչինչ չի վրձնել անտարբեր դիտողի աչքով, «հէնց այնպէս, ինչպէս կայ»: Նա բանաստեղծօրէն է ընկալում գիւղն ու ամենայն գեղջկականը, չրջապատի երեւոյթների ու առարկաների խայտարղէտ բազմութիւնից ընտրում է ոչ միայն եւ ոչ այնքան փաստականը, որքան յուզականը, եւ քնարական չնչով այն վերարտադրում: Ընդսմին, նրա բանաստեղծականութիւնը ոչ թէ թումանեանական է, այլ ասես խորհրդապաշտական հակում ունի եւ աղերսւում է Վահան Տէրեանի թափանցիկ ու նրբակերտ քնարերգութեան հետ: Ինչպէս մեծ ֆաւախեցու բանաստեղծութիւններում, այնպէս էլ Բեքարեանի կտաւներում տաք գոյներին երկնագոյնն է խառնուած, ցնծութեան ու հիացմունքին մեղմ թախիծը: Եւ զուր չէ, որ նկարչի վրձնած դիմապատկերների շարքում, ըստ երեւոյթին, ամէնից գգացուածն ու իմաստաւորուածը Վահան Տէրեանի կերպարն է, որին մէկ անգամ չէ, որ նա անդրադարձել է:

Յիշատակուած աղերսը Տէրեանի հետ ինքնին նաեւ խօսում է նկարչի կիրառած գեղարուեստական միջոցների մասին: Եւ իրօք, նոյնիսկ հինը պատկերելիս Բեքարեանի արտայայտչամիջոցները հնօրեայ ու աւանդոյթային չեն, առաւել եւս հեռու են ըստ անցեալի կամ ըստ ժողովրդական արուեստի ոճաւորելուց: Թէ՛ խմբաւորումներով, թէ՛ գունաշարի կազմակերպման սկզբունքներով, թէ՛, վերջապէս, վրձնումների կերպով ու կիրառած գեղարուեստական պայմանականութիւններով Բեքարեանի երփնագիրը միանգամայն ժամանակակից է, սեփական, բայց եւ իր ոտքերի տակ ունի Մ. Առաքելեանի ու Մ. Սարեանի արգասաւորած ազգային հողը:

Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԵԱՀՎԱՀԸ

Դիցաբանութիւնը կենսական նշանակութիւն ունի մշակոյթներու պատմութեան մէջ: Հայ ժողովուրդը հարուստ է նաեւ դիցաբանութեամբ, սակայն անոր բազմաթիւ ծալքերը տակաւին բացայայտուած չեն ու պէտք ունին ուսումնասիրման ու լուսաբանման:

Հայրենի մամուլէն քաղելով, ստորեւ կու տանք Արարատեան դիցաբանութենէն հատուած մը, որ կը վերաբերի Եահվահի առասպելական կերպարին:

Արարատում ապրում էր Արին իր թոռների ու ծոռների հետ: Երջանիկ էին նրանք: Ապրում էին աստուածավայել, արարում էին, կերտում, եւ չկար ոչ խռովութիւն, ոչ հիւանդութիւն:

Արիները Արեւի հետ էին խօսում, աստղերի հետ խորհրդի էին նստում: Զոհ էին մատուցում աստուածներին եւ աստուածների հովանաւորութիւնն էին վայելում: Մեծ խարոյկներ էին վառում եւ ցուլ կամ խոյ էին խանձում այդ խարոյկների վրայ: Խանձաբոյր ծուխն ու արեան հոտը տարածւում էր Արարատով մէկ եւ բարձրանում երկինք: Եւ բոլոր աստուածները սիրով գալիս էին, բազմում զոհասեղանի շուրջ, վայելում Արարատի ծոխ բարիքները եւ օրհնում Արիներին:

Բոլոր աստուածներին զոհ էին մատուցում Արիները, չէին մոռանում ոչ մէկին: Բայց ամէնից շատ եւ ամէնից ճոխ զոհաբերութիւնը Արիները նուիրում էին Հայր Արային եւ ամենազօր Վահագնին: Դրանից բոլորովին չէին սրտնեղում աստուածները եւ սիրով իրենք էլ էին փառաբանում Արային ու Վահագնին:

Միայն Եահվահն էր սրտնեղում դրանից: Արիներ նրա համար զոհաբերութեան միայն մէկ օր էին սահմանել եւ այն էլ ցրտաշունչ ձմրանը: Նա լուռ իր մէջ պահում էր վիրաւորանքը եւ չարանում Արիների եւ Վահագնի դէմ: Նախանձը ուտում էր նրա հոգին, բայց զսպում էր եւ խորհում, թէ ինչպէս նսեմացնի Վահագնին աստուածների եւ Արիների մօտ:

Եահվանի տօնին, երբ Արիները զոհ էին մատուցում նրան, խիստ ցուրտ էր եւ բուք: Բոլոր աստուածները հաւաքուել էին զոհասեղանի շուրջը, վայելում էին մատաղը եւ փառաբանում էին Եահվահին: Միաժամանակ փառաբանում էին նաեւ Արային եւ Վահագնին: Բոլորը ուրախ էին: Լուռ էր միայն ինքը Եահվահը: Նա զոհասեղանից չէր օգտւում եւ միայն խմում էր ու խմում: Նա վրդովուած էր, որ իր տօնին իրենից առաջ Վահագնին էին փառաբանում:

Եահվահը հարբել էր: Եւ հարբած, նա կիսատ թողեց զոհաբերութեան ծիսակատարութիւնը ու թռաւ գնաց Արայի մօտ:

- Եահվահ,- բարկացաւ Արան,- աստուածներին վայել չէ զոհաբերութեան ծէսից հեռանալ, այդ ինչ չարութիւն ես նիւթում քո մէջ:

- Հայր իմ,- ասաց Եահվահը,- ես զոհաբերութեան սեղանից հեռացայ, որովհետեւ խիստ վիրաւորուած եմ քեզ համար. Արիները փառաբանում էին աստուածներին եւ քո անունից առաջ Վահագնի անունն էին Իտալիս:

- Դու չարախօսում ես, Եահվահ,- զայրացաւ Արան,- աստուածավայել չես խօսում: Արիներ միշտ ինձանից յետոյ Վահագնին են փառաբանում, քանզի Վահագնն է նրանց զօրութեան հովանաւորողը: Քո հարբած լեզուն ասում է այն, ինչ սթափ ժամանակ նիւթում է քո հոգին:

Եւ Արան չարախօսութեան համար պատժեց Եահվահին. նրան վտարեց երկնքից եւ ստորգետնեայ Արքայ կարգեց:

- Այնտեղ դու քո չարութեան պահերին ցնցուիր, եւ դա քեզ կը հանգստացնի,- ասաց Արան:

Եւ Եահվահը այնուհետեւ ստորգետնեայ տիրակալ դարձաւ: Բայց իր հոգու մէջ մշտապէս պահում է ատելութիւնը Վահագնի եւ նրա հովանաւորեալ Արիների դէմ: Եւ երբեմն երբ նրա մաղձը շատ է կուտակւում, նա ցնցում է Արարատը, պատժելու համար Արիներին:

Եւ Արիները այնուհետեւ վախենում էին Եահվահից ու այլեւս նրան զոհ չէին մատուցում:

Եւ Արարիչը բնութեան մէջ հաստատել է բնական պարբերութիւնների մշտական յաջորդականութիւն. որպէսզի բնութիւնն անընդհատ նորոգուի. քարմանայ եւ դրանով ապահովի իր յաւերժութիւնը: Արարիչը բնական պարբերութիւններ է սահմանել եւ Երկրի վրայ. որ անուանում ենք տարի:

Երկրի վրայ ամէն պարբերութիւն տարի. սկըսւում է գարնան երկունքով, երբ հալչում է ձմեռւայ ձիւնը, ողողում է հողը, եւ կեանքի ծիլերն են բարձրանում հողի կրծքից: Եւ Գարունը Երկրի վրայ արտայայտում է Նոր Տարուայ սկիզբ:

Տիեզերական ամէն պարբերութիւն սկսւում է Տիեզերական Գարնան երկունքով. որը Երկրի վրայ արտայայտւում է Համաշխարհային Զրհեղեղով:

Զրհեղեղը ողողում է Երկրի Յարաբերական Ցամաքը: Եւ Երկրի ամբողջ զգացական կեանքը խտանում է իր արմատների մէջ Կենաց Գօտում: Կենաց Գօտին շատ բարձր դիրք ունի եւ արեւելքից արեւմուտք ձգուող լեռնաշղթաներով պաշտպանւում է ջրի հոսանքից: Եւ Կենաց Գօտին Երկրի Յաւերժական Ցամաքն է: Կենաց Գօտու մէջ է գտնւում նաեւ երկրային աստուածների Արիների Օրոցքը Արարատը:

Եւ Տիեզերական Գարնան այդ երկունքից ծընւում է Արայի որդի Վահագնը հէնց Արարատում հովանաւորելու եւ առաջնորդելու համար Արայից սիրուած Արի ցեղին: Վահագնի ծնունդը հաստատում է Տիեզերական Նոր Տարուայ սկիզբ: Վահագնի ծնունդով սկսւում է երկրային կեանքի նոր պարբերութիւն, նոր պատմութիւն, իսկ Արարատում նոր տարեգրութիւն:

Արարատում միայն ուժեղներն էին վերապրում Զրհեղեղը: Իսկ ուժեղներից միայն ուժեղներ էին ծնւում: Եւ ապրում էին Արիները որպէս աստուածներ երկրային աստուածներ, աստուածային հզօրութեամբ:

Բարեպաշտ էին Արիները, հետեւում էին անմահ աստուածներին, զոհ էին մատուցում նրանց: Եւ անմահ աստուածները հովանաւորում էին Արիներին:

Արիները երջանիկ էին եւ առողջ: Նրանք չգիտէին, թէ ինչ է հիւանդութիւնը եւ ուժահատ ծերութիւնը. մշտապէս ուժեղ էին եւ ամուր: Նրանց երկարատեւ կեանքին յաջորդող մահը նման էր հանգիստ ու մեղմ երազի:

Կեանքով լի էին Արիները Տիեզերական Գարնանը: Նրանք սիրում էին կեանքը, բայց մահից էլ չէին վախենում, քանզի հաւատում էին իրենց յաւերժութեանը, որը հաստատում էր անընդհատ վերածնունդով իրենց սերունդների մէջ:

Տիեզերական Գարնանը յաջորդում էր Տիեզերական Ամառը: Երկրի ջուրը նահանջում էր, սառցալեռներ գոյացնելով բեւեռներում: Եւ աստիճանաբար բացւում էր Յարաբերական Ցամաքը:

Եւ Արարատից Արի տոհմերից գաղթական խմբեր տարածւում էին նոր ցամաքի վրայ: Եւ այդ բոլորն էլ հէնց Արարատում իրենց Հայրական Տոհմերը ունէին, իրենց տոհմական որակներն ունէին, իրենց տոհմական արժէքներն ունէին եւ սովորոյթներ, եւ աւանդոյթներ... այդ ամէնը ունէին Մայր Արարատում: Եւ այդ ամէնը հետներն էին տանում, եւ նոր հողերում իրենց Տոհմերի ծիւղերն էին ստեղծում: Հէնց այդ ազգակից խմբերը Արի Ազգեր էին կազմում եւ հէնց հայրական օճախի կողքին իրենց Ազգային Տներն էին շինում:

Եւ այդ բազմաթիւ ազգերը Արի նոյն ծառի ծիւղեր, ազգակից միմեանց, հէնց նոյն Արմատից սնունդ էին ստանում, հայրական օճախից կրակ էին ստանում: Եւ Ազգերն Արի առողջ էին այնքան, որքան սնւում էին իրենց Արմատից եւ Արարատում իրենց Արմատն էին զգում, որով կապւում էին Հայր Արային եւ անմահ աստուածներին:

Բայց եկաւ Աշուն: Չորանում էր ցամաքը: Նորանոր հողեր էին բացւում ջրի տակից եւ պակասում էր Երկրի ջուրը: Վիշապը Երկիր էր իջել, բռնել էր ջուրը,այն հաւաքում էր բեւեռներում եւ սառեցնում: Եւ ցամաքը զրկւում էր ջրի պաշարից, ջրի պակասը առանձնապէս զգացւում էր Յարաբերական Ցամաքի վրայ. Արարատից դուրս: Դժուարանում էր կեանքը: Իսկ վիշապը զոհ էր պահանջում, ջուր տալու համար եւ ոչ պարզապէս զոհ, այլ Արի զոհ: Եւ Արիները զոհում էին իրար: Արի Ազգերը իրար էին սպաննում. իրար յօշոտում եւ արի եղբօր արիւնով սնում Չարի Վիշապի ստամոքսը անյագ:

Եւ տկարանում էր Արիների աստուածային զօրութիւնը: Եւ սաստկանում էին դաժան ու արիւնալի պատերազմները: Արի Ազգերը լքում էին իրենց աստուածներին եւ մի կում ջուր ստանալու համար երկրպագում էին Վիշապին: Իսկ Չարի Տիտանները զօրանում էին. քանզի նրանք ջրի պակասութիւն չէին զգում. չէ որ նրանք անապատների զաւակներ էին. եւ Վիշապն էլ հովանաւորում էր նրանց:

Արի Ազգերը հոգեպէս կտրւում էին Արարատից: Նրանք այլեւս չէին սնւում իրենց արմատներից ու չէին պահպանում որակներն Արի, չէին պահպանում բարքերը Ցեղի եւ չէին պահպանում դէմքը ազգային: Եւ Ազգերն Արի տերեւաթափ էին լինում իրեն Արիական որակից:

Եւ որքան մօտենում էր Չմեռը, այնքան սաստկանում էին քամիները. որ հիւսիսից ու հարաւից փչում էին Արարատի վրայ: Եւ օղակւում էր Արարատը Չարի յորդաներում:

Արարատում Արիները քաջաբար կռւում էին : Նրանց հովանաւորում էր Զօրութեան աստուած Վահագնը, եւ առնական ու անպարտելի էր Արիների բազուկը:

Բայց եկաւ Չմեռ յարաբերական մահը Երկրի: Չարի Վիշապը ահեղ ոռնոցով արշաւում էր Երկրի մի ծայրից միւսը: Եւ վիշապի հովանաւորութեամբ զօրացած Չարիները յաղթում էին տկարացած Արիներին: Եւ Արիները Արարատից դուրս իրենք էին դառնում Վիշապին սպասաւոր: Իրենց Արի ծագումը մոռացած, իրենք իրենցից օտարացել էին եւ մահուան կրօնների հաշիշով հարբած, խարխափում էին խոր թմբիրի մէջ: Եւ բթացել էր զգացմունքը նրանց, պղծող էին դարձել արարող Արիք եւ գազազած իրենք իրենց էին պղծում. իրենց արիութիւնն էին հալածում իրենց մէջ. իրենք իրենց էին դաւում եւ դաւում էին իրենց Արարատին:

Իսկ Չարին ոչ թէ ստեղծածն Արիի, այլ հէնց ստեղծողին էլ աւերում արդէն: Եւ Արի Ցեղածառի Արմատն էր կտրում հէնց Արարատում: Իսկ Արի ազգերը օգնում էին նրան իրենց սպանելու:

Իսկ Արիները հէնց Արարատում երկար ժամանակ կռիւ էին տալիս աշխարհի բոլոր Չարիների դէմ արիւն էին թափում, վէրքեր էին ստանում, ընկնում ջարդուած, յառնում յաղթական... Թէեւ նրանք արմատն էին Ցեղի. թէեւ Վահագնեայ զօրութիւն ունէին. բայց ոչ թէ Ցեղի, այլ Ցեղերի դէմ ի՞նչքան պայքարեն: Մի Արարատը ողջ աշխարհի դէմ: Եւ դեռ կը կռուէր, դեռ կը պաշտպանուէր չարիի պղծումից, բայց հէնց իր Ցեղից Արի ազգերից ինչպէս պաշտպանուէր:

Եւ պղծուեց Արարատը: Եւ Արիները ուրացան իրենց Հայր Արային, ուրացան Վահագնին... Եւ աստուածները այլեւս չէին կարող օգնել Արիներին. քանզի հէնց հաւատով են զօրաւոր աստուածները: Հեռացան բոլոր աստուածները Արարատից եւ միայն մահաշունչ Վիշապը յաղթական բազմեց Արարատում:

Եւ հէնց այն օրուանից, երբ Արիները ուրացան իրենց աստուածներին, վիշտն ու հիւծող աղէտները ուղեկցեցին նրանց: Վերացաւ նրանց զօրութիւնը, վերացաւ սէրը, արարումը: Չաւակները այլեւս պատիւ չէին տալիս ծնողներին, ընկերը հաւատարիմ չէր ընկերոջը. սէր չկար եղբայրների մէջ. կինը դուրս էր եկել իրենից եւ կեանքն էր դաւում: Արիներին իրենց ձեռքով աւերում էին իրենց քաղաքները, քանդում էին տաճարները, պղծում էին իրենց նախնիների յիշատակը:

Ամէնուրեք Չարի Վիշապի բռնութիւնն էր տիրում: Եւ վիշապի մահազգեստ սպասաւորներն էին ամբոխին առաջնորդում: Եւ Արիներին բաժին ընկան միայն հոգեմաշ դժբախտութիւններ, եւ նրանք պաշտպանութիւն չունէին ընդդէմ չարիքի:

Մահաշունչ Չմեռ էր Երկրի վրայ եւ Արարատում: Ցուրտն էր պատել Արիների հոգիներն ու մտքերը:

Բայց... Չմեռից յետոյ գալու է Գարուն:

ՍԼԱԿ ԿԱԿՈՍԵԱՆ

«ԱԶԴԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազդակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 5:

ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահապդ կ՚ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ կայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄՇԱԿՈՅԹԻՆ ՈՒԺԸ

ՀԱՄԱՁԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՇԱՒԱՆՔԸ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՐՏԱԾՈՒՄԸ՝ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄՇԱԿՈՅԹԸ ԿԸ ԵՐԱՇՏՈՒԹԵԱՆ ՉԳԱՑՈՂՈՒԹԵԱՄԲ ՀԱՄԱԿՈՒՄԱԾ ԱՇԽԱՐԸՔ, ՈՐ ՏԱՐՕՐԻՆԱԿ ՀԱԿԱՍՈՒԹԵԱՄԲ ՄԸ Կ՚ԸՆԴՈՒՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՅՍ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ



Չինաստանի Մեծ Պատին վրայ կին մը կ՚ըմբոշխնէ ամերիկեան ժողովրդային մշակոյթի խորհրդանիշ մը՝ Քոքա Քոլա:

Ֆասթ ֆուտի ամերիկեան «թագաւորը» *Մըքտանըլտ*ը ճաշարանը քանի մը շաբաթ առաջ մասնաճիւղ մը բացաւ Պէյրութի մէջ եւ բոլորս ականատես եղանք անոր առջեւ ստեղծուած արտասովոր խճողումին: *Հեմպըրկըր* եւ *ֆրիթ* սպառարկող առաջին ճաշարանը չէր, որ կը բացուէր Պէյրութի մէջ, ոչ ալ *Մըքտանըլտ*ի *ֆասթ ֆուտը* արտակարգ համ մը ունէր: Ի՞նչ էր պատճառը, որ *հեմպըրկըր* վաճառող այլ ճաշարաններու առջեւ երբեւիցէ հերթի սպասող «սովահարներ» չէին նկատուած...

*Մըքտանըլտ*ը մաս կը կազմէ ամերիկեան ժողովրդային մշակոյթի արտադրութեան: Իրօք, ի՞նչ է, որ այս մշակոյթը այնքան գրաւիչ կը դարձնէ ոչ ամերիկացիներուն համար: Ինչո՞ւ աշխարհի ժողովուրդները հակառակ իրենց ազգային հպարտութեան կը կլանուին անով:

Միջազգային «*Հերըլտ Թրիպիւն*» օրաթերթին մէջ Հոկտեմբերի վերջին շաբթուան ընթացքին լոյս տեսաւ յօդուածաշարք մը, որ կը միտէր վերլուծել ամերիկեան ժողովրդային մշակոյթին համաշխարհային ընկալումին պատճառները: Քովի սիւնակներով համադրաբար կը ներկայացնենք տարբեր յօդուածագիրներու կողմէ պարզուած տեսակէտները:

Միացեալ Նահանգներու մեծագոյն արտածումը այլեւս անոր դաշտերուն բերքը կամ գործարաններուն արտադրութիւնը չէ, այլ անոր ժողովրդային մշակոյթին զանգուածային արտադրութիւնը, այսինքն ժապաւէններն ու երաժշտութիւնը, պատկերասփիւռի յայտագիրները, գիրքերն ու համակարգիչի սարքերը:

Աշխարհի տարածքին ժամանցի մարզը տիրապետուած է ամերիկեան արտադրութիւններով: Նիւ Տելիհիէն մինչեւ Տապլին, Նայրոպի, Սաօ Փաուլօ եւ Վարշաւա ամերիկեան ժապաւէններ կը պլպլան պաստառներու վրայ եւ Պարթ Սիմփսընի կամ Մատոնայի ձայնը կը հնչէ գիշերային հաճոյքի վայրերու մէջ:

Համակարգիչի սարքերու եւ ժամանցի առընչուող արտադրութիւններու միջազգային վաճառքը 60,2 միլիառ տոլարի հասած է 1996ին, ինչ որ շատ աւելի է, քան ամերիկեան որեւէ ճարտարարուեստի արձանագրած վաճառքը: Խորհրդային Միութեան քայքայումէն ի վեր Միացեալ Նահանգներու դիմաց նոր շուկաներ բացուած են աշխարհի տարածքին եւ Միացեալ Նահանգներու մտաւորական արտադրութիւնը տոլարի չափանիշներով աւելցած է 94 առ հարիւր համեմատութեամբ: Այս գումարը հաշուի չ՚առներ ամէն տարի արձանագրուող միլիառաւոր տոլարի կորուստը ապօրինի ընդօրինակութիւններու ճամբով:

Մինչ մտաւորականներ կը վիճին այս գերակայութեան առաւելութիւններուն եւ անպատեհութիւններուն մասին, անժխտելի է, որ յետ Պաղ Պատերազմի ազատ շուկայի եւ ազատ առեւտուրի մթնոլորտին մէջ ամերիկեան մշակոյթը կը թափանցէ տնտեսութեան վրայ պետական հակակշիռի քաղաքականութենէն ծերբազատած երկիրներ: Ընկերաբանի մը կարծիքով ամերիկեան ժողովրդային մշակոյթը «*Նորագոյնն է համաշխարհային միաձուլումի ծգտողներու երկար շարքին մէջ: Անիկա կը յաջորդէ Հռոմէական կայսրութեան եւ կաթոլիկ եկեղեցիին կողմէ պարտադրուած լատինական մշակոյթին եւ մարքսական լենինականութեան*»:

Պատկերասփիւռի երաժշտական համաշխարհային *էմ. Թի. Վի.* ցանցին նախագահը այլ ձեւով կը դիտէ իրավիճակը: «*Այսօրուան երիտասարդները մուտքի արտօնագիր ունին դէպի երկու աշխարհներ. իրենց սեփական մշակոյթի աշխարհը եւ մերը*»:

Ժամանակին ամերիկեան ժամանցի մշակոյթը կը թափանցէր այնպիսի վայրեր. ուր կարելիութիւնը կար զայն գնելու, քաղաքական ազատութիւնը զայն ընկալելու եւ արհեստագիտական միջոցները զայն ցուցադրելու: Այսօր, նոյնիսկ Հիմալայեան հեռաւոր Պութան երկրին մէջ, ուր տարեկան հազիւ 5 հազար հոգի կ՚այցելէ, փերեզակներու կառքերուն վրայ կարելի է հանդիպիլ հոլիվուտեան նորագոյն ժապաւէններուն ապօրինի ընդօրինակութիւններուն:

ԱՋԱՏ ԺԱՄԱՆԱԿ, ՎԱՏՆԵԼԻ ԵԿԱՄՈՒՏ

Ամերիկեան ժողովրդային մշակոյթի տարածումը կը հետեւի համաշխարհային շարք մը մեծ իրադարձութիւններու: Հիմնականը այն է, որ վերջին 10 տարիներուն գրեթէ իւրաքանչիւր երկիր աւելի հարստացած է, հակառակ աշխարհի կարգ մը շրջաններուն մէջ տիրող տնտեսական քոհուբոհին: Բարգաւաճութեան այս «լուսապսակը» երկու անհրաժեշտ բաղադրեալներ ապահոված է ժամանցի տնտեսութեան ծաղկումին. ազատ ժամանակ եւ վատնելի եկամուտ:

Սպառողներու հարստութիւնը իր կարգին աւելցուցած է պատկերասփիւռի, *վիտէո*յի գործիքներու, *սթերէո*ներու, անձնական համակարգիչներու եւ արբանեակներու վաճառքը աշխարհի տարածքին: Անիկա նաեւ մղած է ներդրումները աւելցնելու հանրային ժամանցի մարզերու մէջ, ինչպէս շարժապատկերի սրահներու կառուցումի եւ արբանեակներով պատկերասփիւռի համաշխարհային ցանցեր օգտագործելու մէջ: Ջուտ ամերիկեան երեւոյթ մը բազմայարկ շարժապատկերի սրահները արագօրէն «կը բուսնին» Եւրոպայի. Ասիոյ եւ Լատին Ամերիկայի տարածքին: *Վիտէո*յի «*Պլոքպասթըր էնթըրթէյնմընթ*» ընկերութիւնը 2000 կեդրոններ ունի 26 երկիրներու տարածքին: «*Թաուըր Ռեքորտ*»ի 70 վաճառատուներ կան 15 երկիրներու մէջ: Մինչեւ վերջերս Հնդկաստանի շուրջ մէկ միլիառ բնակչութիւնը կը դիտէր պետական պատկերասփիւռի կայաններու «*Տուրտարշան*» ցանցէն սփռուած յայտագիրները: Այժմ աւելի քան տասնեակ կայաններ կը պատկերասփռուին արբանեակներու ճամբով:

Ամերիկեան ժամանցի մշակոյթի հսկաները «*Թայմ Ուորնըր*»ն ու «*Ուոլթ Տիզնի*»ն երկար ատեն ի վեր մեծ առաւելութիւն կը վայելեն իրենց օտար մրցակիցներուն վրայ, ինչ որ անոնց առիթ կու տայ յաւելեալ եւ աւելի մեծածախս ժապաւէններ եւ պատկերասփիւռի յայտագիրներ պատրաստելու: Ամերիկեան այս ընկերութիւնները միշտ ալ յաջողած են ամէնէն մեծածախս արտադրութիւնները հրապարակել շնորհիւ իրենց երկրին մէջ ժամանցի արտադրութիւններու անյագ պահանջին: Իրենց հարուստ սպառողական շուկաներէն օգտուելով, անոնք կը յաջողին գնել ժապաւէններու պատրաստութեան նորագոյն արհեստագիտութիւնը եւ իրենց աշխարհը ողողել աստղերով, շքեղ տարազներով եւ զանգուածները հաճոյացնող արուեստական յատուկ տպաւորութիւններով:

Ոչ մէկ օտար ընկերութիւն կարողացած է հաւասարապէս տոկալ մշակութային այս մրցակցութեան մէջ: Ոչ մէկ ընկերութիւն կրնայ մրցիլ ամերիկեան ժապաւէններ եւ պատկերասփիւռի յայտագիրներ ցրուող եւ վաճառող ամերիկեան ընկերութիւններու հետ: Թէեւ շարժապատկերի ճարտարարուեստին ճամբան առաջին հարթողները եղած են ֆրանսական, գերմանական եւ հոլանտական ընկերութիւնները:

Իր փողփողուն պատկերին, սեռայնութեան, արագութեան եւ վայրագութեան շնորհիւ տարածուղ ամերիկեան ժողովրդային մշակոյթը գրաւիչ է նաեւ, որովհետեւ կ՚արտացոլացնէ Միացեալ Նահանգներու բնախորհուրդները, ինչպէս անհատականութիւն, հարստութիւն, յառաջդիմութիւն, հանդուրժողութիւն եւ լաւատեսութիւն:

Ժապաւէններու յատուկ գրականութիւն մշակող արուեստագէտ Ալեքսանտր Սինճըր կը նշէ ամերիկեան պատմողական արուեստին աշխատաւորական գաղթականներու փորձառութիւնները, որոնք կարեկցանք մը կ՚արտայայտեն սովորական մարդուն մղած պայքարներուն հանդէպ. «*Մեր աւելի կանուխ ժամանակներու ժապաւէնները համամարդկային բաներ կ՚ըսէին տիւաւոր զըրկանքներու դիմաց ցուցաբերուած քաջութեան եւ զգայնութեան մասին: Անոնք կերպարանափոխումի կախարդական կարելիութիւններ կ՚ընծեռեն*»:

Էլ Սալվատորի ամէնէն հռչակաւոր գրագէտը Տէյվիտ Էսքոպար Կալիճտօ կ՚ըսէ. «*Միացեալ Նահանգներ կարճ պատմութիւն մը ունին եւ բաց են նորութիւններու դիմաց: Եւրոպան բազմաթիւ հրաշալի բաներ ունի, բայց շատ կապուած է իր անցեալին*»:

Ֆրանսայի մշակոյթին նախկին նախարար Ժաք Լանկ Միացեալ Նահանգներու մշակոյթը կ՚ըմբոշխնէ իբրեւ «*զուտ ժամանց, որ մանուկի մը հոգին կը գտնէ չափահասի մը մարմնին մէջ*»:

Անշուշտ կայ նաեւ կրօնական պահպանողական տեսակէտ մը, որ ամերիկեան մշակոյթը կը նկատէ աւանդական արժէքները յեղաշրջող եւ նենգութիւնը քաջալերող սադայէլական ծնունդ մը: Այս դիտանկիւնէն ամերիկեան ժապաւէնները կը նկատուին անմիտ սպառողականութիւն տարածող միջոցներ եւ ազգային ստեղծագործականութիւնը խեղդող քոյլ:


Սակայն ամերիկեան որեւէ արտադրութիւն բացայայտ կերպով մերժելու կեցուածքը նկատառելիօրէն մեղմացած է Պաղ Պատերազմի աւարտէն ետք: Նախապէս հակաամերիկեան քաղաքականութիւն վարող համայնավար երկիրներ ամերիկեան մշակոյթը փտած կը համարէին: Այժմ ամերիկեան արտադրութիւնները ընդհանրապէս լաւ ընդունելութիւն կը գտնեն, թէեւ որոշ վարանումով եւ իրաւացի զգուշաւորութեամբ:

ՊԱՏՃԱՌԸ ՍԱՍՍԸՔ ԼԵԶՈՒԱԿԱՆ Է, ՍԱՍՍԸՔ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՍԱՍՍԸՔ Կ՚ԱՐՏԱՑՈՂԱԾԵ ՍԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ, ՑԵՂԱՅԻՆ ԵՒ ՀԱՆԴԱՓԱՐԱԲԱՆԱԿԱՆ ԻՐՈՒՅԱՏՈՒԿ ՀԱՐԳԱՅՏՈՒՄԸ

Ամերիկեան արտադրութիւնները անգլերէնով ստեղծուած ըլլալու առաւելութիւնը կը վայելեն: Անգլերէնը բարգաւաճ եւ բարգաւաճող աշխարհի առաջին կամ երկրորդ լեզուն է: Շարժապատկերի միջազգային աշխարհին մէջ արտադրուած ժապաւէններուն 60էն 65 առ հարիւրը անգլերէն է եւ անոնց մեծ մասը ամերիկեան: Անգլերէնով հրապարակուած ժապաւէն մը անմիջապէս մուտք կը գործէ աշխարհի ժապաւէնի շուկաները: Ամերիկեան ժապաւէններն ու ձայնագրութիւնները նախասիրութիւն են նաեւ այն վայրերուն մէջ, ուր անգլերէնը շատ չի գործածուիր:

Այս երեւոյթը մտածել կու տայ անխուսափելի հարցումին մասին. արդեօք ամերիկեան ժողովրդային մշակո՞յթը անգլերէնի միջոցով կ՚արշաւէ դէպի աշխարհի չորս կողմերը, թէ՞ անգլերէնը միջոցով անգլերէնն է, որ կը տարածուի ամէն կողմ:

Երբեմն դժուար է ամերիկեան ժողովրդային մշակոյթը զանազանել անգլերէն լեզուի գործածութենէն: Հնդկաստանի մէջ ամերիկեան ժողովրդային երաժշտութեան սիրահար պատանիներ իրենց խօսակցութիւնը կը համեմեն «*քուլ*», «*չիլ*» կամ «*հեփընհոք*» բառերով, բոլորն ալ ռամկաբանական գործածութեամբ: Ամերիկեան երեւելու մարմաջը Լատին Ամերիկայի մէջ գործատէրերը մղած է իրենց վաճառատուներուն անունին վերջաւորութեան ապաթարց մը եւ անգլերէն «U» մը աւելցնելու: Անգլերէնը համակարգիչով հաղորդակցութեան եւ միջազգային հանդիպումներու լեզուն է:



Թեհրանի մէջ ծածկուած երկու կիներ կը քալեն Չարլի Չափլինի թատրոնին առջեւ

ՀԱԿԱՀԱՐՈՒԱԾՔ

ԻՆՉ ՈՐ ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ ԻՐ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳՈՐԾԷ ՀՈԼԻՎՈՒՏԻ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ «ՄԵԾԵՐՈՒԻՆ» ԱՊԱԳԱՅԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒԻՆ ՎՐԱՅ

Ամերիկացիներուն մեծամասնութիւնը կը գիտակցի, թէ իր ժողովրդային մշակոյթը հզօր ազդեցութիւն կը գործէ աշխարհի տարածքին՝ հաչեցակէտեր, ուղղութիւններ եւ ոճեր ձեւաւորելով: Սակայն նաեւ ճշմարտութիւն է այն, որ չատ աւելի գօրաւոր ազդեցութիւն մը կ՚արձանագրուի ինքնին Միացեալ Նահանգներու մէջ: Ամերիկեան արտադրութիւններուն ստեղծած համաշխարհային հետաքրքրութիւնը կը խթանէ ամերիկեան մշակոյթին այն մարգերը, որոնք չուկայ կը գտնեն արտասահմանին մէջ եւ չի քաջալերեր այն ծրագիրները, որոնք կրնան յաջողութիւն չգտնել օտար երկիրներու տարածքին:

Այս երեւոյթը ամէնէն աւելի ակներեւ է շարժապատկերի ճարտարարուեստին մէջ: Անցեալ տարի ամերիկեան ժապաւէններ ցրուող ընկերութիւններ 5,85 միլիառ տոլարի չահ ապահոված են իրենց արտաքին վաճառքէն: Կը նախատեսուի, որ այս եկամուտը տարին ՃՀն Ի առ հարիւր համեմատութեամբ աճ արձանագրէ, ինչ որ ամերիկացիներուն անհատական եկամուտի աճէն երեք անգամ աւելի արագ է: Աւելի՛ն. ամերիկեան ժապաւէններ աւելի մեծ չահ կ՚ապահովեն արտասահմանի մէջ: «Թայթանիք» ժապաւէնը 600 միլիոն տոլարի չահ արձանագրեց Միացեալ Նահանգներու մէջ, իսկ արտասահմանի մէջ՝ կրկնապատիկը:

Նման թիւեր հետզհետէ աւելի մեծ ազդեցութիւն կը գործեն հոլիվուտեան արտադրութիւններու բովանդակութեան վրայ, քաջալերելով վայրագ տեսարաններով ժապաւէններու պատրաստութիւնը, Արնոլտ Շուարցենեկըրի, Սիլվեսթըր Սթալոնի եւ Պրուս Ուիլիսի խաղարկութեամբ եւ ամրողջացած՝ արուեստական յատուկ տպաւորութիւններ աւթող հնարքներով: Կարճ խօսակցութիւններով եւ ջիդերը գրգռող տեսարաններով ժապաւէնները հետզհետէ լուսանցքներու վրայ կը ձգեն այլ ժապաւէններ:

Կարգ մը քննադատներ այն մտավախութիւնը կը յայտնեն, թէ հոլիվուտեան արտադրութիւնները սկսած են որակագրկել ամերիկեան ընկերութեան պատկերը: Ժապաւէնները կ՚արտացոլացնեն գաղափարներ եւ արժէքներ: Երեք տարի առաջ սեւամորթ դերասաններ եւ բեմադրիչներ յուսախարութեամբ լսեցին հոլիվուտեան «Էվիթա» եւ «Քրիմսըն Թայտ» ժապաւէններու արտադրիչ Անտրիւ Վայնայի յայտարարութիւնը, որ կ՚ըսէր. «Ներթախտարար այսօր գոյութիւն չունինի օտար շուկաներ՝ հետաքրքրող սեւամորթ դերասաններ»: Հոլիվուտեան ժապաւէններու արտադրիչներ կը պատճառաբանեն, թէ միջազգային շուկաները հետաքրքրուած չեն սեւամորթ կամ այլ փոքրամասնութիւններ ներկայացնող նիւթերով եւ դերասաններով: Անոնք կը մերժեն ընդունիլ, թէ ցեղային խտրականութիւն կը կիրարկեն: «Ասիկա գործառնութիւն է: Պատմութիւնը ցոյց տուած է, թէ ափրիկեան-ամերիկեան ժապաւէնները չեն ներկրուած օտար հանդիսատեսներուն: Ներքին ասոնք հետաքրքրութիւն ստեղծած են, սակայն տակաւին աւելի բացատրութիւն դած է, ըսի՝ օրէնք», կ՚ըսէ «Նուինիվրըսըլ Փիքչըրզ»ի տնօրէնը:

Այն բեմադրիչներն ու դերասանները, որոնք հոլիվուտեան միջազգային չուկային մէջ տեղ չեն կրնար գտնել, կը փինանսաւորուին անկախ կամ եւրոպական աղբիւրներու կողմէ: Վուտի Ալլընի ժապաւէնները քննադատներու գնահատանքին կ՚արժանանան, սակայն Միացեալ Նահանգներու տարածքին հասութաբեր չեն նկատուիր: Այսուհանդերձ ան հանճար մը կը նկատուի Եւրոպայի մէջ եւ եւրոպական անկախ ընկերութիւն մը կը հովանաւորէ անոր ժապաւէնները:

Նաեւ որոշ փաստեր կան, թէ Միացեալ Նահանգներն դուրս հանդիսատեսներուն ճաշակը սկսած է փոխուիլ եւ ամերիկացի հանդիսատեսներուն նման՝ հետզհետէ աւելի դժուարահաճ դառնայ:

ԸՆԴՕՐԻՆԱԿՈՂՆԵՐ ԵՒ ԹՇՆԱՄԻՆԵՐ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ ԱՅԼԱԶԱՆՈՒԹԵԱՆ, «ՁՈՒԼԱԲԱՆԻ» ՀՌՉԱԿԻՆ, ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՅԹՆԵՐՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄԻ ԵՒ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

«Ինչ որ կը պատահի ներկայիս միատարազբան մը չէ: Այլազանութիւն է եւ բազմաձայնութիւն: Բազմագոյն դաշտանկար մը կը պարզուի», ըսած է Ֆրանսայի մշակոյթի նախկին նախարար Ժաք Լանկ:

Իրօք, այն անգլերէնը, որ կը խօսուի Պոմպէյի, Լիվըրփուլի, Մանիլայի, Լակոսի, Լոս Անճելըսի եւ Մելպուռնի մէջ նոյնը չէ: Միացեալ Նահանգներու «երազային աշխարհը» ինքնին կազմուած է օտար անուններէ, ինչպէս Նիքոլ Քիտմանի կամ Թիլա Պրաուն: «Ֆաստ ֆուտը արդէն ծանօթ էր մեզի: Իվերջոյ ի՞նչ է Ֆելեֆիլը», պիտի ըսէր արաբ մը:

Այս բոլորը ներգնեետ ամերիկեան կը դառնան, սակայն նաեւ ամերիկացիք կը սկսին անոնց նմանիլ:

*Մըքտանըլտ*ի ճաշարաններու ցանցը երբ մասնաճիւղեր պիտի բանար Գերմանիոյ մէջ, մշակութային իր միջավայրին պատշաճելու համար ներկայացուց աւելի աւանդական փայտէ ծածկոյթով պատերը եւ ներքին յարդարանքի ձեւը: Վաճառքը յուսախաբութիւն պատճառեց: Երբ *Մըքտանըլտ* շրջեց ճաշարաններուն յարդարանքը եւ օգտագործեց ամերիկեան ոճն ու գունագեղ թափանցիկ կառուցուածքի ձեւը, վաճառքը մագլցում արձանագրեց:

Ամերիկեան մշակոյթը իր արտադրութեան տարողութենեն անդին նաեւ յաճախ կ՚առնչուի երիտասարդութեան, ազատութեան, դրամի, սեփական ուժի վստահելու ամէն ինչ ներկատելու եւ ամէն ինչ սեփական ճիգերով իրագործելու գաղափարներուն հետ: Սակայն մարդիկ յաճախ այս բոլորը կը ներկարագրեն իբրեւ համաշխարհային գաղափարներ եւ ցանկութիւններ եւ ոչ անպայման բացառապէս ամերիկեան երեւոյթներ: Ամերիկեան արտադրութիւններ աւելի կը ծախուին, պարզապէս որովհետեւ աւելի լաւ մտածուած եւ նպատակադրուած են շուկայական տարածումի համար: «*Ջեր երկիրը վաճառքի շուկաներ ստեղծելու տաղանդը ունի*», ըսած է ֆրանսացի վիպագիր Ֆիլիփ Լապրօ:

Յայտնապէս աշխարհը սկսած է ամերիկեան բաներու ազգային տարբերակը ստեղծել, ինչ որ կրնայ աստիճանաբար անհետացնել Միացեալ Նահանգներու «ձուլարանի» պատկերը: Քոլոմպիոյ մէջ ամերիկեան պատկերասփիւռի յայտագիրները շատ աւելի ժողովրդականութիւն կը վայելէին 25 տարի առաջ, քան այսօր: Քոլոմպիական պատկերասփիւռի կայանները ձեռնարկած են սպաներէն ճմաւօրինակ յայտագիրներու պատրաստութեան արշաւի մը, իրենց յատուկ համաշխարհային շուկայ մը ստեղծելով: Մշակութային տեսակետէն փոփոխութիւն մը ապրող Ասիոյ տարածքին կը գերիշխէ ճապոնը, որուն մշակութային արտադրութիւնները լայն տարածում կը գտնեն նոյնիսկ Չինաստանի մէջ:

Այսուհանդերձ ամերիկեան մշակոյթի ուժը տարողութիւնը բազմաթիւ երկիրներ կը մղէ ազգային մշակոյթը պահպանելու եւ ամերիկեանին հանդէպ հակակրութիւն ցուցաբերելու: Ֆրանսա, Ռուսիա, Մեքսիքա եւ Քանատա զանազան օրէնքներ սահմանած են ամերիկեան մշակոյթի արտադրութեանց վաճառքին առընչութեամբ: Թէեւ Ֆրանսայի մշակոյթի նախկին նախարար Ժաք Լանկ ըսած է.

«Մշակոյթի առաջին համաշխարհայնացումը տեղի ունեցաւ հինգ դար առաջ. Վերածընունդի շարժումով: Եւ ատիկա համազօր էր կեանքի ծագկումի մը. իր բազմաճիւղ երեսներով: Ո՞ր աւեծքին համաձայն այս երկրորդ մեծ համաշխարհայնացումը վերջ պիտի գտնէ միաձուլումով»:

Պատրաստեց
Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ - ՍՐԱՊԵԱՆ

ՕՐԱՏԵՏՐ

ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐ

◆ *ԱՆՏԵՐ ՓՐԵՇԸՐ*- (*Սաժէս. Փլաճէթ/Ջուք եւ Ապրաժ*).- Հաւետստ եւ ծառայող հրշէջ մը կը սկսի հետզհետէ կորսնցնել իր հաւասարակշռութիւնը. մինչեւ իսկ դիմելով ոճրագործութեան: Դերասանութիւն՝ Չարլի Շիճի:

◆ *ՏԻ ԱՎԵՆՃԸՐՋ*- (*Փլաճէթ/Ապրաժ եւ փլագա. Քոնքորտ եւ Ասթպաստ*).- Շոն Քոնըրի մտադրած է երկրագունդը ցնցել՝ կլիման փոփոխութեան ենթարկելով: Պատկերասփիւռի յայտագիր մը, երկար ժապաւէնի վերածուած:

◆ *-ՏԸ ԹՐՈՒՄԱՆ ՇՕ*- (*Լփաճէթ/Քասլիք/Ապրաժ. Քոնքորտ եւ Սաժէս*).- Հետաքրքրական յայտագիր մը կը պատրաստէ Թրումպ Պըրպենի, որ սկսած է հալածախտէ տառապիլ, մետիայի այդ սարսափելի սթենոլորտին մէջ: Բեմադրութիւն՝ Փիթըր Ուէրի:

◆ *ՏԻ ԷՔՍ ՖԱՅԼՋ*- (*Ասթիր/ Սոֆիլ. Տիւճ եւ Սոտեքօ. Էսփաս. Սէնթ Էլի*).- Տալասի մէջ շէնք մը փուլ եկած է: Ջոճերու կողքին կը գտնուի մանուկ մը: Կը կարծուի, թէ այլ մոլորակէ եկած անձեր կատարած են այս արարքը:

◆ *ՍՄՈԼ ՍՈԼՃԸՐՋ*- (*Փլաճէթ/ Քասլիք. Ապրաժ. Սաժէս եւ Քոնքորտ*).- Օճայոյի մէկ փոքր քաղաքին մէջ, փոքր խաղալիքներ իրարու դէմ պատերազմ կը մղեն: Պատահիներ կը փորձեն կացութեան տէրը դառնալ:

◆ *ՍԻՔՍ ՏԷՅԶ ԷՆՏ ՍԷՎԸՆ ՆԱՅՏ*- (*Փլաճէթ/ Ջուք/ Ապրաժ Վանտոմ եւ Քոնքորտ*).- Լրագրող մը արձակուրդի մը ընթացքին օդանաւային արկած մը կ՚անցընէ: Ահաւասիկ օդաչուն եւ լրագրողը խաղաղական մէկ անձնաճոթ կղզիին մէջ...

◆ *ՈՒԷՍԹ ՊԷՅՐՈՒԹ*. (*Էսփաս/ Ասթիր. Սոտեքօ Սէնթ Էլի. Էլիթ*).- Լիբանանի քաղաքացիական պատերազմը հնուտ կերպով բեմադրուած երիտասարդ բեմադրիչ Զիատ Տուէյրիի կողմէ. որ մեծ յաջողութիւն գտաւ Քաննի փառատօնին:

◆ *ԼՈԼԻԹԱ*.- (*Էսփաս. Ասթիր/ Սոֆիլ/ Տիւճ/ Սոտեքօ. Սէնթ Էլի*).- Յիսունականներուն Միացեալ Նահանգներու մէջ եւրոպացի ուսուցիչ մը կը հանդիպի 12 տարեկան աշակերտի մը՝ պարմանուհի Լոլիթային: Դերասաններն են՝ Մերեմի Այրընզ եւ Տոմինիք Սուէյն:

◆ *ՍԷՅՎԻՆԿ ՓՐԱՅՎԷՅԹ ՌԱՅԶՆ*- (*Փլաճէթ/ Ապրաժ. Քասլիք. Քոնքորտ եւ Սաժէս*).- Սթիվըն Սփիլպըրկ կը նկարագրէ Բ. Համաշխարհային Պատերազմը... Թոմ Հենքս եւ քանի մը գինուորներ գործուղուած են ճակատ, պարզապէս փնտռելու Հայնզ անունով գինուոր մը: Իր երեք եղբայրները մահացած ըլլալով. Հայնզ պէտք է որ Միացեալ Նահանգներ վերադառնայ:

◆ *ԱՐՄԱԿԵՏՆ*- (*Փլաճէթ/ Ապրաժ. Ջուք. Քոնքորտ եւ Վանտոմ*).- Երկրագունդը վտանգի տակ է: Հսկայ գունդ մը կը սուրայ դէպի Աշխարհ: Ամերիկեան կառավարութիւնը գործի լծուած է այս վտանգը հեռացնելու համար: Դերասաններն են՝ Պրուս Ուիլիս եւ Լիվ Թայլըր:

◆ *-ՆԱՍԸՐ*- (*Ասթիր/ Տիւճ.*).- Եգիպտոսի ծաճօթ ղեկավարին կեանքը անգամ մը եւս կնարահանուած:

◆ *ԼԷ ՄԻԶԵՐԱՊԼ*- (*Ասթիր. Սոտեքօ*).- Վիքթոր Հիւկոյի ծաճօթ վէպը, բեմադրուած դանիացի Պիլ Օկրսթի կողմէ: Դերասաններ՝ Լիամ Նիսըն, Ուսա Թուրման եւ Օէֆրի Ռաշ:

◆ *ԼԷԹԼ ՈՒԵՔԸՆԴ*- (*Ասթպաստ եւ Սաժէս*).- Երկու ոստիկաններ կը հալածեն խմբակ մը, որ կրնայ մեծ վտանգ հանդիսանալ, ահաբեկչական արարքներ կատարելով: Դերասաններ Մել Կիպսըն եւ Տէնի Կլովըր:

◆ *ՏԻ ՕՊՕԵՔԹ ԱՖ ՄԱՅ ԱՖԵՔՏԸ*- (*Մարիհիըն*).- Երբ սիամեռակաի մը կ՚առաջարկուի ընտանիք կազմել, անբնական վիճակ մը ստեղծուած կ՚ըլլայ: Դերասանուհիւ՝ Մեճիֆըր Անիսթընի եւ Փօլ Ռոտի:

◆ *ՏԸ ՄԱՍՔ ԱՖ ԶՈՐՕ*- (*Էսփաս. Ասթիր - Սոտեքօ. Էլիզէ. Էլիթ. Սէնթ Էլի*).- Միեւնոյն ճիւթը միշտ ալ որոշ փոփոխութիւն մը կրած, շարունակ կը բեմադրուի: Մեր Զորռօ՝ Էնթընի Հոփքինզ կը փորձէ գինք փոխարինող մը գտնել, յանձին Անթոնիօ Պանտէրասի:

◆ *-ՄԵՐՔԸՐԻ ՌԱՅԶԻՆԿ*-(*Լա Միթէ*).- Հայրն ու մայրը կորսնցնելէ ետք, որբ սանուկ մը յաջողած է գեր-գաղտնի տեղեկութիւններ ունենալ հակառակորդի մը վրայ: Պրուս Ուիլիսի պարտականութիւնն է մօտենալ այս սանուկին: Բեմադրութիւն՝ Հարոլտ Պեքըրի:

ՕՐՎԱԾԱՊԱՏԿԵՐԻ ՍՐԱՀՆԵՐՈՒՆ ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻՒԵՐԸ

Քոնքորտ.- 738439	Քոլիճէ.- 342962
Փլաճէթ / Ապրաժ.- 292192	Էսփաս.- 212526
Փլաճէթ/ Քասլիք.- 912503/4	Վաճառոմ.- 443992
Ամպասատ.- 217498	Սէնթ Էլի.- 496206
Էլիթ.- 840288	Ասթիր / Տիւճ.- 792123/4
Ասթիր / Սոտեքօ.- 516206/7	Ասթիր / Սոֆիլ.- 204080
Քրթուէլ.- 488598	Սաժէս.- 562006/7

ԹԷ. ԷԼ.

7:30 - *Արաբերէն լուրեր*
8:00.- *Թելէ Մաթէն*
8:30.- *Պարիտ Հանաատի*
9:00.- *Սուպիւէ*
11:00 - *Ժիրան Պարիտա*
12:00.- *Քիֆ Սահթաք*
12:30.- *Եգիպտական՝ «Ուա երկար ժապաւէն՝ Եապքա՛լ Հուպ»*
15:00 - *Ռիժալ Ֆիլ Ասիֆա*
16:00 - *կենդանի գծանկար՝ Պլինքի Պիլ*
16:30.- *Քասիըր Էնտ Ֆրենտս*
17:00.- *Թէլ Մի Ուայ*
17:30 - *Զրաա Եալա Զրաա*
18:00.- *Թուրաս Ուա Ասարաթ*
18:30 - *Տը Պոլտ Էնտ Տը Պիւթիֆուլ*
19:30 - *Արաբերէն լուրեր*
20:00.- *Պարիտ Հանաատի*
20:30.- *Թոք Ռիր*
21:30 - *Այամ Ուա Նաա*
23:00 - *Ռեսքիւ 911*
00:00.- *Ամերիկեան երկար ժապաւէն՝ «Հափֆարս»*

ԷՄ. ԹԻ. ՎԻ.

7:30.- *Մաթէն*
9:00.- *Քլիփս*
9:30 - *Վաւերագրական*
10:30.- *Մակապին*
11:45.- *Ուա Թենսա*
12:30 - *Քի Է Քի*
13:15.- *Տէ Շիֆր Է Տէ Լեթր*
14:00.- *Թէ Էֆ Ի լուրեր*
14:45.- *Մարիսոլ*
15:45 - *Ասղանի Ասղանի*
16:45 - *Կենդանի գծանկար.*
17:15.- *Մինի Սթիւտիօ*
18:00 - *Էմ. Թի. Վի. Սփորց*
18:15.- *Լիր Ան Ֆրանսէ*
18:45.- *Ուա Թենսա*
19:15 - *Քըլ Մէյլէ Ասլէ*
20:00.- *Արաբերէն լուրեր*
20:30.- *Էքս Ֆայլզ*
21:30.- *Մարայա*
23:15.- *Էմ. Թի. Վի. Սփորց*
23:30.- *Ֆրանսական երկար ժապաւէն՝ «Իւն Ֆամիլ Ֆորմիտապլը»*

ԷԻ. ՊԻ. ՍԻ.

7:00 - *Սր. ա.ռ. Էնդլ լուրեր*
7:30 - *Ֆրանս 2ի լուրեր*
8:25 - *Մա Ըլաք Իլլա Հայֆա*
9:00.- *Հատսաի Ֆայվ Օ*
10:00.- *Սեվըն Տէյզ*
10:30 - *Նահարքում Սայիտ*
13:30 - *Սի. Էն. Էնի լուրեր*
14:00.- *Ֆրանս 2ի լուրեր*
14:40 - *Վիտէօ Քլիփս*
15:00.- *Արաբերէն լուրեր*
15:15.- *Մալիքա*
16:30.- *Քեսթիոն Փուր Էօն Շանփիոն*
17:00.- *Քիֆ Ու Լէյշ*
18:00.- *Հատսըն Սթրիթ*
18:30.- *Տրեքսըլկ Քլաս*
19:00.- *Նաուրաա*
20:00.- *Արաբերէն լուրեր*
20:30.- *Ամերիկեան երկար ժապաւէն՝ «Մայ Քազըն Վինսի»*
22:30 - *Թելէ Սփոր*
00:00 - *Ամերիկեան երկար ժապաւէն՝ «Փեթս Ամ Պրոլիմ»*

ՄԱՌ-ՍԹԱՔՊԱԼ

7:00 - *Ալաս Ալ Սապահ*
13:00 - *Ֆլէշ Ինֆօ*
13:15 - *Տալաս*
14:00.- *Քասանտրա*
15:00.- *Արաբերէն լուրեր*
15:15.- *Ալ Սուրաա*
16:30 - *Կենդանի գծանկար՝ «Տէքսթըրսլ Լապ»*
17:00 - *Ըպղար Ըքպար*
17:30 - *Ֆրանսերէն լուրեր*
17:45.- *Ամգլերէն լուրեր*
18:00.- *Ֆէյմ*
19:00.- *Թելէ Ֆան*
20:00 - *Արաբերէն լուրեր*
20:30.- *Ամերիկեան երկար ժապաւէն «Ֆրենտս Թիլ Տի Էնտ»*
22:30 - *Ալա՛լ Հատսա*

ԷՆ. ՊԻ. ԷՆ.


14:00 - *Վիտէօ Քլիփս*
15:00 - *Կենդանի գծանկար*
16:00 - *Տիւ Լերըր*
17:00.- *Ամիսալ Ասղալ Հանա*
18:00.- *Ռիժալ Սին Շաու*
19:00.- *Ամերիկեան երկար ժապաւէն «Լեթթ Հեւսո Ամֆ Կատ»*
21:00.- *Արաբերէն Լուրեր*
21:30.- *Միննա Ուա Ֆինա*
22:30.- *«Ամքս Էլ Սայր»*
23:30.- *Վաւերագրական*

* Վերոյիշեալ յայտագիրները ենթակայ կրնան ըլլալ որոշ փոփոխութիւններու:

HIGH CONSTRUCTION

LA BELLE RESIDENCE I & II

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆՆԵՐ ԵՒ ԽԱՆՈՒԹՆԵՐ
ՄԸՋՀԷՐԻ ՄԷՋ, ԱՆԹԻԼԻԱՍ



- *Գեղատեսիլ եւ ծովահայեաց յարկաբաժիններ, օժտուած արդիական բոլոր յարմարութիւններով*
- *124, 140 եւ 180 քառ. մեթր տարածութեամբ*
- *Անմիջական յանձնում*
- *Վճարման դիւրութիւններ*

Մանրամասնութեան համար դիմել՝
HIGH CONSTRUCTION ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԳԷՈՐԳ ԵՒ ԺԱՆ ԷՏՈՅԵԱՆՆԵՐ

La Belle Résidence, Mezher, Antélias
Հեռ. 03-714030, 03-813040, 04-520905, 04-412904

ՄԱԽՈՒ ՆՈՐԱԿԱՌՈՑՑ ՅԱՐԿԱԲԱԺԻՆՆԵՐ

- Անթիլիաս, Մըզհէբի սկիզբ: 170 քառ. մեթր տարածութիւն, 7րդ յարկ, ծովանայեաց դիրք: Գին՝ 80.000 ամ. տոլար: Հեռ. 03-32[illegible]44

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ՄՈՒՏՔԻ ՆԻՒԹԱԿԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ՁԵՐԲԱՔԱՋԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՖՀԻԼի մօտ

- Ներքաշագոյն սակերով
- Առաւել ևագոյն խնամք
- Վճարման դիւրութիւններ

Հասցէ.- Ազգային Խորհուրդի շէնք. ԱՖԷՏի կից,
Հեռ. 248238, 262221:

Հ.Յ.Դ. Է. ԱԿՆՈՒՆԻ ԿՈՄԻՏԷ
ԸՆԿԵՐՈՒՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

ՃԱՇԿԵՐՈՑԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Մասնակցութեամբ

ՄԱՔՍԻՄ ՓԱՆՈՍԵԱՆԻ
ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԻՆ

Յայտագիրին կը մասնակցին
ինքը երգչուհի՝ ԼԱՐԱ
եւ Ազգային - յեղափոխական երգերու մեկնաբան
ՎԻՊԷՆ ՏԻՇԼԷՔԷՆԵԱՆ

Տեղի կ՚ունենայ Շաբաթ, 28 Նոյեմբեր 1998, Լբեկոյեան ժամը 9ին սկսեալ, ճաշարան AL - MAWARDIի մէջ, ROYAL PARK HOTEL - Ալմն Սաատէ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՎԱՀԷ ՍԷԹԵՄԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Շաղզոյեան Մշակութային Կեդրոն
Հեռ.: (01) 241263 / 4
Ֆաքս (01) 260329

* Տպագրական բոլոր տեսակի աշխատանքներու Ձեր վստահելի հասցէն:
Մատչելի եւ սերտուած գիներ.

Կը ստանձնենք՝ Դպրոցներու, միութիւններու եւ վաճառականական հաստատութիւններու տպագրական աշխատանքներ:

Ծանօթ:
Միութենական եւ վաճառականական 1999-ի օրացոյցներու, ճօթատետրերու պատրաստութիւն (creation) եւ տպագրութիւն:

ԱՍՏՂԵՐԸ

☆ *ՀՈՑ* (*21 Մարտէն 20 Ապրիլ*)

Իմիճնավառան է ու վերջերս ձեր շահած յաղթանակով հպարտ: Մանգիաճանալ ձեզի դէմ յարուցած ծուղակը, որ ձեր դիմաց կը յարուցի ձեր պաշտօնակիցներուն կողմէ:

☆ *ՅՈՒԼ* (*21 Ապրիլէն 21 Մայիս*)

Ժամանակ պիտի տրամադրէք չափել-կշռելու հաշուեյարդ ձեր երազները, որպէսզի կարենաք պահել ձեր պատճէնը: Նաւ արդիւնք պիտի առնէ ձեր այս հաշիւներէ:

☆ *ԵՐԿՈՒՈՐԵԱԿ* (*22 Մայիսէն 21 Յունիս*)

Մի՛ ապաւինիք ձեր նախագգացումներուն կամ կասկածներուն: Աշխատեցէք մեթոտով ու պիտի տեսնէք, թէ ամէն հարց կարգադրուած է:

☆ *ԽԵՑԳԵՏԻՆ* (*22 Յունիսէն 23 Յուլիս*)

Ձեր բնկերը կամ ձեր ամուսինը պիտի գնահատէ ձեր յարատեւկերպը, որովհետեւ ան պիտի շարունակէ բլլալ հանդուրժառատ, սիրալիր:

☆ *ԱՌԻՒԾ* (*24 Յուլիսէն 23 Օգոստոս*)

Տեղափոխութիւն մը յարմար պիտի բլլար ձեր ապագային համար: Եթէ չկարենաք անձամբ երթալ նպատակակէտ անձին մօտ, գոնէ կապ պահեցէք ուղղակի կերպով:

☆ *ԿՈՅՍ* (*24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր*)

Իրական մտածումները միշտ բարիք կը բերեն: Այսօր որոշեցէք ամէն օր կրկնելու նեռեւեալ նախազգուշութիւնը. «Աւելի լաւ պիտի բլլամ այսուհետեւ»:

☆ *ԿՇԻՌՔ* (*24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր*)

Առիթը պիտի ունենաք ձեր ուսերէն բօթափելու ծանրաբեռն այն հոգը, որ դրամական հարցի մը պատճառով առեղծուած էր: Ուրիմն ուրախացէք:

☆ *ԿԱՐԻՃ* (*24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր*)

Պիտի ապրիք հաճելի ժամեր հարազատի մը մօտ, զոր աչքէ հեռացուած կը նկատէիք, ու պիտի վերագտնէք զայն: Որր շահեկան է ամէն տեսակէտով:

☆ *ԱՂԵՂՆԱՒՈՐ* (*24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր*)

Կարիքը եւ պահանջը ունին ազատութեան. կ՚անտեսէք բոլոր խոչընդոտները, իսկ եթէ մէկը ձեր ճամբուն վրայ պատնէշներ պիտի, զգուշացէք:

☆ *ԱՅՇԵՂՋԻՒՐ* (*22 Դեկտեմբերէն 20 Յունուար*)

Եկած է օրը առանձնու պաշտօնի բարձրացում կամ ամառկանի յաւելում մը, միշտ մնալով արամաբանական սահմաններուն մէջ:


☆ *ԾՈՎԱՆՈՑՇ* (*21 Յունուարէն 19 Փետրուար*)

Միրոյ մարզը հարստացնող է: Բարեկամութիւն մը անմիջապէս պիտի առնայ այլ ուղղութիւն մը, ձեզի կը մնայ բնել, ինչ որ հանոյ կը բուի:

☆ *ՋՈՒԿ* (*20 Փետրուարէն 20 Մարտ*)

Սմանչելի վիճակի մէջ էք գործի իւ այլ մարզերու մէջ: Երջանկի մը մէջ պիտի ունենաք ձեր խօսքը, օգուտ պիտի բաղէք օրուան բերած պատեհութիւններէն:

CALPEDA POMPE



للمياه العادية أو المبتذلة
من كافة القياسات والأحجام، ولكافة الاستعمالات

تشكيلة حديثة
من الطلمبات
لضخ المواد الكيماوية
والأسيد

Submersible and centrifugal pumps of all sizes and types and for a variety of applications: for both clean and dirty water.

RECENTLY ARRIVED MODERN CHEMICAL PRODUCTS HANDLING PUMPS

Publico

GAS G. Ayanian & Sons
Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9
Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357

ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ (ՏԱՄԱՆՈՎ)

- Արթօս փոպոց: Հեռ. 03-626139:

ՎԱՐՁՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

- Պիքֆայա, Միխթարեան վանքին կից: Հեռ. 04-981077:

ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ (ԽԼՈՒՅՈՎ)

- ԵՒրաքս թաղ: Հեռ. 03-3[illegible]44:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ֆարեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց ամուսնոյն եւ հօր՝ ՍԱՐԳԻՍ ԱՖԱՐԵԱՆի մահուան սուգին:

Optique
La Vista



MOSCHINO

ՀՐԱՅՐ ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ
Պուրճ Համուտի Քաղաքապետարանի հրապարակ, հեռ. 03-302752 եւ 01-262071

ՄԱՐԶԱԿԱՆ-ԱՇԽԱՐՀ

ՊԱՍՔԵԹՊՈԼ. ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՌԻԱՏԻ - Հ. Մ. Ը. Մ. 80-62

Պասքեթպոլի Լիբանանի ախոյեանութեան Գ. հանգրուանի մրցումներուն, Ռիատի իր դաշտին վրայ 80-62 (կիսաժամ՝ 32-21) արդիւնքով պարտութեան մատնեց Հ. Մ. Ը. Մ.ի տղոց հընգեակը:

Հ. Մ. Ը. Մ.ի կապմը ամբողջ մրցումին տեւողութեան փորձեց պայքարիլ եւ մասամբ յաջողեցաւ մինչեւ մրցումին աւարտին 3 վայրկեան մնացած, երբ կէտերու տարբերութիւնը նուազեցաւ չորս կէտի: Սակայն, երեք վայրկեանի մէջ, Ռիատի գերապանցեց իր հիւրը եւ կրցաւ դարձեալ կէտ նուաճել եւ մրցումը աւարտել 18 կէտի տարբերութեամբ: Հ. Մ. Ը. Մ.ի հնգեակէն աւելաւորը Ռեմոն ունեցաւ լաւ խաղարկութիւն եւ մանաւանդ իր *hիպատնոտ*ներով հմայեց բոլորը:

Տղոց այս մրցումէն առաջ, նոյն դաշտին վրայ, Հ. Մ. Ը. Մ.ի աղջկանց ներկայացուցչական կապմը կիսաժամուին 35-37 ետ մնալէ ետք, 54-50 արդիւնքով յաղթեց Սատաքայի եւ Բ. հանգրուանէն ետք մնաց պարագլուխի դիրքին վրայ: Անդրանիկի կողքին. Սատաքա կը նկատուի աղջկանց լաւագոյն կապմերէն մէկը: Անոր աստղն է Անդրանիկի հնգեակին նախկին լաւագոյն տարրը՝ Ֆաթմէ Ժըլէյժ, որ կը մնայ խումբին *տինամոն*: Հ. Մ. Ը. Մ.ի աղջկանց կապմէն մրցումին ընթացքին վիրաւորուեցաւ խմբապետ քոյր Վարդուկ Մարգարեան եւ փոխադրուեցաւ հիւանդանոց: Անոր վիճակը մտահոգիչ չէ բարեբախտաբար եւ կարճ հանգիստէ մը ետք, ան կը վերադառնայ դաշտ:

Անդրանիկի դաշտին վրայ, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասի աղջկանց հնգեակը եւս յաղթանակ ապահովեց եւ 38-28 արդիւնքով պարտութեան մատնեց Ռիատին:

ՊՈՒՆՏԸՍԼԻԿԱ

ՊԱՅՔԻՐՆ ՅԱՂԹԱԿԱՆ ԱԽԱՐՏԵՑ ՄԻՒՆԻԽԻ ՏԵՐՊԻՆ

Գերմանիոյ ֆութպոլի ախոյեանութեան (Պունտսլիկա) 11րդ հանգրուանի մրցումներուն, Միւնիխի տէրպին՝ վերջ գտաւ առաջինին յաղթանակով (3-1):

Ա. կիսախաղին հակառակ աւելիներուն կոյ չկարենայ նշանակելէ ետք, Բ. կիսախաղին Պայէրն երեք կոյ նշանակեց, շնորհիւ Ենս Ժերեմիսի (60րդ), Այեսանտր Ցիքլըրի (64րդ) եւ Թոմաս Լինքրի (87րդ): 1860 Միւնիխ իր միակ կոյը նշանակեց մրցումին վերջին վայրկեանին:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, Պայէրն 8 կէտի առաւելութիւն մր ունեցաւ իր անմիջական մրցակիցներուն՝ Պայէր Լեւերքուզընի եւ 1860 Միւնիխի վրայ:

Լեւերքուզըն, օգտուելով 1860 Միւնիխի կրած պարտութենէն, 0-0 արդիւնքով հաւասարութիւն մր արձանագրելէ ետք Շթուտկարթի հետ, բարձրացաւ 2րդ դիրքին, չնորհիւ նպաստաւոր կոլ - եւլըրէյճին:

Վոլֆսպուրկ 7-1 արդիւնքով ծանր պարտութեան մատնելէ ետք վերջին դիրքը գրաւող Պորուսիա Մէօնչընկլատպախ, բարձրացաւ 10րդ դիրքին:

Նշենք, թէ 3րդ վայրկեանին, աւստրիացի Թոնի Փոլսթր (Մէօնչընկլատպախ) կարմիր քարտ ստացաւ:

Ախոյեան Քայզրսլաուտրըն 1-0 արդիւնքով յաղթականն վերադարձաւ Ֆրայպուրկի դաշտէն:

Շալքէ 2-2 արդիւնքով հաւասարութիւն մր արձանագրեց Համպուրկի հետ, այս վերջինին դաշտին վրայ:

Եուրի Մուլտրը (77րդ) եւ Մարթին Մաքս (80րդ) նշանակեցին Շալքէի կոյերը: 39րդ եւ 67րդ վայրկեաններուն Համպուրկ նշանակեց իր երկու կոյերը:

Ստորեւ՝ 11րդ հանգրուանի մրցումներուն թեքնիք արդիւնքները.

Վոլֆսպուրկ - Պորուսիա Մէօնշընկլատպախ	7-1
Պոխում - Հերթա Պերլին	2-0
Համպուրկ - Շալքէ	2-2
Ֆրայպուրկ - Քայզըրսլաուտըրն	0-1
Հանզա Ռոստոք - Այնթրախթ Ֆրանքֆորթ	2-2
Պայէրն Միւնիխ - 1860 Միւնիխ	3-1
Տուիզպուրկ - Նիւրեմպէրկ	1-1
Վերտըր Պրեմըն - Պորուսիա Տորթմունտ	1-1
Պայէր Լեւերքուզըն - Շթուտկարթ	0-0

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ	*ԿԷՏ*
1. Պայէրն Միւնիխ	28
2. Պայէր Լեւերքուզըն	20
3. 1860 Միւնիխ	20
4. Քայզրսլաուտրըն	18
5. Համպուրկ	17
.....	
16. Հանզա Ռոսթոք	9
17. Վերտըր Պրեմըն	7
18. Պորուսիա Մ.Օնշրնկլատպախ	5

ՖԻՈՐԵՆԹԻՆԱ ԴՈՒՐՍ ԴՐՈՒԵՑԱՒ ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.Ի ՄՐՑԱՇԱՐՔԷՆ

Եւրոպայի ֆութպոլի ֆետերասիոնը (Եու. է. էֆ Ա.) երկկ իր յատուկ նիստին պատժեց Իտալիոյ Ֆիորենթինան եւ կայն դուրս դրաւ Եու. է. էֆ Ա.ի մրցաշարքէն:

Անցեալ Երեքշաբթի Եու. է. էֆ Ա.ի մրցաշարքին կծով Ֆիորենթինա - Կրասհոփրրկ Ցիւրիխ մրցումին ընթացքին, իտալական կապմին համակիրները 45րդ վարկեանին պայթուցիկ նետած էին իրաւարարին վրայ, որ վիրաւորուած էր եւ փոխադրուած հիւանդանոց: Մինչ այդ, իտալական կապմը 2-0 յաղթական էր: Բ. Մինչ այդ, իտալական կապմը 2-0 յաղթական էր: Բ. Հանգրուանի երթի մրցումին եւս Ֆիորենթինա յաղթած էր՝ 2-1 արդիւնքով, Ցիւրիխի մէջ:

Այս ձեւով կուլիցերիական կապմը բախտաւոր դուրս եկաւ եւ անցաւ Գ. հանգրուան, ուր անիկա իր դէմ պիտի ունենայ Ֆրանսայի Պորտոն:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ. ՅԱՂԹԵՑ ՊԸՐԺԻ՝ 1 - 0

Լիբանանի ֆութպոլի ախոյեանութեան Գ. հանգրուանի մրցումներուն, Հ Մ Ը Մ մարգական աւանի դաշտին վրայ 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Պըրժը եւ ապահովեց 1998 - 1999 եղանակի իր առաջին երեք կէտերը:

Ա. կիսախաղին, մրցումը եղաւ միջակ մակարդակի: Գեղեցիկ էր երիտասարդ ու ապագայ խոստացող Յակորիկի (Տանապետեան) մէկ անհատական ճիգով կոյ նշանակելու փորձը, որուն գօրաւոր հարուածը սակայն կսպուեցաւ մրցակից բերդապահին կողմէ:

Բ. կիսախաղին, Հ.Մ.Ը.Մ հետզհետէ բարելաւեց խաղարկութիւնը: Հ Մ Ը Մ եղաւ առաւելարար կնդակը իր մօտ պահողը եւ ստեղծեց աւելիներ, սակայն ապարդիւն:

84րդ վայրկեանին, Հ.Մ.Ը.Մ.ի մէկ նոր յարձակումին վրայ, Վրէժ ի վերջոյ նշանակեց իր կապմին եւ մրցումին որ կոյը, որուն չնորհիւ Հ.Մ.Ը.Մ. կրպանեց 3 ոսկի կէտեր եւ մարգական աւան 23 տարւան բացակայութենէն ետք տուն վերադարձաւ յաղթական:

Գ. հանգրուանի կարեւորագոյն ձակատումին, Հարաւի մէջ Թատամոն Սուր 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Նրժմէն եւ մնաց պարագլուխի դիրքին վրայ, մինչ Լիբանանի ամէնէն մեծ ժողովրդականութիւն վայելող կապմը՝ Նրժմէ չարունակեց իր տարօրինակ վայրկեաններ եւ մնաց պասաւորման վարի դիրքերուն վրայ՝ 1 կէտով:

Ախոյեան Անսար 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Շապաք Սահլը, մինչ Սաֆա եւ Հ.Մ.Մ. արձանագրեցին ճերմակ հաւասարութիւն մը:

Ստորեւ՝ Գ. հանգրուանի մրցումներուն թեքնիք արդիւնքները.

Ահտ - Սալամ	1 - 0
Պըրժ - Հ.Մ.Ը.Մ.	0 - 1
Սաֆա - Հ.Մ.Մ.	0 - 0
Թատամոն Սուր - Նըժմէ	2 - 1
Ախա Ահլի - Ահլի Սայտա	2 - 3
Ահատ - Շապաք Սահէլ	2 - 0

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

	ԿԷՏ	ՆԾ.	ՍՏ.
1.- Թատամոն Սուր	9	11	1
2.- Ահատ	9	7	3
3.- Հ.Մ.Մ	7	5	2
4.- Սաֆա	7	5	2
5 - Ահլի Սայտա	6	10	8
6.- Ահտ	4	3	4
7.- Ախա Ահլի Այէհ	3	4	6
8.- Շապաք Սահէլ	3	2	4
9.- Հ.Մ.Ը.Մ	3	2	6
10.- Նըժմէ	1	2	5
11.- Սալամ	0	1	4
12.- Պըրժ	0	1	6

ՔԱԼՃԻՕ

ՖԻՈՐԵՆԹԻՆԱ ՎԵՐԱԳՐԱՒԵՑ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԸ

Իտալիոյ ֆութպոլի ախոյեանութեան (Քալչիո) 8րդ հանգրուանի մրցումներուն, Ֆիորենթինա 4-1 արդիւնքով տապալեց Վենեցիան եւ վերագրաւեց պարագլուխի դիրքը՝ Եուվենթուսէն, որ 2-2 արդիւնքով վերադարձաւ Ուտինեզէի դաշտէն:

Օրուան գագաթի մրցումը՝ Միլանոյի տերպին՝ Ինթէր Միլանի եւ Ա. Սէ. Միլանի միջեւ աւարտեցաւ 2-2 հաւասարութեամբ: Ռոնալտօ ի վերջոյ կրցաւ նշանակել կոլ մը եւ բացաւ մրցումին հաշիւը՝ 7րդ վայրկեանին, սակայն ան որ կազմը չկրցաւ 3 կէտ խլել մրցակիցէն, ինչ որ կրնայ պատճառ դառնալ մարզիչ Ճիճի Սիմոնիի պաշտօնազրկման համար: Ինթէրի ճախագահ Մասիմօ Մորաթթի Սիմոնիի յայտնած էր, թէ երկու յաջորդական յաղթանակ կը պահանջէ անկէ, այլապէս կը պաշտօնազրկէ զայն, մինչ երկու տուեալ մրցումներուն Ինթէր արձանագրած է հաւասարութիւն: Հետեւաբար Սիմոնի կը սպասէ Մորաթթիի որոշումին...

Պոլոնիա իր դաշտին վրայ 1-1 հաւասարութիւն մը արձանագրեց Ա. Էս. Ռոմայի հետ, մինչ Լացիո Ռոմա 4-1 արդիւնքով տապալեց Էմփոլին:

Փարմա 1-1 հաւասարութեամբ վերադարձաւ Պարիի դաշտէն, իսկ Սամտորիա իր դաշտին վրայ դժուարով կըրցաւ 3 կէտ ապահովել Սալերնիթանայի դէմ ճակատումէն:

Վերջապէս, Քալիարի 3-2 արդիւնքով պարտութեան մատնեց Փիաչենցան, իսկ Փերուճիա 3-1 արդիւնքով ոտկի 3 կէտ խլեց Վիչենցայէն:

Ստորեւ՝ 8րդ հանգրուանի մրցումներուն թեքնիք արդիւնքները.

Ա. Սէ. Միլան - Ինթէր Միլան	2-2
Պարի - Փարմա	1-1
Պոլոնիա - Ա. Էս. Ռոմա	1-1
Քալիարի - Փիաչենցա	3-2
Ֆիորենթինա - Վենեցիա	4-1
Լացիո Ռոմա - Էմփոլի	4-1
Փերուճիա - Վիչենցա	3-1
Սամտորիա - Սալերնիթանա	1-0
Ուտինեզէ - Եուվենթուս	2-2

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ	*ԿԷՏ*
1. Ֆիորենթինա	18
2. Եուվենթուս	17
3. Ա. Էս. Ռոմա	14
4. Ա. Սէ. Միլան	14
5. Լացիո Ռոմա	13

ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԱ ԿՐԵՑ ԵՂԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Սպանիոյ ֆութպոլի ախոյեանութեան 9րդ հանգրուանի մրցումներուն, Պարսելոնա կրեց այս եղանակի իր առաջին պարտութիւնը եւ նահանջեց 4րդ դիրքին:

Ռէալ Օվիեդոյի (11րդ) դէմ մրցումին, հակառակ անոր, որ Ռիվալտօ 34րդ վայրկեանին նշանակեց առաջին կոյը, Օվիետօ 86րդ եւ 93րդ վայրկեանին երկու կոյ նշանակելով եղաւ յաղթականը:

Մայորքա 1-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք նախավերջին դիրքը գրաւող Վիարէալը, Ռէալ Մատրիտէն խլեց պարագլուխի դիրքը: Տէնի փենալթիով նշանակեց մրցումին «որը» կոյը (32րդ):

Ռէալ Մատրիտ 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Ալաւէսի (17րդ) հետ, նահանջեց Բ. դիրքին: Ռոպերթօ Քարլոս նշանակեց Ռէալի հաւասարութեան կոյը (48րդ):

Ալաւէսի նման ցարդ անպարտելի՝ Սելթա Վիկօ 5-1 արդիւնքով պարտութեան մատնեց վերջին դիրքը գրաւող Էքսթրեմատուրան: Այեքսանտր Մոսթովոյ նշանակեց իր կապմին երկու կոյերը (49րդ եւ 66րդ):

Վիկօ այսպէսով բարձրացաւ երրորդ դիրքին, կէտի մը առաւելութիւն ունենալով Պարսայի վրայ:

Ռէալ Սոսիետատ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Աթլեթիքօ Պիլպաօն, որ մրցումը աւարտեց ինը մարգիկով, երբ 89րդ եւ 90րդ վայրկեաններուն անոր երկու մարգիկները դաշտէն վտարուեցան:

Սպանիոյ ագգային խումբին նախկին մարգիչ Խաւիէ Քլեմենթէի կապմը՝ Ռէալ Պեթիս 1-0 արդիւնքով պարտուած հեռացաւ Էսփանիոլի դաշտէն: Էսփանիոլ այսպէսով արձանագրեց այս եղանակի իր երկրորդ յաղթանակը:

Տեփորթիւս Քորունա 1-1 արդիւնքով հեռացաւ Աթլեթիքօ Մատրիտի դաշտէն, 82րդ վայրկեանին նշանակելով իր հաւասարութեան կոյը:

Ստորեւ՝ 9րդ հանգրուանի մրցումներուն թեքնիք արդիւնքները.

Աթլեթիքօ Մատրիտ - Տեփորթիւս Քորունա	1-1
Մայորքա - Վիարէալ	1-0
Ռէալ Սոսիետատ - Աթլեթիքօ Պիլպաօ	3-1
Սալամանքա - Ռէալ Սարագոսա	1-2
Վալենսիա - Ռասինկ Սանթանտեր	3-0
Սելթա Վիկօ - Էքսթրեմատուրա	5-1
Ալաւես - Ռէալ Մատրիտ	1-1
Էսփանիոլ - Ռէալ Պեթիս	1-0
Թեներիֆէ - Ռէալ Վալատոլիտ	2-2
Ռէալ Օվիեդօ - Պարսելոնա	2-1

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ	*ԿԷՏ*
1.- Մայորքա	19
2.- Ռէալ Մատրիտ	18
3.- Սելթա Վիկօ	17
4.- Պարսելոնա	16
5.- Վալենսիա	15
.....	
18.- Ռէալ Պեթիս	8
19.- Վիարէալ	7
20.- Էքսթրեմատուրա	5

ԹԵՆԻՍ. ՓԱՐԻԶԻ ՄՐՑԱՇԱՐՔ

ՌՈՒԶԵՏՍՔԻ ՏԻՐԱՑԱԻ ՏԻՏՂՈՍԻՆ

Բրիտանացի Կրէկ Ռուզետսքի երկկ չահեցաւ Փարիզի թենիսի միջազգային մրցաշարքը աւարտականին պարտութեան մատնելէ ետք աշխարհի թիւ մէկը՝ ամերիկացի Փիթ Սամփրասը՝ 6-4, 7-6 եւ 6-3 արդիւնքով:

Բրիտանացին, անկախ բաժակէն, ստացաւ նաեւ ընդամէնը 2,5 միլիոն տոլար պարգեւ ունեցող այս մրցաշարքին մեծագոյն բաժինը՝ 400 հազար տոլար:

Ռուզետսքի ունեցաւ շատ լաւ խաղարկութիւն եւ չարունակեց այս տարուան իր յաջող ընթացքը: Ան անցեալ ամիս չահած էր նաեւ Հանովրի (Գերմանիոյ) մրցաշարքը, մինչ Սամփրաս թէեւ պարտուեցաւ, սակայն պահեց թիւ 1 դիրքը՝ յաջորդարար վեցերորդ տարին րլլալով: Փարիզի մրցաշարքը միջազգային դասաւորման համաստով տարուան վերջին մրցաշարքը կ'րլլայ տարիներէ ի վեր:

ԿԱՐԱՑԻ ՇԱՀԵՑՈՒՑԻՉ ԼՈՒՅՍՓՅԻԿԻ ՄՐՑԱՇՂԱՐՔԸ

Գերմանացի Շթեֆի Կրաֆ երկկ չահեցաւ Լայփցիկի (Գերմանիա) աղջկանց մրցաշարքը, 5րդ անգամ րլլալով: Ան աւարտականին պարտութեան մատնեց ֆրանսացի Նաթալի Թօսիան՝ 6-3 եւ 6-4 արդիւնքով:

29 տարեկան Կրաֆ, որ այս տարի երկար ատեն (9 ամիս) հեռու մնաց դաշտերէն՝ ծանրօրէն վիրաւորուելուն պատճառով, այժմ չուրջ 2 ամիսէ ի վեր վերադարձած է թենիսի դաշտերը եւ փաստօրէն ան վերագտած է երբեմնի իր բարձր խաղարկութիւնը:

Լայփցիկի մրցաշարքը չահելով Կրաֆ ոչ միայն իր միջազգային 105րդ մրցաշարքը չահեցաւ, այլ ստացաւ նաեւ «կոկիկ» նուէր մը՝ 450 հազար տոլարի չէք մը...

Երկար ատեն աշխարհի թիւ 1 թենիսուհին հանդիսացած Կրաֆ երկկուան գումարը չահելով արձանագրեց նաեւ դրամական մրցանիշ մը: Ան եղաւ աշխարհի թիւ մէկ աղջիկը, որ ամէնէն շատ դրամ կը չահի թենիսէն: Ան գարդ չահած է 20,5 միլիոն տոլար: Նախկին մրցանիշը կը պատկանի Մարթինա Նաւրաթիլովայի՝ 20,3 միլիոն տոլար...

ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՍԹՈՆ ՎԻԼԱ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՄՆԱԼ ԱՆՊԱՐՏԵԼԻ

Անգլիոյ ֆութպոլի ախոյեանութեան 12րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող եւ ցարդ անպարտելի միակ կապմը Ասթոն Վիլա չարունակեց իր յաղթական ընթացքը՝ պարտութեան մատնելով Թոթընհամը (3-2):

Խովենթրիէն Վիլայի միացած յաւաչապահ Տայրն Տապլին, որ առաջին անգամ րլլալով կը կրէր իր նոր կապմին չապիկը, նշանակեց Վիլայի երկու կոյերը (31րդ եւ 35րդ): Մթէն Քոլիմոր նշանակեց Վիլայի երրորդ կոյը (48րդ):

Մարգիչ Ճորճ Կրէհամի տղաքը փորձեցին հակադարձել եւ յաջողեցան երկու կոյ նշանակել Տէյրն Ճենտրիքի (65րդ՝ փենալթիով) եւ Ռամոն Վեկայի (76րդ) չնորհիւ, սակայն ապարդիւն:

Մրցում մր նուազ կատարած Վիլա, այժմ կէտի մր առաւելութիւն ունի Արսենալի վրայ, որ պարտութեան մատնելէ ետք Էվըրթընը (1-0) բարձրացաւ 2րդ դիրք:

Ֆրանսացի Նիքոլա Անելքա նշանակեց Արսենալի եւ մրցումին միակ կոյը՝ 6րդ վայրկեանին:

Մրցում մր նուազ կատարած Մանչեսթըր Եունայթըտ 0-0 արդիւնքով հաւասարութիւն մր արձանագրելէ ետք Նիւքսըլի հետ նահանջեց երրորդ դիրքին:

4րդ դիրքը գրաւող Միտրլզպորօ չկրցաւ յաղթական վերադառնալ վերջին դիրքը գրաւող Սաութհէմբրընի դաշտէն եւ 3-3 արդիւնքով հաւասարութիւն մր արձանագրեց անոր հետ:

Միտրլզպորօ մրցումը աւարտեց 9 մարգիկով: անոր մարգիկներէն երկուքը 62րդ եւ 88րդ վայրկեաններուն կարմիր քարտ ստացան: Փոլ Կնսքոյն նշանակեց Միտրլզպորօյի եւ մրցումին առաջին կոյը (47րդ):

Չելսի չկրցաւ յաղթական վերադառնալ Ուէսթ Համի դաշտէն եւ 1-1 արդիւնքով հաւասարութիւն մր արձանագրեց անոր հետ: Սելեսթին Պապայորօ նշանակեց Չելսիի հաւասարութեան կոյը (75րդ):

Լիվըրփուլ իր դաշտին վրայ եւ 44 հազար համակիրներուն ներկայութեան կրեց այս եղանակի իր չորրորդ պարտութիւնը՝ Տերպիէն (2-1) եւ նահանջեց 11րդ դիրքին: Ճէյմի Ռէտնափ նշանակեց Լիվըրփուլի միակ կոյը (84րդ):

Նոթինկհամ Ֆորէսթ նահանջեց նախավերջին դիրքին, 1-0 արդիւնքով պարտութիւն մր կրելէ ետք իր հիւրէն՝ Ուիմպլտընէն:

Պլէքպըրն եւս իր դաշտին վրայ 2-1 արդիւնքով պարտութիւն մր կրեց Քովենթրիէն:

Ստորեւ՝ 12րդ հանգրուանի մրցումներուն թեքնիք արդիւնքները.

Արսենալ - Էվըրթըն	1-0
Լիդզ - Շեֆիլտ Ուենզտէյ	2-1
Մանչեսթըր Եունայթըտ - Նիւքէսըլ	0-0
Ուէսթ Համ - Չելսի	1-1
Ասթոն Վիլա - Թոթընհամ	3-2
Պլէքպըրն - Քովենթրի	1-2
Զարլթըն - Լայսթըր Սիթի	0-0
Լիվըրփուլ - Տերպի Քաունթի	1-2
Նոթինկհամ Ֆորէսթ - Ուիմպլտըն	0-1
Սաութհեմբըրն - Միտրլզպորօ	3-3

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ	*ԿԷՏ*
1.- Ասթոն Վիլա	25
2.- Արսենալ	23
3.- Մանչեսթըր Եունայթըտ	22
4.- Միտրլզպորօ	18
5.- Չելսի	17
.....	
18.- Պլէքպըրն	9
19.- Նորինկհամ Ֆորէսթ	9
20.- Սաութհեմբրըն	7

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՆԽԱՆՈՒԹԻՒՆԸ...

Շարունակուած Ա. էջէն

պակաս բան պիտի չընդունի: Պաղեստինցիները պէտք է յարգեն իրենց խոստումները, որպէսզի Իսրայէլ ալ, իր կարգին, գործադրէ իր բաժինը, աւելցուց Նեթանիահու:

ԱՐՇԱԽ՝ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԺԻՀԱԴԻ ԴԷՄ

Պաղեստինեան իշխանութեան ապահովութեան ուժերը շաբաթավերջին արշաւի մը ձեռնարկեցին Իսլամական Ժիհատի վինեալներուն եւ հետեւորդներուն դէմ՝ ձերբակալութիւններ կատարելով եւ շարժումին պատկանող կարգ մը կեդրոններ փակելով:

Իսլամական Ժիհատ շարժումը Շաբաթ օր հաղորդագրութիւն մը հրապարակած էր եւ ստանձնած Ուրբաթ օրուան անձնասպանական գործողութեան պատասխանատուութիւնը: Երուսաղէմի պայթումը պատճառած էր երկու վոհ եւ 21 վիրաւոր: Զոհերը ականուած ինքնաշարժին մէջ գտնուող իսլամականներն էին:

Պաղեստինեան ապահովութեան ուժերէն բարձրաստիճան պատասխանատու մը յայտարարեց, որ Ուրբաթ գիշերուընէ սկսեալ Իսլամական Ժիհատի անդամներ ձերբակալուած են Այարյորդանանի տարբեր շրջաններու մէջ: Ապահովութեան ուժերը փակած են նաեւ իսլամական շարժումին պատկանող մանկապարտէզ մը, որուն տնօրէնը դատապարտեց արարքը՝ դիտել տալով որ մանկապարտէզը անմիջական որեւէ կապ չունի իսլամական շարժումին քաղաքական գործունէութեան հետ: Ան ըսաւ նաեւ, որ պաղեստինեան ապահովութեան ուժերուն որդեգրած միջոցառումները կը յիշեցնեն իսրայէլեան բանակին բռնարարքները: Մանկապարտէզի տնօրէնը դիտել տուաւ նաեւ, որ այսպիսի արարքներ պատճառ պիտի դառնան անձնասպանական գործողութիւններու:

Միւս կողմէ, ՊԱԿ իր ուխտին կարգ մը յօդուածները ջնջելու առաջին քայլը առաւ, երբ Գործադիր Խորհուրդը Ուրբաթ գիշեր վաւերացուց Եասէր Արաֆաթէն Պիլ Քլինթընի ուղղուած նամակ մը, ուր կը նշուին այն յօդուածները, որոնք պիտի ջնջուին:

Ուաշինկթընի մէջ, արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ձէյմս Ռուպին ողջունեց ՊԱԿի Գործադիր Խորհուրդին որոշումը:

•ՅՈՎՀԱՆՆԷՍ Պօղոս Բ. պապը երէկ վգուշացուց վայրագ արարքներէն (Երուսաղէմի պայթումը), որոնք կը սպառնան Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին:

•ԵԳԻՊՏՈՍԻ նախագահ Հիւսնի Մուպարաք Շաբաթ օր կոչ ուղղեց Նեթանիահուի, որ գործադրութեան դնէ Ուայ Փլէնթէյշընի խաղաղութեան համաձայնագիրը, հակառակ անոր, որ Երուսաղէմի մէջ պայթում տեղի ունեցած է:

•ՌՈՒՍԻԱ դատապարտեց Երուսաղէմի պայթումը, որուն նպատակն է արգելակել Իսրայէլի եւ պաղեստինցիներուն միջեւ խաղաղութեան գործընթացը: Արտաքին գործոց նախարարութիւնը ցաւ յայտնեց եւ դատապարտեց ահաբեկչական արարքը:

•«ՍԻՐԻԱ ԹՒՅՄՋ» օրաթերթը կը գրէր, որ Երուսաղէմի պայթումը արդիւնքն է Ուայ Փլէնթէյշընի անարդար համաձայնագիրին:

(ՌՈՅԹԵՐՋ)

ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ...

Շարունակուած Ա. էջէն

Ժողովրդավար կուսակցութեան ղեկավար Իլիաս Իսմայիլով եւ Ազատական կուսակցութեան ղեկավար Լալա Շովխէթ-Կաժիեւա եւ իրենց կուսակցութեանց անդամներ ծեծի ենթարկուած են:

Մինչ այդ, թիկնապահներ յաջողած են պաշտպանել Մուսաուաթ կուսակցութեան ղեկավար Իսա Կամպարը եւ նախկին նախագահ Ապուլֆէզ Էլչիպէյը, որ Ժողովրդային ձակատի ղեկավարն է:

Չորս ղեկավարները ընկերակցութիւն մը կազմած էին *պոյքոթի* ենթարկելու համար ընտրութիւնները՝ ըսելով, որ Ալիեւ ի նպաստ իրեն պիտի դարձնէ քուէարկութիւնը:

Ալիեւ քուէներուն 76,1 առ հարիւրը ապահոված էր, ըստ պաշտօնատարներու, մինչ երկրորդ տեղը գրաւած Էթիպար Մամեդով քուէներուն 11,6 առ հարիւրը ձեռք ձգած է:

Ալիեւ կը մերժէ օրինականացնութիւններու գծով իր դէմ ուղղուած քննադատութիւնները՝ ըսելով, որ ընտրութիւնները «փաստեն, թէ Ազրպէյճանի մէջ ժողովրդավարութիւն գոյութիւն ունի»:

Շաբաթ օր, տասնեակներով ցուցարարներ եւ կարգ մը ոստիկաններ վիրաւորուած էին Մամեդովի կողմէ ցոյցերը արգիլող օրէնքին մարտահրաւէրէն ետք տեղի ունեցած ցոյցին ընթացքին:

Ոստիկանութիւնը երէկ ըսաւ, թէ տակաւին 15 հոգի ձերբակալուած կը մնայ, թէեւ կուսակցութեան անդամներ ըսին, թէ ձերբակալեալներուն թիւը կրկնապատիկն է:

Շաբաթ օր ցուցարարներուն գլուխէն ետք Մամեդով մամլոյ ասուլիսի մը ընթացքին ըսաւ. «Այսօրուան դէպքերը ցուցնիշ են, թէ Ալիեւ իշխանութեան տէրն է միայն իր ոստիկանութեան օրակցութեամբ»:

Յուցարարներու թիւը 3000էն 4000 էր Շաբաթ օր:

Մամեդով խոստում տուած է, թէ պիտի պայքարի ընտրութեանց արդիւնքներուն դէմ եւ այդ նպատակով կազմակերպած է Շաբաթ օրուան ցոյցը:

Քանի մը հարիւր ոստիկաններ բիրերով յարձակած են ցուցարարներուն վրայ, մինչ ան՛ոնք քաղաքին կեդրոնին կը մօտենային: Յուցարարները ապառուղեցան դէպի համալսարանը, ուր աւելի ծանրակշիռ բախումներ արձանագրուած են:

Ընդդիմադրութեան կողմէ հաւաքները հակաւգիւտ են Ազրպէյճանի մէջ: Սեպտեմբերին նախընտրական ցոյցի մը ընթացքին 28 հոգի ձերբակալուած էր եւ այլ ցոյցեր արգիլուած էին քաղաքին կեդրոնը:

(ՌՈՅԹԵՐՋ)

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԿԸ ՔՆՆԱՐԿԷ...

Շարունակուած Ա. էջէն

Պատուիրակութիւնը տեսակցութիւն ունեցաւ նաեւ Իրաքի խորհրդարանի նախագահ Սաատուն Համատիի հետ, ինչպէս նաեւ այցելեց մանուկներու հիւանդանոց մը:

Միւս կողմէ, Իրաք երէկ կոչ ուղղեց արաբական երկիրներուն, որ կօրավիգ կանգնին իրեն՝ ՄԱԿի հետ իր տագնապին գծով: Նոյն պահուն, Իրաք վերստին շեշտեց, որ վերատեսութեան պիտի չենթարկէ ՄԱԿի վէնքի քննիչներուն հետ գործակցութիւնը առկախող իր որոշումը՝ հակառակ անոր որ իր դէմ վինուրական գործողութեանումը ապատնալիքը թափ կը ստանայ:

«Սաուրա» օրաթերթը կը գրէր, որ արաբները պէտք է յստակօրէն արտայայտուին իրենց մերժողական կեցուածքը ամերիկեան սպառնալիքներուն դիմաց:

«Քաթիսիա», իր կարգին, հաղորդեց, որ Իրաք պատրաստ է դէմ դնելու բոլոր հաւանականութիւններուն եւ ընտրանքներուն:

Առեւտուրի նախարար Մոհամէտ Մահտի Սալէհ յայտարարեց, որ Իրաք չի վախնար վինուրական գործողութիւններէն: «Միացեալ Նահանգներ, ինչպէս միշտ, այս անգամ ալ պիտի պարտուին» աւելցուց Սալէհ:

Մինչ այդ, Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Քլինթըն տեսակցութիւն ունեցաւ բարձրաստիճան պաշտօնատարներու հետ, որոնք շրջապտոյտներ կատարած էին անցեալ շաբաթ Իրաքի դէմ օրակցութիւն ապահովելու համար: Քլինթըն լսեց վեկուցումները պաշտպանութեան նախարար Ուիլիըմ Քոհէնի եւ Ազգային Ապահովութեան հարցերու խորհրդատու Սէնտի Պըրկըրի: Քոհէն Ծոցի երկիրներ այցելած էր. իսկ Պըրկըր՝ Շաբաթ օր Փարիզի մէջ տեսակցութիւններ ունեցած էր Ֆրանսացի եւ բրիտանացի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ:

ՄԱԿի յատուկ պատուիրակ Փրաքաշ Շահ եւս Պաղտատի մէջ կը փորձէ համոզել Իրաքի իշխանութիւնները, որպէսզի վերատեսութեան ենթարկեն իրենց որոշումը եւ վերսկսին գործակցութեան ՄԱԿի քննիչներուն հետ: Շահ տեսակցութիւն ունեցաւ Ապիւզի եւ բարձրաստիճան այլ պաշտօնատարներու հետ, սակայն ցարդ Պաղտատ կը մնայ անդրդուելի:

•ՍԷՈՒՏԱԿԱՆ Արաբիոյ արտաքին գործոց նախարար Սէուտ Ֆայսալ իշխանը երէկ յայտարարեց, որ Ռիատ կ'ուզէ դիւանագիտական լուծումով եւ ոչ վինուրական հարուածով մը աւարտել Իրաք - ՄԱԿ տագնապը: Սէուտցի իշխանը ըսաւ նաեւ, որ ոեւէ մէկը չարիք չ'ուզեր Իրաքի ժողովուրդին համար:

• ՔԻՒԲՏԻՍՏԱՆԻ Ժողովրդավար կուսակցութեան ղեկավար Մասուտ Պարզանի կոչ ուղղեց խաղաղ լուծումի մը Իրաքի եւ ՄԱԿի միջեւ գոյութիւն ունեցող տագնապին: Պարզանի շեշտեց, որ իր կուսակցութիւնը դէմ է վինուրական ընտրանքին:

• ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթ նամակ մը ուղղած է Սատտամ Հիւսէյնի՝ կոչ ուղղելով անոր, որ պատրուակ մը չտայ Միացեալ Նահանգներուն, որպէսզի յարձակին Իրաքի վրայ:

(ՌՈՅԹԵՐՋ)

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔԱՐԻՒՂԻ ...

Շարունակուած Յոյն էջէն

շրջանի մարդոց մտքերուն մէջ իբրեւ վատ յիշատակ պիտի մնայ», յայտարարեց ան:

Ամերիկեան քարիւղի ընկերութիւնները կ'ըսեն, թէ կասպից ծովէն քարիւղի փոխադրութեան ամէնէն դիւրին միջոցը Իրանի ճամբով է:

Մ. Նահանգներ կը պահանջեն, որ կասպեան քարիւղը Պաքուէն ձէյհան մղուի:

Քարիւղի մարզի պաշտօնատարներ կասկած արտայայտած են քարիւղատար խողովակին առեւտրական շահեկանութեան մասին, մինչ քարիւղի սակերը ներկայիս անկում կ'արձանագրեն:

«Ամէնէն կարճ, ապահով, նուազ ծախսալից եւ կենսոլորտը յարգող ճամբաները կ'առաջարկուին Իրանի կողմէ», յայտարարած է Զանկանէ:

Ան ըսած է, որ քարիւղատար խողովակը Իրանի ճամբով փոխադրելը միւս ճամբաներուն նուազ քան մէկ հինգերորդը պիտի արժէ:

«Կը յայտարարեմ մեր պատրաստակամութիւնը կապելու աւելորդ հում քարիւղը եւ բնական կազը 2001 թուականէն սկսեալ ներածելու եւ գործածելու ապակերով, որոնք ուրիշներէ աւելի գրաւիչ են», ըսաւ ան:

Կը նախատեսուի նաեւ, որ Թեհրան այս ամիս Կասպից ծովէն իր հիւսիսային վտարանները հասնող 400 միլիոն տոլար արժողութեամբ խողովակի մը կառուցման գծով համաձայնութիւն գոյացնէ: Արեւմտեան եւ ճափոնական ընկերութիւններու կողմէ *թէքնիք* ուսումնասիրութիւնները ընթացքի մէջ են, յայտնեց նախարարը:

Ան ըսաւ նաեւ, որ յաւելեալ ծրագիրներ ի վերջոյ իր վտարաններուն պիտի հասցնեն օրական շուրջ մէկ միլիոն տակառ քարիւղ:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԵՐԸ ՀՈՂ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԵՆ

Խորհրդաժողովին առիթով, Իրան գտնուող ամերիկեան ընկերութիւնները առիթը կ'օգտագործեն իսլամական հանրապետութեան մէջ ապագայ կարելիութիւնները հետազօտելու համար:

Մոնտոյլ ընկերութեան ատենապետը՝ Պիժան Մուսաւար - Ռահմանի թղթակիցներու յայտնած է, թէ ամերիկեան ընկերութիւնները Թեհրան կը գտնուին հաղորդակցութեան գիծեր հաստատելու եւ պահպանելու համար, որպէսզի երբ պատժամիջոցները վերանան, ընկերութիւնները անմիջապէս փութան համաձայնութիւններ ապահովելու:

Մոպիլ, որ Իրանի դէմ ամերիկեան պատժամիջոցներուն ամէնէն աւելի ընդդիմացող ընկերութիւններէն մէկն է, մասնակցած է Թեհրանի խորհրդաժողովին: Անիկա ամերիկեան կառավարութենէն արտօնութիւն խնդրած է Թուրքմենիստանի մէջ քարիւղի իր արտադրութիւնը փոխանակելու իրանեան հարաւային նաւահանգիստներէն քարիւղով:


Իրանի քարիւղի նախարարը՝ Պիժան Զանկանէ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնեց, թէ իր երկիրը որեւէ առարկութիւն չունի ամերիկեան ընկերութիւններու հետ խօսելու դէմ:

Ան աւելցուց սակայն, որ Իրան ամերիկեան ընկերութիւններու հետ բանակցութիւններ չի վարեր:

Քարիւղի մարզի ամերիկացի պատասխանատուի մը նախատեսութեամբ 18 ամիսէն ամերիկեան ընկերութիւնները «պիտի կարենան նմանօրինակ ներկայ գտնուիլ Թեհրանի մէջ՝ առանց շուքին մէջ պահուըտելու»:

(ՌՈՅԹԵՐՋ)

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 4120
Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՂԱՋԱՐԵԱՆ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

1. *Երագանք, անրջանք - Արական անուն:*
2. *Անանուխ (հակ.) - Մագեղ - Իշխանաւոր:*
3. *Հոյովակերտ մասնիկ - Օրինակելի - Յուցական ածական:*
4. *Խոյր, պսակ:*
5. *Ջրուզի - Ափրիկեան երկիր:*
6. *Դերենիկ Դեմիրճեանի երկերէն:*
7. *Որթատունկի պարտէզ (հակ.) - Յամախ:*
8. *Ոստայնանկի թելաչար:*
9. *Տարիք - Ոգեւորութիւն, խանդավառութիւն - Կրկին:*
10. *Բարուրնակ - Այրուբենէն - Ոգելից րմպելի:*
11. *Կապ, չուան - Զոդիակոսի նշաններէն:*


ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. *Նաւու յառաջակողմ - Հնդկաստանի գետերէն:*
2. *Ս Գրային նահապետ - Բասանի թագաւորներէն - Արական օտար անուն:*
3. *Քէն - Հայաստանի լեռներէն - Իրերայաջորդ տառեր:*
4. *Շին ֆէյնի գինուրական թեւր:*
5. *Ակնթարթ, թարթախ - Ջեյուն:*
6. *Ամուսնալուծում:*
7. *Մեծ, գլխաւոր - Տեպագի:*
8. *Բաժին:*
9. *Ածականակերտ մասնիկ - 1982ի յաւագոյն ֆիլմը - Ժամանակի մխաւոր:*
10. *Ֆրանսայի գետերէն - Թո՛ղ - Կաթնահամ հատիկներով ցորենի հասկ:*
11. *Գեղամ Սարեանի երկերէն - Փեճեկ կամ կնճիթ:*

ԹԻՒ 4119

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ



SQUARE RESIDENCE DEKOUANEH
(50 ՄԵԹՐ ԼԱՅՆՔՈՎ ՊՈՂՈՏԱՅԻ ՎՐԱՅ)
ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆՆԵՐ, ՎԱՃԱՌԱՏՈՒՆԵՐ ԵՒ ՄԹԵՐԱՆՈՑՆԵՐ
•3 ՆՆՋԱՍԵՆԵԱԿՈՎ ՅԱՐԿԱԲԱԺԻՆԸ՝ 144 ՔԱՌ. ՄԵԹՐ
•2 ՆՆՋԱՍԵՆԵԱԿՈՎ ՅԱՐԿԱԲԱԺԻՆԸ՝ 127 ՔԱՌ. ՄԵԹՐ
57.300 ՏՈԼԱՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ԱՌԱՋԻՆ ՎՃԱՐՈՒՄԸ՝ ՅԱՐԿԱԲԱԺԻՆԻՆ ԱՐԺԷՔԻՆ 12 %Ը
ԱՌԱՋԻՆ 36 ԱՄԻՍՆԵՐԸ ԱՌԱՆՑ ՏՈԿՈՍԻ
ՎՃԱՐՄԱՆ ԼԱՅՆ ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Յաւելեալ մանրամասնութեանց համար դիմել՝ ՍԻՄԻԹԵԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ, «Սանթըր Սիմիթեան», օթոսթրատ Պաուշրիէ, պլոք B, 5րդ յարկ, հեռ. 01/254729, 03/273685 եւ 01/254730, առաւօտեան ժամը 8էն 4: